**Հաստատված է նոր խմբագրությամբ**
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

**Գլխավոր տնօրեն՝ Վահան Ստեփանյան**

Vahan Stepanyan

Digitally signed by Vahan Stepanyan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o="Central Depository of Armenia" OJSC, email=vahan.stepanyan@nasdaqomx.am, cn=Vahan Stepanyan
Date: 2019.06.17 14:26:34 +04'00'

**«27» մայիսի, 2019թ.**
**ք. Երևան**

**Նոր խմբագրությամբ գրանցված է**

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

**Նախագահ՝ Արթուր Ջավադյան**

____________________

**« __ » __________ 2019թ.**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՍ I. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ........ 5**

**ԲԱԺԻՆ 1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ........ 5**

Գլուխ 1. Կանոնների կարգավորման առարկան ........ 5

Գլուխ 2. Կանոններում կիրառվող հասկացությունները ........ 5

Գլուխ 3. Համակարգի տարրերը ........ 10

Գլուխ 4. Համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները ........ 10

Գլուխ 5. Համակարգի միջոցով ծառայությունների մատուցումը ........ 11

**ԲԱԺԻՆ 2. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ........ 14**

Գլուխ 6. Համակարգի անդամները ........ 14

Գլուխ 7. Համակարգի անդամ դառնալու համար ներկայացվող փաստաթղթերը ........ 15

Գլուխ 8. Հաշվի Օպերատորի, կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի և Համակարգի ուղղակի մասնակցի կարգավիճակի շնորհումը ........ 16

Գլուխ 9. Ծրագրային համակարգին միացումը ........ 17

Գլուխ 10. Համակարգի Անդամի իրավունքները և պարտականությունները ........ 17

Գլուխ 11. Հաշվի Օպերատորի պարտականությունները ........ 20

Գլուխ 12. Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի պարտականությունները ........ 21

Գլուխ 13. Կենտրոնական Դեպոզիտարիայի իրավունքները և պարտականությունները ........ 22

Գլուխ 14. Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի կարգավիճակների կասեցումը ........ 23

Գլուխ 15. Համակարգի  Անդամի կամ առանձին կարգավիճակների դադարեցումը ........ 24

**ՄԱՍ II. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 27**

**ԲԱԺԻՆ 3. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՈՒՄ ........ 27**

Գլուխ 16. Թողարկողի ռեեստրի վարման պայմանագրի կնքումը և վերակնքումը ........ 27

Գլուխ 17. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնություններ ........ 32

Գլուխ 18. Կորպորատիվ գործողությունների հետ կապված  գործառնություններ ........ 34

Գլուխ 19. Ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխումը ........ 38

Գլուխ 20. Համակարգից տեղեկությունների տրամադրումը ........ 40

Գլուխ 21. Համակարգում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը ........ 45

Գլուխ 22. Ռեեստրի վարման պայմանագրի լուծումը ........ 46

Գլուխ 23. Ռեեստրի կորուստ ........ 47

**ԲԱԺԻՆ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ ........ 48**

Գլուխ 24. Համակարգում բացվող հաշիվները և դրանց տեսակները ........ 48

Գլուխ 25. Արժեթղթերի հաշվի բացումը ........ 49

Գլուխ 26. Արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխություն ........ 55

Գլուխ 27. Արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի պահառության (ենթապահառության) պայմանագրի լուծում ........ 56

Գլուխ 28. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնություններ ........ 57

Գլուխ 29. Արժեթղթերի գրավի իրավունքի գրանցումը ........ 62

Գլուխ 30. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցման ծառայություն ....63
Գլուխ 31. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցումը ....64
Գլուխ 32. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում և դրա դադարեցում Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա ....64
Գլուխ 33. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում գրավադրված արժեթղթերի համար ....65
Գլուխ 34. Համակարգում գործառնական ժամերը ....65

**ԲԱԺԻՆ 5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....66**
Գլուխ 35. Համակարգի միջոցով պետական պարտատոմսերի պահառության իրականացման ընդհանուր սկզբունքները ....66
Գլուխ 37. Պետական պարտատոմսերով երկրորդային շուկայում գործառնությունների կատարումը ....69
Գլուխ 38. Պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացումը ....71
Գլուխ 39. Պետական պարտատոմսերի գրավադրման պայմանները ....73
Գլուխ 40. Պետական պարտատոմսերի գրավից հանումը (ազատումը) ....75
Գլուխ 41. Պետական պարտատոմսերի գրավի առարկայից հրաժարվելը ....77
Գլուխ 42. Պետական պարտատոմսերի գրավի առարկայի փոխարինումը ....78
Գլուխ 43. Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինումը ....80
Գլուխ 44. Պետական պարտատոմսերի գրավառուի փոխարինումը ....81
Գլուխ 45. Գրավադրված պետական պարտատոմսերի մարումը ....82
Գլուխ 46. Գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարումը ....83
Գլուխ 47. Պետական պարտատոմսերով գործառնությունների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, հաշվետվությունների տրամադրումը ....84
Գլուխ 48. Արժեթղթերի հաշվի փակման և պահառության պայմանագրի լուծման առանձնահատկությունները պետական պարտատոմսերի պահառության դեպքում ....84

**ԲԱԺԻՆ 6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ....85**
Գլուխ 49. Օտարերկրյա պահառուների միջոցով հաշվառվող արժեթղթերի հաշվառման առանձնահատկությունները ....85
Գլուխ 50. Օտարերկրյա պահառուների միջոցով հաշվառվող արժեթղթերով անդրսահմանային (արտաքին) գործառնությունների կատարման ընթացակարգը ....86

**ԲԱԺԻՆ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՔԼԻՐԻՆԳ ԵՎ/ԿԱՄ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ....90**
Գլուխ 51. Արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման եղանակը և սկզբունքները ....90
Գլուխ 52. Երաշխիք ....91
Գլուխ 53. Արժեթղթերի առևտրային արգելադրում և դրա դադարեցում, արժեթղթերի դեպոնացում ....91
Գլուխ 54. Դրամական միջոցների արգելադրումը և դեպոնացումը ....93
Գլուխ 55. Արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացում ....94
Գլուխ 56. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման փուլերը ....95
Գլուխ 57. Տեղեկությունների փոխանակումը Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի միջև ....95
Գլուխ 58. Քլիրինգ ....96
Գլուխ 59. Վերջնահաշվարկ ....96
**ՄԱՍ III. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ....................................................................98**

ԲԱԺԻՆ 6. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ՔԼԻՐԻՆԳ ....................................................98
Գլուխ 60. Վարկային ռեսուրսների առևտրի սահմանաչափերի հաշվարկման և կնքված գործարքների մարման օրվա քլիրինգի իրականացման կարգը և սկզբունքները ....................98
Գլուխ 61. Սահմանաչափերի հաշվարկման և տրամադրման կարգը ....................98
Գլուխ 62. Միջոցների համալրման պահանջը ....................100
Գլուխ 63. Երաշխիքային հիմնադրամում հաշվառվող միջոցների պահառությունը ....................101
Գլուխ 64. Քլիրինգ ....................103
Գլուխ 65. Երաշխիքային հիմնադրամի միջոցների օգտագործման կարգը ....................104
Գլուխ 66. Պատասխանատվությունը ....................105

ԲԱԺԻՆ 7. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՄԱՐՄԱՆ, ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....................106

ԲԱԺԻՆ 8. ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՕՐԵՆՔՈՎ ԵՎ ԻՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ...108

ԲԱԺԻՆ 9. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ (ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ) ԵՎ ԳՐԱՎԻ ՀԻՄՔՈՎ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....................109

ԲԱԺԻՆ 10. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ....................109

**ՄԱՍ IV. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ .................... 109**

ԲԱԺԻՆ 11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ....................109
Գլուխ 67. Կենտրոնական Դեպոզիտարիայի և/կամ Համակարգի անդամի գործողությունների վերաբերյալ բողոքների ներկայացման իրավունք ունեցող անձինք ....................110
Գլուխ 68. Արժեթղթերի հաշվարկային և հաշվառման միասնական համակարգի մասնակիցների գործողությունների վերաբերյալ բողոք ներկայացնելու կարգը ....................110
Գլուխ 69. Կենտրոնական Դեպոզիտարիայի գործողությունների վերաբերյալ բողոքների քննությունը ....................110
Գլուխ 70. Համակարգի Անդամի գործողությունների վերաբերյալ բողոքների քննությունը Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից ....................111

**ՄԱՍ V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ....................111**

ԲԱԺԻՆ 12. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ....................111

# ՄԱՍ I. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

## ԲԱԺԻՆ 1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

### Գլուխ 1. Կանոնների կարգավորման առարկան

1. Սույն կանոնները (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի կառուցվածքը, այդ համակարգի անդամի կարգավիճակի շնորհման, կասեցման և դադարեցման կարգը, համակարգի անդամների իրավունքները և պարտականությունները, Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի կենտրոնացված հաշվառման՝ ռեեստրավարման և պահառության իրականացման կարգը, արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տեղեկատվության հավաքագրման և ճշտման, գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների որոշման և հաշվանցման, վերջնահաշվարկի կատարման ու վերջնահաշվարկի հարցերում կողմերի միջև որպես գործակալ հանդես գալու կարգերը, ինչպես նաև արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հաճախորդների շահերի պաշտպանության հարցերը:

2. Կանոններով սահմանված՝ արժեթղթերին վերաբերող դրույթները կիրառելի են անվանական արժեթղթերի (բացառությամբ՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի), ինչպես նաև այն արժեթղթերի նկատմամբ, որոնց պահառությունը (ենթապահառությունը)՝ օրենքի և նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև կնքված պայմանագրերի համաձայն, կարող է իրականացնել կամ իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիան:

### Գլուխ 2. Կանոններում կիրառվող հասկացությունները

3. Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

1) **«Օրենք».** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.
2) **«Արժեթղթերի հաշվառում».** թողարկողների, դրանց կողմից թողարկված արժեթղթերի, արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և նրանց պատկանող արժեթղթերի, ինչպես նաև արժեթղթերով իրականացված գործառնությունների վերաբերյալ տվյալների ստացում, գրանցում և պահպանում.
3) **«Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ»** կամ **«Համակարգ».** արժեթղթերի հաշվառումն ապահովող և արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող տեխնիկական և իրավական միջոցների ամբողջություն.
4) **«Ծրագրային համակարգ».** Կենտրոնական Դեպոզիտարիայի գործառույթների իրականացումն ապահովող համակարգչային ծրագրերի ամբողջություն.
5) **«Արժեթղթերի հաշիվ».** արժեթղթերի և դրանց նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների անձնավորված հաշվառման տեղեկատվական հենք.
6) **«Հաշվետեր».** անձ, որն ունի (որի անունով առկա է) Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ.
7) **«Անվանատեր».** պահառության գործունեություն իրականացնող Համակարգի ուղղակի մասնակից, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը.

8) **«Թողարկող»**. անձ, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում և որն իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարումը կամ պահառությունը հանձնել է կամ հանձնելու նպատակով դիմել է Կենտրոնական դեպոզիտարիային.
9) **«Կարգավորվող շուկայի օպերատոր»**. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» բաց բաժնետիրական ընկերություն.
10) **«Կարգավորվող շուկա»**. Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող արժեթղթերի շուկա.
11) **«Համակարգի Անդամ»**. անձը, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքել է պայմանագիր՝ որպես Համակարգի անդամ Կանոնների համաձայն Համակարգում գործառնություններ կատարելու համար:
12) **«Հաշվի Օպերատոր»**. Համակարգի Անդամ հանդիսացող անձ, որը Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով և Կանոններով սահմանված իրավասությունների շրջանակում, Թողարկողից, Հաշվետիրոջից կամ իրավասու այլ անձանցից ստացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը) փոխանցում է Կենտրոնական Դեպոզիտարիային Համակարգում այն գործառնությունների կատարման համար, ինչպես նաև միջնորդավորում է Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից մատուցվող այն ծառայությունները, որոնք անմիջականորեն չեն հանգեցնում Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքմանը.
13) **«Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ» կամ «ԿՇՀՀԱ»**. Համակարգի Անդամ հանդիսացող անձ, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով և Կանոններով սահմանված իրավասությունների շրջանակում, Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցում իր կամ իր հաճախորդից ստացված այն հանձնարարականները և տեղեկությունները (փաստաթղթերը), որոնք անհրաժեշտ են Համակարգի միջոցով կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքման համար.
14) **«Համակարգի ուղղակի մասնակից»**. Համակարգի Անդամ հանդիսացող անձ, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով և Կանոններով սահմանված իրավասությունների շրջանակում, միայն իր անվամբ բացված հաշիվների (ֆոնդի կառավարչի դեպքում՝ նաև վերջինիս կողմից կառավարվող ֆոնդի հաշիվներով) սպասարկման համար ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում գործառնությունների կատարման հանձնարարականներ.
15) **«Արժեթղթերի սեփականատերերի ռեեստր» կամ «Ռեեստր»**. Թողարկողի, վերջինիս կողմից թողարկված անվանական արժեթղթերի, այդ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) և դրանցով հավաստված իրավունքների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ, որն ապահովում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի), նրանց լիազորված ներկայացուցիչների, գրանցված սեփականատերերին (անվանատերերին) պատկանող (անվանատերերի անվամբ գրանցված) արժեթղթերի քանակի և դասի, ինչպես նաև դրանց վերաբերյալ սույն վերնագրի կանոններով սահմանված այլ տեղեկությունների նույնացումը.
16) **«Կորպորատիվ գործողություն»**. Թողարկողի որոշմամբ տվյալ թողարկողի որևէ դասի (տեսակի) արժեթղթերի անվանական արժեքի փոփոխություն, փոխարկում, բաժանում, համախմբում, հետգնում, ձեռքբերում, մարում, չեղյալ համարում կամ Թողարկողի վերակազմակերպում, արժեթղթերի հետ կապված եկամուտների վճարում.
17) **«Արժեթղթերի բաժանում»**. Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումը նույն դասի ավելի մեծ քանակի արժեթղթերի.
18) **«Արժեթղթերի համախմբում»**. Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումը նույն դասի ավելի փոքր քանակի արժեթղթերի.

19) **«Արժեթղթերի ձեռքբերում»**. Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի որոշ մասի՝ Թողարկողի կողմից գնման գործընթաց, որի իրականացման մասին որոշման ընդունումը Թողարկողի համար օրենքով սահմանված պարտավորություն չէ.
20) **«Արժեթղթերի հետգնում».** Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի (բացառությամբ բաց ներդրումային ֆոնդերի արժեթղթերի) որոշ մասի՝ Թողարկողի կողմից գնման գործընթաց, որի իրականացումը տվյալ արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) որոշմամբ կամ օրենքով պարտադիր է.
21) **«Արժեթղթերի փոխարկում».** Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից հանումը և չեղյալ համարումը (Համակարգից հեռացումը) նույն թողարկողի կամ այլ թողարկողի արժեթղթերով փոխանակելու միջոցով.
22) **«Արժեթղթերի չեղարկում» կամ «Արժեթղթերի չեղյալ համարում».** Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից դուրս գալու հիմքով չեղյալ համարումը՝ տվյալ դասի արժեթղթերը Համակարգում առկա արժեթղթերի բոլոր հաշիվներից հեռացնելու միջոցով.
23) **«Գործառնություն»**. Համակարգում գրանցված արժեթղթի Հաշվետիրոջ, Թողարկողի, վերջիններիս լիազորված ներկայացուցիչների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց հանձնարարականի հիման վրա իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում արժեթղթերի հաշվի բացում, արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի մնացորդի փոփոխություն, Համակարգում այլ տեղեկությունների գրանցում և/կամ Համակարգից տեղեկությունների տրամադրում.
24) **«Հանձնարարական»**. Համակարգում գործառնություններ (բացառությամբ տեղեկությունների տրամադրման) կատարելու համար հիմք հանդիսացող թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ.
25) **«Դեպո հանձնարարական»**. Համակարգում պետական արժեթղթերով գործառնություններ կատարելու հանձնարարական.
26) **«Հաղորդագրություն տեսակ կամ ՀՏ».** ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված և համապատասխան համարներով տարբերանշված՝ ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով փոխանցվող հանձնարարականի կամ տեղեկությունների էլեկտրոնային ձևաչափ.
27) **«Հարցում».** Համակարգից տեղեկությունների տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք չեն կարող որակվել որպես հանձնարարական.
28) **«Ազատ առաքում կամ ST փոխանցում»**. Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում չի պահանջվում ստացող կողմից հաստատում կամ համաձայնություն:
29) **«Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում»**. Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և փոխանցող, և ստացող կողմերի համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականներ:
30) **«Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում»**. Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում փոխանցող և ստացող կողմերի, համապատասխանաբար, փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականների հիման վրա, ինչպես նաև DVP փոխանցման համար անհրաժեշտ՝ վերջնահաշվարկի ապահովման միջոց հանդիսացող դրամական միջոցների կամ արժեթղթերի առկայության դեպքում իրականացվում է միջոցների միաժամանակյա փոխանցում համապատասխան հաշիվներում.
31) **«Արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում»**. Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի արդյունքում արժեթղթերի հաշվին առկա բոլոր արժեթղթերի փոխանցումն իրականացվում է փոխանցման մեկ

գործառնության գրանցմամբ.

32) **«Արգելադրում».** գործառնություն, որի արդյունքում Համակարգում արժեթղթերի փոխանցումներն արգելվում կամ սահմանափակվում են Կանոններով և/կամ օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամանակահատվածում.

33) **«Առևտրային արգելադրում».** արգելադրման տեսակ, որն անհրաժեշտ է Կարգավորվող շուկայում առևտուր իրականացնելու համար.

34) **«Արգելադրման դադարեցում».** գործառնություն, որի արդյունքում արգելադրված արժեթղթերը հանվում են արգելադրումից:

35) **«Առևտրային օր».** աշխատանքային օր, որի ընթացքում Կարգավորվող շուկայում իրականացվում է արժեթղթերի առևտուր.

36) **«Առևտրային նստաշրջան»**. առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում իրականացվում է արժեթղթերի առևտուր Կարգավորվող շուկայում.

37) **«Առևտրային հաշիվ».** ՀՀ կենտրոնական բանկում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի անունով որևէ արժույթով բացված հատուկ բանկային հաշիվ, որը նախատեսված է Համակարգի անդամների Դրամական հաշիվներում հաշվառվող դրամական միջոցները պահելու համար.

38) **«Գործարքի կնքում».** առևտրային նստաշրջանի ընթացքում Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամների միջև Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով արժեթղթերի առուվաճառքի էական պայմանների վերաբերյալ համաձայնության կայացում.

39) **«Նախնական դեպոնացմամբ առևտուր».** Կարգավորվող շուկայում իրականացվող առևտուր, որն իրականացվում է գործարքի համար անհրաժեշտ դրամական միջոցները առևտրային հաշվին նախապես փոխանցման և արժեթղթերի առևտրային արգելադրման միջոցով.

40) **«Քլիրինգ».** կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում (գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ճշտում և հաշվարկային փաստաթղթերի պատրաստում).

41) **«Կենտրոնացված քլիրինգ».** քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան դառնում է արժեթղթերով կնքված գործարքների հակադարձ կողմը՝ կրելով նրանց բոլոր պարտականությունները և ձեռք բերելով նրանց բոլոր իրավունքները՝ կապված Կարգավորվող շուկայում կնքված գործարքների հետ.

42) **«Զուտացում».** միևնույն առևտրային նստաշրջանում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի և նրա հաճախորդների զուտ պարտավորությունների և/կամ պահանջների որոշման գործընթաց, որի արդյունքում կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի յուրաքանչյուր անդամի և/կամ նրա հաճախորդի մոտ Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ առաջանում է միայն՝

   ա) յուրաքանչյուր արժույթով մեկ զուտ դրամական պահանջ կամ զուտ դրամական պարտավորություն.

   բ) յուրաքանչյուր դասի արժեթղթով մեկ զուտ արժեթղթային պահանջ կամ զուտ արժեթղթային պարտավորություն.

43) **«Վերջնահաշվարկ»**. գործողություն, որի արդյունքում մարվում են դրամական միջոցների և արժեթղթերի փոխանցման հետ կապված Համակարգի Անդամների և/կամ նրանց հաճախորդների և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև ծագած դրամական և արժեթղթային պարտավորությունները՝ Դրամական և արժեթղթերի հաշիվներում փոխանցումների կատարման միջոցով:

44) **«Դրամական միջոցների հաշվառման հաշիվ» կամ «Դրամական հաշիվ»**՝ դրամական միջոցների հաշվառման նպատակով Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով Համակարգի անդամների և/կամ ներդրումային ֆոնդերի անունով

Համակարգում բացված հաշիվ.

45) **«Էլեկտրոնային եղանակ».** ՀՀ կենտրոնական բանկի ՍիԲիէյՆեթ միջբանկային համակարգչային ցանցի հիման վրա գործող Լոտուս համակարգի էլեկտրոնային փոստի (այսուհետ՝ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանց) կամ իրավասու (փոխադարձ համաձայնեցված) այլ էլեկտրոնային հասցեի կամ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգի (այսուհետ՝ Բանկմեյլ) միջոցով տեղեկությունների կամ փաստաթղթերի ստացման և/կամ առաքման կապի եղանակ.

46) **«Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակ».** Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող վարկային ռեսուրսների շուկա.

47) **«Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակից».** Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում առևտուր իրականացնելու թույլտվություն ունեցող բանկ.

48) **«Ռեսուրսների իրավասու հաշիվներ».** Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակցին պատկանող այն դեպո և դրամային հաշիվներն են, որոնցից թույլատրվում է իրականացնել վարկային սահմանաչափերի ստացման նպատակով հատուկ սահմանված հաշիվներին դրամային միջոցների և պետական պարտատոմսերի փոխանցումը, դրանց համալրումը և փոխարինումը.

49) **«Դրամային երաշխիքային հաշիվ».** ՀՀ կենտրոնական բանկում Կենտրոնական դեպոզիտարիայի անունով բացված հատուկ դրամային հաշիվ, որը նախատեսված է ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակցի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի եւ Կարգավորվող շուկայի օպերատորի կանոնների համաձայն ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում կատարված գործառնությունների հետ կապված դրամային երաշխիքային միջոցների հաշվառման համար.

50) **«Ամփոփ ներդրողների հաշիվներ».** ՀՀ կենտրոնական բանկում Կենտրոնական դեպոզիտարիայի անունով՝ որպես ենթապահառու բացված հատուկ դեպո հաշիվներ, որոնցում հաշվառվում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդներին պատկանող պետական պարտատոմսերը, ինչպես նաև ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակցի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի կանոնների համաձայն ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում գործառնությունների կատարման նպատակով որպես երաշխիքային միջոց փոխանցվող պետական արժեթղթերը.

51) **«Սահմանաչափ».** Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակցին Կանոններին համապատասխան տրվող՝ ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման սահմանաչափ.

52) **«Երաշխիքային հիմնադրամ».** Դրամային երաշխիքային հաշվում հաշվառվող դրամային միջոցների և ամփոփ ներդրողների հաշվում հաշվառվող արժեթղթերի ամբողջություն, որոնք հանդիսանում են ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում կնքվող գործարքների ապահովման միջոց.

53) **«Միջոցներ».** Երաշխիքային հիմնադրամում հաշվառվող ՀՀ դրամը և պետական պարտատոմսերը.

54) **«Գործարքի մարում».** Ժամկետային վարկային ռեսուրսների վերջնահաշվարկի ընթացքում կատարվող գործողությունների ամբողջություն, որի արդյունքում Կանոններով, Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով ապահովվում է ժամկետային վարկերի գծով զուտ վարկառուների կողմից ստացված վարկերի և դրանց վրա հաշվեգրված տոկոսագումարների փոխանցումը զուտ վարկատուների իրավասու հաշիվներին.

55) **«Բազմակողմանի քլիրինգ».** քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում վարկային գործարքների մարման յուրաքանչյուր օրվա համար Կենտրոնական Դեպոզիտարիան

որոշում է ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակիցների զուտ պարտավորությունները և/կամ պահանջները.

56) **«Դիսկոնտավորման գործակից».** պետական պարտատոմսերի՝ եկամտաբերության կորով հաշվարկված գնի նկատմամբ կիրառվող զեղչման գործակից.

57) **«Պետական պարտատոմս».** ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված պետական (գանձապետական) պարտատոմսեր.

58) **«Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթուղթ».** Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթուղթ.

59) **Օտարերկրյա պահառու».** Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող անձ.

60) **«Փոխանցման հանձնարարականի անվերադարձելիության պահ»,** այն պահն է, որից հետո Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացված փոխանցման հանձնարարականի փոփոխումը կամ հետկանչումը հնարավոր չէ:

4. Կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով, դրա հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակություն:

## Գլուխ 3. Համակարգի տարրերը

5. Համակարգի տարրեր են.
   1) Արժեթղթերի հաշվառման համակարգը, որը ներառում է արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և արժեթղթերի պահառության համակարգերը,
   2) Արժեթղթերի հաշվարկային համակարգը՝ ըստ Օրենքի 20-րդ գլխի նշանակության:

## Գլուխ 4. Համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները

6. Համակարգի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիան ծառայություններ է մատուցում.
   1) արժեթղթերի թողարկողներին, որոնց արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնված է Կենտրոնական դեպոզիտարիային.
   2) Հաշվետերերին, որոնց հաշիվներում հաշվեգրված կամ հաշվեգրվող արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնված է կամ հանձնված է եղել Կենտրոնական դեպոզիտարիային կամ Կենտրոնական դեպոզիտարիան հանդիսանում է կամ հանդիսացել է այդ արժեթղթերի պահառուն (ենթապահառուն).
   3) Կանոններով նախատեսված այլ անձանց՝ Կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

7. Համակարգի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները (այսուհետ՝ ծառայություններ), դասակարգվում են հիմնական և լրացուցիչ ծառայությունների:

8. Համակարգի միջոցով մատուցվող հիմնական ծառայություններն են.
   1) անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը.
   2) արժեթղթերի պահառությունը.
   3) արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգը և/կամ վերջնահաշվարկը:

9. Համակարգի միջոցով մատուցվող լրացուցիչ ծառայություններն են.
   1) ժամկետային վարկային ռեսուրսների առևտրի սահմանաչափերի հաշվարկումը և տրամադրումը, ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգը.
   2) արժեթղթերով կորպորատիվ գործողությունների հետ կապված վճարահաշվարկային գործառնությունները.

3) Թողարկողի պատվերով իր կողմից տեղաբաշխված արժեթղթերի՝ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված, ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացումը.
4) Թողարկողին իր կողմից տեղաբաշխված արժեթղթերով իրականացված գործառնությունների մասին ծանուցումը, որը ներառում է այդ արժեթղթերի փոխանցման, ինչպես նաև գրավի կամ այլ հիմքով այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը.
5) Դրամական միջոցների հաշվառում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի «Դրամական միջոցների հաշվառման կանոններով» սահմանված կարգով:

## Գլուխ 5. Համակարգի միջոցով ծառայությունների մատուցումը

10. Կանոններով սահմանված դեպքերում և կարգով, Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգի միջոցով ծառայությունները մատուցում է Համակարգի Անդամի միջնորդությամբ՝ անհրաժեշտության դեպքում Համակարգի Անդամին տրամադրելով համապատասխան ծրագրային ապահովման միջոցը:
11. Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգի միջոցով ծառայություններն անմիջականորեն մատուցում է միայն այն դեպքերում, երբ որոշակի գործառույթների իրականացումը Կանոններով անմիջականորեն վերապահված է Կենտրոնական դեպոզիտարիային կամ Կանոններով անմիջականորեն նախատեսված է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայությունների ուղղակի (առանց Հաշվի Օպերատորի միջնորդության) մատուցման հնարավորությունը:
12. Համակարգի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիան կարող է ուղղակի (առանց Հաշվի Օպերատորի միջնորդության) ծառայություններ մատուցել.
1) Համակարգի Անդամներին.
2) օտարերկրյա կենտրոնական դեպոզիտարիաներին.
3) ներդրումային ֆոնդի կառավարիչներին.
4) Կարգավորվող շուկայի օպերատորին.
5) Այլ անձանց՝ Կանոններով սահմանված դեպքերում և կարգով:
13. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կանոնների 12. կետով սահմանված անձանց ծառայությունների ուղղակի մատուցումը կարգավորվում է Կանոններով և Կենտրոնական դեպոզիտարիայի ու նշված անձանց միջև ուղղակի կնքված պայմանագրերով, եթե պայմանագրի կնքումը նախատեսված է Կանոններով կամ այն անհրաժեշտ է առանձնահատուկ հարաբերությունների կարգավորման համար:
14. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայությունների ուղղակի (առանց Հաշվի Օպերատորի միջնորդության) մատուցման՝ Կանոններով սահմանված հնարավորությունը չի սահմանափակում Հաշվի Օպերատորի միջնորդությամբ ծառայությունների մատուցման հնարավորությունը կամ պահանջը, բացառությամբ Կանոններով սահմանված դեպքերի:
15. Կանոններով սահմանված՝ արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և/կամ վերջնահաշվարկի ծառայությունները մատուցում է անմիջականորեն Կենտրոնական դեպոզիտարիան:
16. Դատարանին, դատական ակտերի հարկադիր կատարողին, նոտարին, քրեական հետապնդում իրականացնող կամ պետական այլ մարմիններին Համակարգից՝ օրենքով սահմանված տեղեկատվությունը տրամադրում է Կենտրոնական դեպոզիտարիան, բացառությամբ այն դեպքերի, երբ Կանոններով նախատեսված է այդ տեղեկատվության տրամադրումը Համակարգի Անդամի կողմից:
17. Դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի՝ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակման վերաբերյալ կամ օրենքով սահմանափակում ենթադրող կամ սահմանափակումը դադարեցման վերաբերյալ որոշման հիման Համակարգում արժեթղթերի նկատմամբ իրավունքների

սահմանափակման (արգելադրման) կամ սահմանափակման (արգելադրման) դադարեցման գործառնություններն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիան:
Եթե սույն կետում նշված որոշումը ներկայացվել է Հաշվի Օպերատորին, ապա վերջինս պարտավոր է այն անմիջապես տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիային:
18. Դատարանի վճռի հիման վրա արժեթղթերի փոխանցումը Համակարգում գրանցվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հետևյալ դեպքերում.
1) երբ տվյալ վճռով պարտապանը հանդես է գալիս Կենտրոնական դեպոզիտարիան.
2) երբ արժեթղթերը փոխանցող կողմի արժեթղթերի հաշիվը չի սպասարկվում Հաշվի Օպերատորի կողմից:
19. Համակարգի միջոցով ծառայությունների մատուցումն իրականացվում է գործառնության համար հիմք հանդիսացող փաստաթղթի կամ հանձնարարականի ստացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե համապատասխան գործառնության կատարման համար հանձնարարականով կամ Կանոններով այլ բան սահմանված չէ:
Գործառնության իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը (այդ թվում՝ հանձնարարականները) Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Համակարգի անդամի կողմից ստացված են համարվում համապատասխան գործառնության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (հանձնարարականների) ամբողջական փաթեթի ստացման պահից, եթե այլ բան չի բխում տվյալ գործառնության էությունից: Կենտրոնական Դեպոզիտարիայում գործառնություններ կատարելիս օտարերկրյա դատական ակտերը կարող են հիմք ընդունվել, եթե դրանք ճանաչվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
Միևնույն Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի, եթե ծառայություն մատուցողն ուղղակի Կենտրոնական դեպոզիտարիան է) միջոցով մատուցվող ծառայություններից բազմակի օգտվելու դեպքում Հաճախորդը, Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի) համաձայնությամբ, կարող է չներկայացնել արդեն ներկայացված (կրկնվող) փաստաթղթերը (տեղեկությունները), եթե ներկայացնում է հավաստում առ այն, որ նշված փաստաթղթերը (տեղեկությունները) փոփոխության չեն ենթարկվել:
20. Համակարգի միջոցով ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվում են հայերեն: Կողմերի համաձայնությամբ ծառայությունների մատուցման պայմանագրերը կարող են կնքվել հայերենի և անգլերենի կամ ռուսերենի զուգորդությամբ, որտեղ գերակայող է համարվում հայերեն տարբերակը, եթե այլ բան սահմանված չէ ծառայությունների մատուցման պայմանագրով:
21. Համակարգի միջոցով ծառայություններ ստանալու, այդ թվում՝ Համակարգի Անդամ դառնալու համար Կանոններով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են գրավոր և հայերեն լեզվով (բացառությամբ SWIFT համակարգի միջոցով ներկայացված հանձնարարականների և տեղեկությունների), իսկ օտարալեզու բնօրինակները կամ դրանց պատճենները՝ նոտարական կարգով հայերեն թարգմանված և ապոստիլով (Հաագայի կոնվենցիային միացած երկրներից ուղարկված փաստաթղթերի դեպքում, իսկ եթե պետությունը կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը (լեգալիզացիա) կատարվում է հյուպատոսական ճանապարհով), եթե Կանոններով այլ բան սահմանված չէ: Կանոններով սահմանված տեղեկությունները Համակարգում մուտքագրվում են հայերենով և/կամ անգլերենով կամ ռուսերենով: Ընդ որում՝ եթե առկա են Հաշվետերերին նույնականացնող անգլերեն տեղեկություններ, ապա դրանք ենթակա են անգլերենով պարտադիր մուտքագրման Համակարգ:
22. Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի, եթե ծառայություն մատուցողն ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիան է) համաձայնության դեպքում, գրավոր ներկայացվելիք փաստաթղթերը կարող են ներկացվել այլ եղանակով, եթե այդ եղանակով փաստաթղթի ներկայացումը հավաստում է փաստաթղթի իսկությունը և ապահովվում է դրա

պահպանումը:
23. Անգլերենով կամ ռուսերենով կազմված փաստաթղթերը կարող են ներկայացվել առանց նոտարական կարգով հայերեն թարգմանության, եթե դրանց՝ անգլերեն կամ ռուսերեն ներկայացումը համաձայնեցված է Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի, եթե ծառայություն մատուցողն ուղղակի Կենտրոնական դեպոզիտարիան է) հետ:
24. Փաստաթղթերի ներկայացվող պատճենները պետք է նոտարական կարգով վավերացված լինեն, բացառությամբ այն դեպքերի, երբ.
1) պատճենահանումը կատարվել է բնօրինակից՝ Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի, եթե ծառայություն մատուցողն ուղղակի Կենտրոնական դեպոզիտարիան է) իրավասու ներկայացուցչի ներկայությամբ և պատճենը վավերացված է նշված ներկայացուցչի և այդ փաստաթուղթը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից,
2) առանց նոտարական կարգով վավերացման պատճենը ներկայացվում է Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի, եթե ծառայություն մատուցողն անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիան է) հետ համաձայնեցված այնպիսի եղանակով, որը հավաստում է պատճենի իսկությունը:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարների, ինչպես նաև նոտարական գործողություններ կատարող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից վավերացված փաստաթղթերը կարող են ներկայացվել առանց ապոստիլի:
24.1. Անգլերեն կամ ռուսերեն լեզուներով կազմված փաստաթղթերը կարող են ներկայացվել առանց ապոստիլի, եթե՝
1) այդ հնարավորությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, միջպետական պայմանագրերով կամ կոնվենցիաներով.
2) փաստաթղթերը ծառայությունների մատուցման շրջանակներում ներկայացված հանձնարարականների (կամ հաճախորդի կողմից անձամբ և իր ստորագրությամբ տրված գրությունների) և հարցումների բնօրինակներ են, և եթե դրանց՝ առանց ապոստիլի ներկայացումը համաձայնեցված է Համակարգի Անդամի (Կենտրոնական դեպոզիտարիայի, եթե ծառայություն մատուցողն անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիան է) հետ:
3) ներկայացվում են ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 11.03.2008թ. թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 2-ում սահմանված այն միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք միացած են SWIFT համակարգին: Ընդ որում Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի պահանջել, որ սույն ենթակետում նշված կազմակերպությունների կողմից փաստաթղթերը ներկայացվեն կամ ներկայացումը հաստատվեն SWIFT համակարգի միջոցով:

25. Առանձնահատուկ դեպքերում, երբ Համակարգի միջոցով ծառայություններ ստացող անձի (մասնավորապես՝ պետությունների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների) իրավական կարգավիճակից կամ նրա գործունեությունը կարգավորող իրավական նորմերից բխում է, որ Համակարգի միջոցով ծառայություններ ստանալու համար Կանոններով սահմանված որոշակի փաստաթղթի (տեղեկության) ներկայացումը փաստացի հնարավոր չէ ապահովել, ապա այդ փաստաթուղթը (տեղեկությունը) կարող է չներկայացվել՝ միայն Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնությամբ:
26. Համակարգից տեղեկությունները տրամադրվում են այն լեզվով, որով դրանք մուտքագրված են որպես հիմնական տեղեկություն: Հնարավորության դեպքում Համակարգից տեղեկությունները տրամադրվում են նաև թարգմանված այլ լեզուներով, որտեղ գերակայող իրավական ուժ ունի Համակարգից արտահանված (չթարգմանված) տարբերակը: Համակարգում առկա փաստաթղթերն իրավասու անձանց տրամադրվում են պատճենի

տեսքով:
27. Ծառայությունների մատուցման համար ծառայությունները ստացող անձի (հաճախորդի) կողմից վճարվող գումարների չափերը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի Սակագների մասին կանոններով և/կամ Համակարգի Անդամի համապատասխան իրավական ակտով:
28. Եթե Համակարգի Անդամից անկախ պատճառներով Համակարգի Անդամի միջնորդությամբ որևէ ծառայության մատուցումը դարձել է բարդ կամ անհնար և այդ իրավիճակում տվյալ ծառայության պատշաճ մատուցումը կարող է ապահովվել միայն Կենտրոնական դեպոզիտարիայի անմիջական միջամտության արդյունքում, ապա Կենտրոնական դեպոզիտարիան՝ Համակարգի Անդամի բավարար հիմնավորված տեղեկացման հիման վրա, կարող է Համակարգում անմիջականորեն կատարել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ և բավարար են ծառայության մատուցմանը խոչընդոտող հանգամանքների վերացման համար:
29. Եթե Համակարգից տեղեկություններ ստանալու պահանջ (հարցում) է ներկայացվել Հաշվի Օպերատորի հաճախորդ չհանդիսացող և Կանոններով սահմանված կարգով հարցում ներկայացնելու իրավունք ունեցող անձի կողմից  կամ ակնհայտ է, որ Հաշվի Օպերատորը հնարավորություն չունի լիարժեք բավարարել ներկայացված պահանջը, ապա Կենտրոնական դեպոզիտարիան կարող է Համակարգից տեղեկություններ տրամադրել անմիջականորեն, այդ թվում՝ Հաշվի Օպերատորից պահանջելով իրեն վերահասցեագրել ներկայացված  պահանջը (հարցումը), եթե այն ներկայացվել է Հաշվի Օպերատորին:
29.1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 180-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի որոշմամբ կարող են սահմանվել Հաշվետերերի և/կամ Թողարկողների կողմից հանձնարարականների՝ Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցման, դրանց կատարման կարգից, ժամկետներից, հաշվի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի՝ սույն կանոններով նախատեսված այլ պարտավորություններից բացառություններ:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

### Գլուխ 6. Համակարգի անդամները

30. Համակարգի Անդամ կարող են լինել՝
1) արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները.
2) ՀՀ կենտրոնական բանկը.
3) օտարերկրյա հաշվարկային համակարգի օպերատորը, օտարերկրյա արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով.
4) օտարերկրյա պահառուն.
5) ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ անձինք:

31. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Համակարգի Անդամը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները միջնորդավորում է Հաշվի Օպերատորի և/կամ Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով:
32. Համակարգի անդամ դառնալու իրավասություն ունեցող անձը իր անվամբ բացված հաշիվների (ֆոնդի կառավարչի դեպքում՝ նաև վերջինիս կողմից կառավարվող ֆոնդի հաշիվների)  հետ կապված պահառության ծառայություններն Կենտրոնական դեպոզիտարիայից ուղղակիորեն ստանալու նպատակով պետք է ձեռք բերի Համակարգի ուղղակի մասնակցի կարգավիճակ, որը հնարավորություն է տալիս Համակարգի անդամին արժեթղթերի

պահառության հետ կապված գործառնություններ կատարման հանձնարարականներն ուղղակիորեն ներկայացնել Կենտրոնական դեպոզիտարիային, ինչպես նաև ուղղակիորեն վերջինից ստանալ նաև կատարված և/կամ մերժված գործառնությունների մասին ամբողջական տեղեկատվություն:

33. Սույն կանոններով Հաշվի օպերատորի կողմից Համակարգում գործառնությունների կատարման կարգը տարածվում է նաև Համակարգի ուղղակի մասնակցի վրա՝ վերջինիս ուղղակի հասանելիության ներքո գտնվող հաշիվների մասով:

34. Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակ ստանալու համար Կենտրոնական դեպոզիտարիա կարող է դիմել այն անձը, որն ունի Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով շնորհված Բորսայի անդամի կարգավիճակ:

35. ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ Ֆինանսերի նախարարությունը՝ Գանձապետական պահառուի գործառույթների իրականացման նպատակով, օտարերկրյա կենտրոնական դեպոզիտարիաները, միջազգային (գլոբալ) պահառուները և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերում սահմանված անձիք ու մարմինները կարող են հանդես գալ սահմանափակ իրավասություններով Հաշվի Օպերատորի կարգավիճակով, որի լիազորությունների շրջանակը սահմանվում է նշված անձանց և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով: ՀՀ Ֆինանսերի նախարարության կողմից Գանձապետական պահառուի գործառնությունների կատարման առանձնահատկությունները սահմանվում են Կանոնների Հավելված 6-ով:

36. ԿԾՀՀԱ-ն, որը միաժամանակ որպես Համակարգի ուղղակի մասնակից կամ Հաշվի օպերատոր չունի սպասարկման հասանելիություն իր կամ իր հաճախորդի՝ Կարգավորվող շուկայում գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի հաշվին, իր կամ իր հաճախորդի արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին/Համակարգի ուղղակի մասնակցին ներկայացված գրավոր պահանջի հիման վրա վերջինիս կողմից ստանում է իրավունք տվյալ հաշվով Համակարգում իրականացնել իր կամ իր հաճախորդի արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի առևտրային արգելադրում կամ առևտրային արգելադրման դադարեցում:

## Գլուխ 7. Համակարգի անդամ դառնալու համար ներկայացվող փաստաթղթերը

37. Համակարգի Անդամ դառնալու և միաժամանակ Հաշվի Օպերատորի և/կամ կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի և/կամ Համակարգի ուղղակի մասնակցի կարգավիճակ ստանալու համար Կանոնների 30. կետով սահմանված անձը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքել հաշվարկային և հաշվառման միասնական համակարգի անդամի կարգավիճակի շնորհման պայմանագիր (այսուհետ սույն բաժնում՝ Պայմանագիր), ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Համակարգի անդամ դառնալու դիմում, որում նշվում է, թե դիմումատուն Համակարգի Անդամի որ կարգավիճակի համար է դիմում Կենտրոնական դեպոզիտարիային.
2) Կանոնների Հավելված 2-ով սահմանված տեղեկությունները.
3) դիմումատուի գործադիր մարմնի ընտրման կամ նշանակման մասին որոշման պատճենը կամ որոշումից համապատասխան քաղվածքը (կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ դրա անդամների և ղեկավարի ընտրումը կամ նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը կամ փաստաթղթից համապատասխան քաղվածքը), օտարերկրյա ընկերության (մասնաճյուղի) դեպքում՝ օտարերկրյա ընկերության կառավարման համապատասխան մարմնի կողմից ընկերության (մասնաճյուղի) ղեկավարի նշանակման մասին որոշման պատճենը և դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը.
4) Դիմումատուի՝ Համակարգի Անդամ դառնալու համար անհրաժեշտ լիցենզիաների և/կամ թույլտվությունների պատճենները՝ առկայության դեպքում.
5) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի դեպքում՝ Կենտրոնական բանկի

կողմից տրված օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը, օտարերկրյա պահառուի դեպքում՝ վերջինիս պետական գրանցումը հավաստող փաստաթղթի նոտարական թարգմանված պատճենը.

6) դիմումատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) Պայմանագիրը՝ երկու օրինակից, որի տարբերակը հրապարակվում է Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքում.
7) դիմումատուի (բացառությամբ՝ Կենտրոնական բանկի և այլ պետական մարմինների) ներքին իրավական ակտերը, որոնք սահմանում են Կանոններով սահմանված ծառայությունների միջնորդավորված մատուցման ներքին կարգը և սակագները (չի տարածվում այն Համակարգի անդամների վրա, որոնք ունեն միայն Համակարգի ուղղակի մասնակցի կարգավիճակ):

38. Դիմումը և դրան կից փաստաթղթերը ներկայացված են համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից դրանց ամբողջական փաթեթի ստացման պահից:

## Գլուխ 8. Հաշվի Օպերատորի, կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի և Համակարգի ուղղակի մասնակցի կարգավիճակի շնորհումը

39. Կենտրոնական դեպոզիտարիան Կանոնների 37. կետով սահմանված փաստաթղթերի ստացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքում է ներկայացված Պայմանագիրը կամ մերժում է՝ այդ մասին գրավոր ծանուցելով դիմումատուին:

40. Պայմանագրի կնքումը և կարգավիճակի շնորհումը մերժվում է, եթե ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում առկա է Կանոններով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն: Մերժման մասին ծանուցման մեջ նշվում են նաև մերժման հիմքերը:

41. ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի ձեռքբերմամբ Համակարգի Անդամը հնարավորություն է ստանում մասնակցել Կարգավորվող շուկայում կորպորատիվ արժեթղթերի առևտրին՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով և դեպքում:

42. Պայմանագրի կնքման արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիան Ծրագրային համակարգ է մուտքագրում Հավելված 2-ով Համակարգի Անդամի կողմից ներկայացված տեղեկությունները: Վերը նշված տեղեկությունները, ինչպես նաև Ծրագրային համակարգում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների համաձայն բացված Դրամական հաշիվները ներառվում են Համակարգի Անդամին տրամադրվող ծրագրային մոդուլի մեջ:

43. Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի շնորման ժամանակ Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի ներքին իրավական ակտերը, որոնք սահմանում են Կանոններով սահմանված ծառայությունների միջնորդավորված մատուցման ներքին կարգը և սակագները, ուժի մեջ են մտնում համապատասխան կարգավիճակի շնորհման և Ծրագրային մոդուլը Համակարգի Անդամի մոտ տեղադրելու օրվան հաջորդ օրվանից, եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Համակարգի Անդամի կողմից ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի սույն կետում նշված ներքին իրավական ակտերի հետագա փոփոխությունները, որոնք Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնելիս և հետագայում գործածելիս պետք է ներառված լինեն սույն կետում նշված ներքին իրավական ակտերի ամբողջական տեքստում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ նշումով, կամ նոր խմբագրությամբ հաստատված ներքին իրավական ակտերում, ուժի մեջ են մտնում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից դրանց ստացման օրվանը հաջորդող 5-րդ աշխատանքային օրը՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից չառարկելու դեպքում: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից առարկելու դեպքում անհրաժեշտ ուղղումներով ներքին իրավական ակտերի փոփոխություններն ուժի մեջ են մտնում սույն պարբերությամբ սահմանված կարգով:

Հաշվի Օպերատորի և/կամ ԿԾՀՀԱ-ի՝ սույն կետում նշված ներքին իրավական ակտերով սահմանված ընթացակարգերը կարող են լրացնել Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված ընթացակարգերին, սակայն չեն կարող հակասել դրանց:

## Գլուխ 9. Ծրագրային համակարգին միացումը

44. Համակարգի Անդամի կարգավիճակի շնորհման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան Պայմանագրի կնքման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի անդամի դիմումին համապատասխան Ծրագրային համակարգի համապատասխան ծրագրային մոդուլը (փաթեթը) տեղադրում է Համակարգի Անդամի մոտ (կամ տրամադրում է դրա տեղադրման փաթեթը) և վերջինիս շնորհում է Ծրագրային համակարգի մուտքի ծածկագիր:
45. Հեռացված տերմինալի միջոցով Ծրագրային համակարգին միանալու համար՝
1) Համակարգի Անդամը պարտավոր է հատկացնել առանձնացված համակարգիչ (համակարգիչներ), որը (որոնք) պետք է ապահովված լինի ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցին և/կամ ինտերնետին միանալու հնարավորությամբ և բավարարի Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքում հրապարակված նվազագույն պահանջներին.
2) Համակարգի Անդամը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրել ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցի և/կամ ինտերնետ ցանցի իրական IP հասցե, որպես Ծրագրային համակարգին միանալու համար նույնականացման միջոց.
3) Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է Համակարգի Անդամի կողմից առանձնացված համակարգչում տեղադրել Ծրագրային համակարգին հեռացված տերմինալի միջոցով միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը (կամ Համակարգի Անդամին տրամադրել դրա տեղադրման փաթեթը), որն ապահովելու է ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցի կամ ինտերնետի միջոցով Ծրագրային համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորությունը, և կատարել դրա փորձարկումը.
4) Համակարգի Անդամի մոտ ծրագրային մոդուլի տեղադրման և փորձարկման արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կազմվում է ծրագրային մոդուլի տեղադրման ակտ (Հավելված 3), որը վավերացվում է Համակարգի Անդամի և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

46. Հեռացված տերմինալի միջոցով Ծրագրային համակարգին միանալու անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան Ծրագրային համակարգին միանալու համար իր տարածքում Համակարգի Անդամի լիազորված ներկայացուցչին տրամադրում է Ծրագրային համակարգին միացված աշխատանքային կայան, որում տեղադրված է Համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլ:
46.1. Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգի անդամների աջակցման շրջանակներում կարող է ստեղծել էլեկտրոնային աջակցման համակարգ, որի միջոցով Համակարգի անդամները և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված անձիք ու մարմինները կարող են Կենտրոնական դեպոզիտարիային տեղեկացնել Ծրագրային համակարգի հետ կապված խնդիրների և առաջարկների մասին և ստանալ համապատասխան լուծումներ:

## Գլուխ 10. Համակարգի Անդամի իրավունքները և պարտականությունները

47. Համակարգի Անդամը պետք է գործի Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների և Համակարգի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին, ինչպես նաև իր ներքին իրավական ակտերին և իր կողմից կնքված և գործող պայմանագրերի դրույթներին համապատասխան:
48. Համակարգի Անդամը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի) պարտավոր է իր հաճախորդներին առաջարկել, ինչպես նաև միջնորդավորել Կանոններով սահմանված այն

ծառայությունները, որոնց շրջանակը ամրագրված է Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած Պայմանագրով սահմանված իրավասությունների շրջանակում:
49. Համակարգի Անդամը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի) իրավունք ունի մատուցել Պայմանագրով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված ծառայությունները Ծրագրային մոդուլը տեղադրելու (կամ Պայմանագրի կնքման, եթե Ծրագրային մոդուլն արդեն տեղադրված է) օրվան հաջորդ օրվանից սկսած, եթե այդ օրն ուժի մեջ մտած կլինեն Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների միջնորդավորումը կարգավորող Համակարգի Անդամի համապատասխան իրավական ակտերը կամ այն օրվանից, երբ նշված իրավական ակտերն ուժի մեջ կմտնեն:
50. Համակարգի Անդամը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի) պարտավոր է իր ինտերնետ կայքի միջոցով շահագրգիռ անձանց տեղեկացնել Համակարգում իր անդամության և դրան առնչվող կանոնների մասին՝ Համակարգի անդամության համապատասխան պայմանագրի կնքման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:
51. Համակարգի Անդամը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի) Կանոններով սահմանված ծառայությունները պետք է մատուցի ՀՀ օրենսդրությանը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին, Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրին, Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացված և գործող իր ներքին իրավական ակտերին, իսկ իրավական ակտերով կարգավորման ենթակա, սակայն չկարգավորված կամ վիճահարույց դեպքերում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ուղղակի գրավոր ցուցումներին համապատասխան:
52. Համակարգի Անդամը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի) պարտավոր է իր հաճախորդների պահանջով՝ Համակարգի Անդամի և հաճախորդի համաձայնեցված կարգով, տեղեկացնել նրանց հանձնարարականների կատարման/մերժման մասին:
53. Համակարգի Անդամը պարտավոր է հատուցել իր հաճախորդների վնասները, որոնք առաջացել են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջների խախտումներով գործելու արդյունքում:
54. Կանոններով և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունները Համակարգի Անդամը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի) պետք է հաճախորդներին մատուցի պատշաճ մասնագիտական մակարդակով, նրանց հետ աշխատանքի ընթացքում հաշվի առնի ծառայությունների մատուցման հետ կապված հաճախորդների ցանկությունները և պահանջները, ապահովի բավարար տարածքային պայմաններ հաճախորդների սպասարկման համար՝ հնարավորինս բացառելով հերթերն ու մարդկային կուտակումները, ներկայացված հանձնարարականները կատարի ժամանակին՝ հնարավորինս արագ՝ ըստ դրանց ներկայացման հերթականության, պահպանի մասնագիտական էթիկայի և բարեխիղճ գործունեության վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ընդունված կանոնները և չափանիշները, ապահովի և վերահսկի դրանց կիրառումն իր ամենօրյա աշխատանքի ընթացքում:
Եթե Համակարգի Անդամը նախատեսել է Կանոններով սահմանված ծառայությունների մատուցումն իրականացնել մի քանի սպասարկման կետերի միջոցով, ապա Համակարգի Անդամը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ որևէ ծառայության մատուցումն որևէ սպասարկման կետով պայմանավորելը բացառելու համար:
55. Համակարգի Անդամը (բացառությամբ ՀՀ Ֆինանսների նախարարության և Համակարգի ուղղակի մասնակցի) պարտավոր է Կանոններով և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն ապահովել Համակարգի գործունեության վերաբերյալ բավարար գիտելիքներ ունեցող իրավասու աշխատակիցների միջոցով, որոնք մասնակցել են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կազմակերպվող դասընթացներին և որակավորվել են Կենտրոնական դեպոզիտարիայի իրավական ակտերով սահմանված կարգով: Սույն Կանոնների իմաստով իրավասու աշխատակից է համարվում

Կենտրոնական դեպոզիտարիայի իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան որակավորում ստացած և Համակարգի անդամի ներքին իրավական ակտով և/կամ պայմանագրով տվյալ Համակարգի անդամի անունից Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների միջնորդավորման պարտականություններ ստանձնած ֆիզիկական անձը, որը Համակարգի անդամի կողմից համապատասխան իրավասություններով գրանցվել է Ծրագրային համակարգում:

56. Համակարգի Անդամը (բացառությամբ ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և Համակարգի ուղղակի մասնակցի) պարտավոր է եռամսյակային կտրվածքով Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնել Համակարգի Անդամի կարգավիճակով իրականացված գործունեության ստուգման արդյունքների վերաբերյալ Կանոնների Հավելված 4-ով սահմանված և իր ներքին աուդիտի կողմից լրացված հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 15-րդ աշխատանքային օրը ներառյալ: Եթե Համակարգի Անդամը հաշվետու եռամսյակի ընթացքում Համակարգի Անդամի կարգավիճակով ծառայություններ չի մատուցել, ապա սույն կետով սահմանված ժամանակահատվածում Կենտրոնական դեպոզիտարիային գրավոր տեղեկացնում է այդ մասին:

57. Համակարգի Անդամը 56. կետով սահմանված հաշվետվությունը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում նաև Համակարգի Անդամի կարգավիճակով իրականացված գործունեության շրջանակներում տեղ գտած յուրաքանչյուր խախտման հայտնաբերման դեպքում, դրա հայտնաբերման պահից հինգ, իսկ խախտման վերացման դեպքում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

58. Համակարգի Անդամի (բացառությամբ ՀՀ Ֆինանսների նախարարության) նկատմամբ անվճարունակության գործընթաց սկսվելու դեպքում Համակարգի Անդամը պետք է այդ մասին անհապաղ ծանուցի Կենտրոնական դեպոզիտարիային: Ծանուցման մեջ պետք է նշվի անվճարունակության գործընթացի սկսման ամսաթիվը:

59. Համակարգի Անդամ դառնալու պայմաններին առնչվող լիցենզիան կամ թույլտվությունը կասեցվելու կամ չեղյալ համարվելու դեպքում, Համակարգի Անդամը պետք է այդ մասին անմիջապես գրավոր ծանուցի Կենտրոնական դեպոզիտարիային: Ծանուցման ուշացման դեպքում Համակարգի Անդամը պատասխանատվություն է կրում ուշացման պատճառով առաջացած բոլոր հետևանքների համար:

60. Համակարգի Անդամը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Համակարգի սպասարկմամբ պայմանավորված ծառայությունների մատուցման համար Կենտրոնական Դեպոզիտարիային վճարել Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և Պայմանագրով սահմանված կարգով:

61. Համակարգի Անդամը պարտավոր է Համակարգում գործառնությունների գրանցումներն իրականացնել ժամանակին և իր իրավասության շրջանակներում՝ Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին, իր ներքին կանոններին և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած Պայմանագրին համապատասխան:

62. Կանոններով սահմանված դեպքերում Համակարգի անդամը ՀՀ կենտրոնական բանկի Բանկմեյլ համակարգով փաստաթղթերի առաքումը պետք է կատարի այդ համակարգի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն:

63. Եթե որևէ ծառայության մատուցումը/ստացումը ինչ-որ պատճառով դարձել է բարդ կամ անհնար, ապա Համակարգի Անդամը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին Կենտրոնական դեպոզիտարիային և միաժամանակ, իր իրավասությունների շրջանակներում, անհրաժեշտ և բավարար գործողություններ իրականացնի խնդիրները վերացնելու ուղղությամբ:

64. Համակարգի Անդամը պարտավոր է պահպանել Համակարգում առկա և իրեն հասանելի տեղեկությունների գաղտնիությունը, ինչպես նաև ձեռնարկել համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցներ Համակարգում առկա տեղեկությունները չթույլատրված օգտագործումից պաշտպանելու համար:

65. Համակարգի Անդամը պարտավոր է աջակցել Կենտրոնական դեպոզիտարիային՝ վերջինիս կողմից Կանոններով սահմանված վերահսկողության գործառույթները իրականացնելիս և անհրաժեշտության դեպքում, հնարավորինս սեղմ ժամկետներում, Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրել վերահսկողության շրջանակներում պահանջված փաստաթղթերը, տվյալները և այլ տեղեկությունները:
66. Համակարգի Անդամը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով, իր ներքին կանոններով և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով սահմանված պահանջների խախտման դեպքում իր կողմից անձանց հասցված իրական վնասների համար:

## Գլուխ 11. Հաշվի Օպերատորի պարտականությունները

67. Համակարգում տեղեկությունների փոփոխությունները, գործառնությունների գրանցումները, ինչպես նաև տեղեկությունների տրամադրումը պետք է իրականացվի Հաշվի Օպերատորի իրավասու աշխատակցի (աշխատակիցների) կողմից: Ընդ որում, Հաշվի Օպերատորը իր գործառնական ռիսկերը նվազեցնելու նպատակով Համակարգում գործառնությունների իրականացման ժամանակ պետք է կիրառի առնվազն կրկնակի ստուգման համակարգ: Հաշվի Օպերատորը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված պահանջի խախտման դեպքում այլ անձանց հասցված վնասների համար:
68. Հաշվի Օպերատորը պարտավոր է ստացված հանձնարարականները մուտքագրել Համակարգ՝ Կանոններով սահմանված ժամկետներում, եթե հանձնարարականը տված անձի և Հաշվի Օպերատորի համաձայնությամբ այլ ժամկետ չի սահմանել:
69. Հաշվի Օպերատորը պարտավոր է ստուգել իր կողմից Համակարգում գործառնությունների իրականացման հանձնարարականների համապատասխանությունն իրավական ակտերին, սույն կանոններին, ներկայացված փաստաթղթերին և գործառնության էությանը: Հաշվի Օպերատորը պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված պահանջի խախտման համար:
70. Յուրաքանչյուր դեպքում Հաշվի Օպերատորը նախքան ստացված հանձնարարականի, հարցման մուտքագրումը Ծրագրային համակարգ պարտավոր է նույնականացնել հանձնարարականը ներկայացրած անձին և ստուգել նրա լիազորությունները: Ընդ որում Հաշվի Օպերատորը գործում է միայն իրավասու անձի կողմից ներկայացված հանձնարարականի կամ հարցման հիման վրա, եթե Օրենքով և Կանոններով այլ բան սահմանված չէ: Այն դեպքում եթե Հաշվի օպերատորին կամ Կենտրոնական դեպոզիտարիային հասանելի են դառնում այնպիսի էական տեղեկատվություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կասկածի տակ են դնում նախնկինում ներկայացված նույնականացման փաստաթղթերը, ապա Հաշվի օպետատորը պարտավոր է կրկին իրականացնել հաճախորդի նույնականացում՝ հաշվի առնելով ի հայտ եկած տեղեկատվությունները:
70.1. Իր ծառայությունների մատուցման շրջանակներում Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը ներկայացված նույնականացման և/կամ այլ փաստաթղթերում առկա տեղեկատվության ճշմարտացիության և/կամ օրինականության մասին կասկածներ ունենալու դեպքում իրավունք ունեն ինքնուրույն հարցումներ կատարել հայաստանյան և/կամ օտարերկրյա իրավասու մարմիններին և/կամ ընկերություններին, անհրաժեշտության դեպքում ստանալ իրավական կարծիքներ: Ստացված տեղեկությունների հիմքով Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը իրավունք ունեն մերժել Հաճախորդի հանձնարարականների, դիմումների և/կամ հարցումների կատարումը: Սույն կետով սահմավված գործողությունները կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը՝ Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնությամբ, կարող են սույն Կանոններով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգել այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է սույն կետով սահմանված տեղեկատվությունը/իրավական կարծիքը ստանալու

համար:
71. Հաշվի Օպերատորի կարգավիճակի հետկանչման, ինչպես նաև Հաշվի Օպերատորի կողմից Հաշվի Օպերատորի կարգավիճակից հրաժարման դեպքում Հաշվի Օպերատորը (բացառությամբ ՀՀ Ֆինանսների նախարարության) պարտավոր է փոխհատուցել իր միջոցով արժեթղթերի հաշիվներ օգտագործող բոլոր հաշվետերերի ուղղակի ծախսերը, որոնք կապված են այլ Հաշվի Օպերատորի կողմից արժեթղթերի նոր հաշիվների բացման, փակված հաշիվներից նոր բացված հաշիվներին արժեթղթերի փոխանցման և արժեթղթերի հաշիվների փակման հետ:
72. Հաշվի Օպերատորի կարգավիճակի հետկանչման, ինչպես նաև Հաշվի Օպերատորի կողմից Հաշվի Օպերատորի կարգավիճակից հրաժարման դեպքում Հաշվի Օպերատորը պարտավոր է կատարել Կենտրոնական դեպոզիտարիայի այն հանձնարարականները և բավարարել բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ են հաշվետերերի իրավունքների պաշտպանության, արժեթղթերի հաշիվների և ռեեստրի վարման գործընթացի շարունակականության ապահովման համար:
73. Հաշվի Օպերատորը պարտավոր է պահպանել Համակարգում գործառնությունների իրականացման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը (այդ թվում՝ հանձնարարականները, հարցումները) և տեղեկությունները՝ դրանք ստանալուց հետո տասը տարվա ընթացքում:
74. Հաշվի Օպերատորի կարգավիճակի հետկանչման, ինչպես նաև Հաշվի Օպերատորի կողմից Հաշվի Օպերատորի կարգավիճակից հրաժարման պահից՝ Հաշվի Օպերատորն անհապաղ պետք է իրականացնի Համակարգում գործառնությունների կատարման համար հիմք հանդիսացած բոլոր փաստաթղթերի և տեղեկությունների արխիվացում այնպես, որ այն առնվազն տասը տարի պահպանվի և հասանելի լինի իրավասու անձանց և պետական լիազոր մարմինների համար:
75. Հաշվի Օպերատորը պատասխանատվություն է կրում Կանոններով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում երրորդ անձանց, այդ թվում՝ Թողարկողներին և Հաշվետերերին պատճառված իրական վնասի համար:

## Գլուխ 12. Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի պարտականությունները

76. ԿՇՀՀԱ-ն Համակարգ է մուտքագրում առևտրային նստաշրջանի ընթացքում գործարքների իրականացման համար անհրաժեշտ Կանոններով և Ծրագրային համակարգով նախատեսված հանձնարարականները:
77. ԿՇՀՀԱ-ն պարտավոր է հանձնարարականները Համակարգ մուտքագրել Կանոններով սահմանված ժամկետներին համապատասխան:
78. Կանոնների Հավելված 2-ում ներառված ցանկացած տեղեկության յուրաքանչյուր փոփոխության դեպքում ԿՇՀՀԱ-ն նոր Հավելված 2 և կատարված փոփոխության վերաբերյալ համապատասխան դիմում է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիային՝ Կարգավորվող շուկայում արժեթղթերով առևտրին մասնակցելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:
79. Եթե Կարգավորվող շուկայում կնքված գործարքի վերջնահաշվարկի փուլում պարզվում է, որ ԿՇՀՀԱ-ին վերջնահաշվարկով նախատեսվածից ավելի դրամական միջոց է փոխանցվել, ապա ԿՇՀՀԱ-ն պետք է ապահովի ավել փոխանցված միջոցի հետ փոխանցում համապատասխան Դրամական հաշվին՝ Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում: Եթե ԿՇՀՀԱ-ի կողմից չի ապահովվում սույն կետի պահանջի իրականացումը, ապա վերջինս պատասխանատվություն է կրում իր պարտավորության չկատարման հետևանքով առաջացած բոլոր վնասների փոխհատուցման համար:
80. ԿՇՀՀԱ-ն պարտավոր է իր հաճախորդներին ծանուցել իր հաճախորդների ամփոփ Դրամական հաշվում վերջիններիս ունեցած դրամական միջոցների վերադարձման կարգի և

ժամկետների մասին:

## Գլուխ 13. Կենտրոնական Դեպոզիտարիայի իրավունքները և պարտականությունները

81. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատու է Համակարգի անվտանգ և արդյունավետ գործունեության համար:
82. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավորվում է Պայմանագրի կնքման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի ծրագրային մոդուլը անհրաժեշտության դեպքում տեղադրել Համակարգի Անդամի մոտ կամ Համակարգի Անդամին տրամադրել դրա տեղադրման փաթեթը և վերջինիս տալ Ծրագրային համակարգի մուտքի ծածկագիր:
83. Կենտրոնական դեպոզիտարիան Օրենքով և Կանոններով սահմանված իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ ձևավորում է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը կազմվում է Կենտրոնական դեպոզիտարիայի երեք աշխատակիցներից՝ ներառյալ աշխատանքային խմբի ղեկավարը: Աշխատանքային խումբը իրականացնում է Համակարգի Անդամների կողմից Կանոնների պահանջների կատարման նկատմամբ ընտրանքային կամ թիրախային հսկողություն՝ կիրառելով մոնիտորինգի, հաշվետվական վերահսկողության կամ անմիջական ստուգումների եղանակները՝ ելնելով Համակարգում ռիսկերի նվազեցման գործոններից, բացահայտված խախտումների, խախտումների կատարման հիմնավոր կասկածների և բողոքների բնույթից (խախտման կամ դրա հետևանքների էականությունից, խախտման շարունակականությունից, խախտումների քանակից): Տնօրենի հրամանով աշխատանքային խմբի վրա կարող են դրվել վերահսկողական այլ պարտավորություններ:
84. Աշխատանքային խմբի կողմից կազմվում են Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարին ներկայացվող եռամսյակային և իրականացված գործառույթների վերաբերյալ հաշվետվություններ: Հաշվետվությունները հաստատվում են աշխատանքային խմբի կողմից քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Քվորումը համարվում է ապահովված, եթե քվեարկությանը մասնակցում են աշխատանքային խմբի առնվազն երկու անդամ: Քվորումը չապահովվելու կամ քվեարկության արդյունքում կողմ/դեմ ձայների հավասարության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի կողմից որոշում է կայացվում աշխատանքային խումբը մեկ անդամով համալրելու վերաբերյալ:
85. Կախված սույն գլխի 84. կետով նախատեսված հաշվետվություններով ներկայացված հանգամանքների պարբերականությունից և էականությունից, Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը կարող է որոշում կայացնել՝ հաշվետվությունները և դրանցում ներկայացված հանգամանքներին առնչվող փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացնելու Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի նիստի քննարկմանը: Քննելով ներկայացված հանգամանքները, Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհուրդը կարող է որոշում կայացնել Համակարգի Անդամի նկատմամբ համապատասխան ներգործության միջոցներ կիրառելու վերաբերյալ՝ ընդհուպ անդամությունից զրկում՝ շնորհված կարգավիճակի հետկանչմամբ:
86. Սույն գլխի 83. կետով սահմանված աշխատանքային խումբը, Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օրենքով սահմանված վճարունակության նկատմամբ վերահսկողության գործառույթի իրականացման շրջանակներում, առնվազն եռամսյակը մեկ անգամ, հետևում է Համակարգի Անդամի պաշտոնական կայքում և www.cba.am կայքում Համակարգի Անդամի անվճարունակության վերաբերյալ տեղեկությունների առկայությանը: Նման տեղեկությունների առկայության դեպքում այդ մասին տեղեկացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը: Վերջինս՝ հիմք ընդունելով ներկայացված տեղեկատվության բնույթը և կարևորությունը, կարող է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կասեցնել Համակարգի

Անդամի գործունեությունը՝ մինչև հայտնաբերված թերությունների վերացումը կամ որոշում կայացնել Համակարգի Անդամի գործունեության կասեցման վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդին դիմելու մասին:
87. Կենտրոնական դեպոզիտարիան պարզելով, որ Համակարգի Անդամը ճանաչվել է անվճարունակ, շարունակում է այդ Համակարգի Անդամի կողմից տրված հանձնարարականների կատարումը Համակարգում:
88. Եթե Համակարգի Անդամի անվճարունակության գործընթացի ընթացքում սառեցվում է Համակարգի Անդամի պարտատերերի պահանջների բավարարումը (սահմանվում է մորատորիում) կամ կասեցվում է Համակարգի Անդամի գործունեությունը, ապա Կենտրոնական դեպոզիտարիան՝ գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, պարտավոր է անհապաղ կասեցնել տվյալ Համակարգի Անդամի անդամությունը և այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՀՀ կենտրոնական բանկին:
89. Համակարգի Անդամին դատարանի կողմից սնանկ ճանաչելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան՝ գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, պարտավոր է անհապաղ դադարեցնել այդ Համակարգի Անդամի անդամությունը և այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՀՀ կենտրոնական բանկին:

## Գլուխ 14. Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի կարգավիճակների կասեցումը

90. Համակարգի Անդամի Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի և/կամ Համակարգի ուղղակի մասնակցի կարգավիճակները կարող են մասնակիորեն կամ ամբողջովին կասեցվել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից.

1) եթե Համակարգի Անդամի կողմից թույլ է տրվել Օրենքով, նորմատիվ իրավական ակտերով, Կանոններով կամ Համակարգի Անդամի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված որևէ պահանջի խախտում, և եթե դա անհրաժեշտ է թողարկողների և հաշվետերերի իրավունքների պաշտպանության համար,
2) ԿՇՀՀԱ-ի դեպքում՝ նաև եթե ժամանակավորապես սահմանափակվել է Կարգավորվող շուկայում առևտուր իրականացնելու ԿՇՀՀԱ-ի իրավունքը,
3) Օրենսդրությամբ և Կանոններով նախատեսված այլ դեպքերում:

91. Համակարգի Անդամի ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի կասեցման որոշումը կայացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, եթե կասեցման համար հիմք է հանդիսացել Կանոնների 90. կետի 2) կամ 3) ենթակետով սահմանված հիմքերը:
92. Եթե Համակարգի Անդամի որևէ կարգավիճակի կասեցման համար հիմք է հանդիսացել Կանոնների 90. կետի 1) ենթակետով սահմանված հիմքը, ապա Համակարգի Անդամի Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի կասեցման մասին որոշումն ընդունվում է Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից՝ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:
93. Համակարգի անդամի որևէ կարգավիճակի կասեցման մասին որոշումը պետք է սահմանի.

1) կարգավիճակի կասեցման հիմքերը.
2) կարգավիճակի կասեցման ծավալը՝ մասնակի կամ ամբողջությամբ.
3) մասնակի կասեցման դեպքում՝ սահմանափակումների նկարագրությունը.
4) կարգավիճակի կասեցման հիմքերի վերացման ժամկետը և/կամ պայմանները:

94. Համակարգի Անդամի որևէ կարգավիճակի կասեցման որոշումն՝ այն ընդունելուց հետո անմիջապես, ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցի կամ SWIFT համակարգի միջոցով ուղարկվում է համապատասխան Համակարգի Անդամին և հրապարակվում է Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքում, ինչպես նաև գրավոր ձևով տրամադրվում է Համակարգի Անդամին՝ այն ընդունվելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:
95. Համակարգի Անդամը պարտավոր է Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի իր կարգավիճակի կասեցման որոշման մասին տեղեկանալուց հետո անմիջապես այդ մասին

հրապարակել իր ինտերնետային կայքում՝ հստակ ներկայացնելով կարգավիճակի կասեցման հիմքերը և ժամկետը, ինչպես նաև հրապարակել ծանուցում առ այն, որ Թողարկողները և/կամ Հաշվետերերը իրավունք ունեն սպասարկվել Համակարգի այլ Անդամի կողմից՝ հղում անելով Կենտրոնական դեպոզիտարիայի էլեկտրոնային կայքի այն բաժնին, որտեղ տեղակայված է համապատասխան Համակարգի Անդամների ցանկը:

96. Եթե Հաշվի Օպերատորի և/կամ ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի կասեցման ժամանակահատվածը գերազանցում է հինգ աշխատանքային օրը, ապա Հաշվի Օպերատորը կամ ԿՇՀՀԱ-ն նաև պարտավոր է իր կարգավիճակի կասեցման մասին տեղեկանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հրապարակել իր ինտերնետային կայքում, եթե այդ ժամանակահատվածում Հաշվի Օպերատորը կամ ԿՇՀՀԱ-ն չի վերացնում կասեցման հիմքերը և կասեցման վերացման նպատակով չի դիմում Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարին:

97. Հաշվի Օպերատորի կարգավիճակի կասեցման դեպքում պահպանվում է միայն արժեթղթերի հաշիվներից պորտֆելի փոխանցման և հաշիվների փակման Հաշվետերերի հանձնարարականների, ինչպես նաև Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվից Հաշվետերերի դրամական միջոցների փոխանցման՝ Ծրագրային համակարգում գրանցելու Հաշվի Օպերատորի իրավասությունը, որը Հաշվի Օպերատորը պարտավոր է կատարել:

98. Հաշվի Օպերատորի կարգավիճակի կասեցման ժամանակահատվածում Հաշվի Օպերատորն իրավունք չունի Հաշվետերերից գանձել արժեթղթերի հաշիվներից պորտֆելի փոխանցման, ինչպես նաև հաճախորդների ամփոփ Դրամական հաշվից հաշվետերերին պատկանող դրամական միջոցների փոխանցման համար սահմանված վճարները, սակայն պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիային վճարել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այդ ծառայությունների համար սահմանված վճարները, ինչպես նաև իր վրա վերցնել տվյալ Հաշվի Օպերատորի կողմից սպասարկվող Թողարկողի կողմից Հաշվի Օպերատորի փոփոխության հետ կապված ուղղակի ծախսերը:

99. ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի կասեցման դեպքում պահպանվում է միայն առևտրային արգելադրման ենթարկված արժեթղթերի (առկայության դեպքում) արգելադրման դադարեցմանն ուղղված Հաշվետերերի հանձնարարականների՝ Ծրագրային համակարգում գրանցման ԿՇՀՀԱ-ի իրավունքը, որը ԿՇՀՀԱ-ն պարտավոր է իրականացնել:

100. Կանոնների 90. կետի 1) ենթակետով սահմանված հիմքերով Համակարգի անդամի որևէ կարգավիճակի կասեցումը կարող է վերացվել մինչև կասեցման ժամկետի ավարտը Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից՝ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի միջնորդությամբ, եթե Համակարգի Անդամը մինչև կասեցման ժամկետի ավարտը վերացնում է կասեցման հիմքերը:

101. Կասեցման սահմանված ժամկետում կասեցման հիմքերը չվերացնելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է դիմել Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդին՝ կասեցման ժամկետները երկարացնելու կամ Համակարգի Անդամին շնորհված կարգավիճակի հետկանչման հարցով:

## Գլուխ 15. Համակարգի Անդամի կամ առանձին կարգավիճակների դադարեցումը

102. Համակարգի Անդամի կարգավիճակը դադարեցվում է հետևյալ դեպքերում.

1) Համակարգի Անդամի կարգավիճակ ստանալու նախապայման հանդիսացող գործունեությունների համապատասխան լիցենզիաների կամ թույլտվությունների դադարման դեպքում.
2) Համակարգի Անդամի լուծարային գործընթացի սկսման դեպքում.
3) դատարանի կողմից Համակարգի Անդամին սնանկ ճանաչվելու դեպքում.
4) Համակարգի Անդամի կարգավիճակի հետկանչման դեպքում, որը հետևանք է

Համակարգի Անդամի կողմից նորմատիվ իրավական ակտերով, Կանոններով կամ Համակարգի Անդամի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված պահանջների պարբերական կամ էական խախտման, և եթե կարգավիճակի հետկանչումն անհրաժեշտ է Թողարկողների կամ Հաշվետերերի իրավունքների պաշտպանության համար.

5) Համակարգի Անդամի կողմից Կանոնների համաձայն վերջինիս շնորհված բոլոր կարգավիճակներից հրաժարման և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած համապատասխան պայմանագրերի լուծման դեպքում.

6) Օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

103.ԿՇՀՀԱ-ի կարգավիճակը դադարեցված է համարվում սույն գլխի 102. կետով՝ բացառությամբ 4) ենթակետով, սահմանված դեպքերում Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի որոշման կայացման պահից, իսկ 4) ենթակետով սահմանված դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի որոշման կայացման պահից:

104.ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի դադարեցման որոշումն՝ այն ընդունելուց հետո անմիջապես, ՍիԲիէյՆեթ համակարգի միջոցով ուղարկվում է համապատասխան Համակարգի Անդամին և անմիջապես հրապարակվում է Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքում, ինչպես նաև գրավոր տրամադրվում է Համակարգի Անդամին՝ այն ընդունվելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

105. ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի դադարեցման մասին Կենտրոնական դեպոզիտարիայի որոշման մասին տեղեկանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում ԿՇՀՀԱ-ն պարտավոր է պատշաճ ծանուցում ուղարկել իր կողմից ԿՇՀՀԱ-ի գործառույթների շրջանակներում սպասարկվող անձանց: Ծանուցումը պետք է հստակ ներառի կարգավիճակի դադարեցման հիմքերը, ինչպես նաև դրույթ առ այն, որ սպասարկվող անձինք իրավունք ունեն սպասարկվել այլ ԿՇՀՀԱ-ների կողմից՝ տրամադրելով նաև Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքի այն բաժնի հղումը, որտեղ տեղադրված է ԿՇՀՀԱ-ների ցանկը:

106.ԿՇՀՀԱ-ի կարգավիճակի դադարեցման որոշման հրապարակման պահից անմիջապես հետո Կենտրոնական դեպոզիտարիան արգելափակում է Ծրագրային համակարգ տվյալ ԿՇՀՀԱ-ի մուտքի հնարավորությունը և իրականացնում տվյալ ԿՇՀՀԱ-ի կողմից առևտրային արգելադրման ենթարկված արժեթղթերի (առկայության դեպքում) արգելադրման դադարեցում:

107.Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարեցման որոշումը՝ բացառությամբ Հաշվի Օպերատորի կողմից կարգավիճակից հրաժարման կամ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, կայացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի Դիտորդ խորհրդի կողմից, որով սահմանվում են.

1) Հաշվի Օպերատորի կարգավիճակի հետկանչման հիմքերը.
2) Արժեթղթերի հաշիվների կառավարման և Թողարկողների ռեեստրների վարման փոխանցման ժամկետները և պայմանները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հաշվետերերը և Թողարկողները պետք է հնարավորություն ունենան նոր Հաշվի Օպերատորի հետ կնքելու համապատասխան պայմանագրեր:

108.Համակարգի Անդամի կողմից Հաշվի Օպերատորի կարգավիճակից հրաժարման դեպքում կարգավիճակի դադարեցման մասին որոշումն ընդունում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի կողմից, որը պետք է ներառի դրույթ Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարումից հետո Հաշվետերերի կողմից արժեթղթերի փոխանցման և հաշիվների փակման հանձնարարականների կատարման իրավասության ժամանակահատվածի վերաբերյալ:

109.Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարեցման մասին որոշումն անմիջապես հրապարակվում է, ինչպես նաև գրավոր տրամադրվում է Համակարգի Անդամին՝ այն ընդունվելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

110. Հաշվի Օպերատորի կարգավիճակից հրաժարման դեպքում Համակարգի Անդամը կարգավիճակից հրաժարման մասին որոշման վերաբերյալ պետք է գրավոր տեղեկացնի Կենտրոնական դեպոզիտարիային՝ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ Պայմանագրի

լուծումից երեք ամիս առաջ, և պատշաճ կարգով ծանուցի իր կողմից սպասարկվող Թողարկողներին և/կամ Հաշվետերերին՝ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ Պայմանագրի լուծումից երկու ամիս առաջ: Ընդ որում, Թողարկողներին և/կամ Հաշվետերերին ծանուցումը պետք է ներառի կարգավիճակի դադարեցման ամսաթիվը, ինչպես նաև դրույթ առ այն, որ Թողարկողները և/կամ Հաշվետերերը իրավունք ունեն սպասարկվել այլ Հաշվի Օպերատորի կողմից, որոնց ցանկը տեղադրված է Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքում, իսկ Հաշվի Օպերատորը պարտավորվում է իր վրա վերցնել տվյալ Հաշվի Օպերատորի կողմից սպասարկվող Թողարկողի կամ Հաշվետիրոջ կողմից Հաշվի Օպերատորի փոփոխության հետ կապված բոլոր ուղղակի ծախսերը:

111. Հաշվի Օպերատորը պարտավոր է կարգավիճակի դադարեցման մասին որոշումը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում ուղարկել իր կողմից սպասարկվող Թողարկողներին և/կամ Հաշվետերերին: Ծանուցումը պետք է հստակ ներառի կարգավիճակի դադարեցման հիմքերը, Հաշվետերերի արժեթղթերի փոխանցման ծառայության մատուցման ժամանակահատվածը, ինչպես նաև դրույթ առ այն, որ Թողարկողները և/կամ Հաշվետերերը իրավունք ունեն սպասարկվել Համակարգի այլ Անդամի կողմից՝ տրամադրելով նաև Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքի այն բաժնի հղումը, որտեղ տեղադրված է Համակարգի Անդամների ցանկը, իսկ Հաշվի Օպերատորը պարտավորվում է իր վրա վերցնել տվյալ Հաշվի Օպերատորի կողմից սպասարկվող Թողարկողի կամ Հաշվետիրոջ կողմից Հաշվի Օպերատորի փոփոխության հետ կապված ուղղակի ծախսերը (այդ թվում՝ դրամական Հաշիվներում առկա միջոցների փոխանցման հետ կապված ծախսերը):

112. Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարեցման մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից Հաշվի Օպերատորն իրավունք չունի Հաշվետերերից գանձել արժեթղթերի հաշիվներից պորտֆելի փոխանցման և/կամ արժեթղթերի զրոյական մնացորդով հաշիվների փակման համար սահմանված ծառայության գինը, սակայն պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիային վճարել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այդ ծառայությունների համար սահմանված վճարները:

113. Եթե Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարեցման որոշմամբ սահմանված ժամկետի ավարտի դրությամբ Համակարգում տվյալ Հաշվի Օպերատորի սպասարկման ներքո դեռևս առկա են արժեթղթերի զրոյական մնացորդով հաշիվներ, ապա դրանք ենթակա են փակման Հաշվի Օպերատորի կողմից՝ նշված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

114. Այն դեպքում, երբ Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարեցման որոշմամբ սահմանված ժամկետից հետո Համակարգում տվյալ Հաշվի Օպերատորի սպասարկման ներքո դեռևս առկա են արժեթղթերի ոչ զրոյական մնացորդով հաշիվներ, որոնց Հաշվետերերի կողմից չի իրականացվել արժեթղթերի փոխանցմանն ուղղված գործողություններ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան արգելափակում է Հաշվի Օպերատորի իրավասությունը նշված հաշիվների նկատմամբ:

115. Հաշվի Օպերատորի կարգավիճակի դադարեցման մասին որոշման սահմանված ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրվանից տվյալ Հաշվի Օպերատորի և Հաշվետերերի միջև կնքված պահառության պայմանագրերը համարվում են լուծված, իսկ Թողարկողի հետ կնքված Ռեեստրի վարման պայմանագիրը շարունակում է գործել որպես առանց Հաշվի Օպերատորի միջնորդության Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագիր՝ մինչև այլ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ Թողարկողի կողմից Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքումը: Սույն կետում նշված պայմանագրերի լուծվելու դեպքում պայմանագրերի կողմերի ունեցած ժամկետանց բոլոր պարտավորությունները շարունակում են պահպանել իրենց ուժը մինչև դրանց ամբողջական կատարումը:

## ՄԱՍ II. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԲԱԺԻՆ 3. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՈՒՄ

### Գլուխ 16. Թողարկողի ռեեստրի վարման պայմանագրի կնքումը և վերակնքումը

116. Թողարկողի Ռեեստրի վարումը Կենտրոնական դեպոզիտարիան ստանձնում է Ռեեստրի վարման պայմանագրի կնքմամբ:

Ռեեստրը ներառում է տեղեկություններ.

(1) թողարկողի մասին.

(2) թողարկողի արժեթղթերի մասին (արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար առանձին).

(3) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և նրանց անձնական հաշիվներում հաշվառված՝ նրանց պատկանող (նրանց անվամբ գրանցված) արժեթղթերի մասին.

(4) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներով կատարվող փոխանցումների մասին.

117. (5) արժեթղթերի հավաստագրերի մասին (թողարկողի արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար առանձին):Բացառությամբ Կանոններով սահմանված դեպքերի, Թողարկողի Ռեեստրի վարմամբ պայմանավորված ծառայությունները Կենտրոնական դեպոզիտարիան մատուցում է Հաշվի Օպերատորների միջնորդությամբ, որտեղ Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնում է այն Հաշվի Օպերատորը, որի միջնորդությամբ Թողարկողի հետ կնքվել է Ռեեստրի վարման պայմանագիր: Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգի անդամների, ինչպես նաև առցանց եղանակով գրանցված ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի ռեեստրը կարող է վարել նաև ուղղակիորեն (առանց Հաշվի օպերատորի միջնորդության): Այդ դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի և թողարկողի իրավահարաբերությունների վրա տարածվում են սույն գլխով Հաշվի օպերատորի և թողարկողի նկատմամբ սահմանված պահանջները՝ հաշվի առնելով դրանց կիրառելիության հնարավորությունները:

118. Եթե Թողարկողն ունի Կենտրոնական դեպոզիտարիայի հետ առանց Հաշվի Օպերատորի միջնորդության կնքված Ռեեստրի վարման պայմանագիր, ապա Ռեեստրի վարմամբ պայմանավորված բոլոր ծառայություններից օգտվելու համար Թողարկողը պետք է Կենտրոնական դեպոզիտարիայի հետ վերակնքի Ռեեստրի վարման պայմանագիրը Հաշվի Օպերատորի միջնորդությամբ: Ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքվում է նաև այն դեպքում, երբ Թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև արդեն իսկ առկա է Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կնքված Ռեեստրի վարման պայմանագիր, սակայն Թողարկողը ցանկություն է հայտնել վերակնքել այդ պայմանագիրը և սպասարկվել մեկ այլ Հաշվի Օպերատորի կողմից կամ դադարեցվել է Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորի կարգավիճակը, կամ Թողարկողը Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կնքում է այնպիսի արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագիր, որոնց Ռեեստրը՝ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա, նախկինում վարվել է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

119. Եթե Թողարկողը թողարկել և/կամ թողարկում է մեկից ավելի տեսակի (դասի) այնպիսի արժեթղթեր, որոնց համար օրենքով և/կամ թողարկման պայմաններով նախատեսված է դրանց սեփականատերերի ռեեստրների վարում, ապա Կենտրոնական դեպոզիտարիան Ռեեստրի վարմամբ պայմանավորված ծառայություններն այդ Թողարկողին մատուցում է միևնույն Հաշվի Օպերատորի միջնորդությամբ և պայմանով, որ Թողարկողը Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կվերակնքի նաև Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա Կենտրոնական դեպոզիտարիայի հետ նախկինում կնքած և գործող Ռեեստրի վարման պայմանագրերը, եթե այդպիսիք կան: Սույն կետում նշված պայմանի կատարումից Թողարկողի

հրաժարվելու դեպքում տվյալ Հաշվի Օպերատորը պետք է հրաժարվի տվյալ Թողարկողի հետ որևէ Ռեեստրի վարման պայմանագիր կնքելուց:

120. Ռեեստրավարման ենթակա յուրաքանչյուր դասի արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագրի կնքման համար Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Թողարկողի պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը և հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ թողարկողների դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).
2) Թողարկողի գործադիր մարմնի լիազորությունները հաստատող փաստաթղթի պատճենը.
3) տեղեկանք արժեթղթերի հավաստագրերի առկայության (տպագրման) մասին.
4) ավարտված և արդյունքներն ամրագրած տեղաբաշխման գործընթացի արդյունքում ձևավորված արժեթղթերի (առկայության դեպքում) սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակները՝ ըստ Կանոնների Հավելված 5-ի, ներառելով նաև տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ: Փաստաթղթային տարբերակը պետք է վավերացված լինի Թողարկողի կնիքով (առկայության դեպքում) և ստորագրված՝ գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից՝ համապատասխան լիազորագրի առկայության դեպքում: Ցուցակը կամ դրան ուղեկցող գրությունը պետք է նաև պարունակի դրույթ, որ տեղեկությունները ներառված են լավագույն իրազեկվածության պայմաններում, իսկ եթե առկա են նաև տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ, ապա ցուցակին կից պետք է ներկայացվեն նաև այդ սահմանափակումների հիմք հանդիսացող փաստաթղթերը կամ դրանց պատճենները.
5) եթե Ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս Թողարկողն իրականացնում է նախկինում տեղաբաշխված արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխում, որի գործընթացը դեռ չի ավարտվել կամ Թողարկողի հետ կնքվում է այնպիսի արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագիր, որոնց տեղաբաշխումը դեռ չի իրականացվել կամ ավարտվել՝ այսինքն տեղաբաշխման ենթակա արժեթղթերի վաճառքի գործընթացը դեռ չի իրականացվել, իրականացվել է մասամբ կամ տվյալ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքները դեռ չեն ամրագրվել, ապա Թողարկողը Հաշվի Օպերատորին տեղեկություններ է ներկայացնում տեղաբաշխվող արժեթղթերի բնութագրիչների (դասը/տեսակը, քանակը, անվանական արժեքը և այլն), տվյալ արժեթղթերի թողարկման որոշման, տեղաբաշխման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ, նկատի ունենալով, որ արժեթղթերի տեղաբաշխման գործառնությունը Համակարգում գրանցվում է Ռեեստրի վարման պայմանագիր կնքելուց հետո՝ Կանոններով սահմանված կարգով.
6) ռեեստրավարման ենթակա արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի (ԱՄՏԾ) և/կամ արժեթղթերի նույնականացնող ծածկագրի (ԱՆԾ) շնորհման հայտ (այսուհետ՝ Հայտ), որը լրացվում և ներկայացվում է՝ համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի շնորհման» կանոնների, կամ տեղեկություններ տվյալ արժեթղթերին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված և գործող ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի վերաբերյալ, եթե այդպիսիք առկա են, և եթե ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի շնորհման և պահպանման պայմաններով նախկինում ներկայացված տեղեկությունները փոփոխված չեն.
7) Թողարկողի գործող կանոնադրության պատճենը, եթե ներկայացված չէ Հաշվի Օպերատորին.
8) Թողարկողի վճարային գործակալի վերաբերյալ տեղեկություններ, որն իրավասու է Թողարկողի անունից կատարելու վճարումներ արժեթղթերի սեփականատերերին (առկայության դեպքում).
9) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված (առկայության դեպքում) այլ լրացուցիչ

փաստաթղթեր:
121. Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դեպքում Թողարկողը չի ներկայացնում սույն գլխի 120. կետի 3) և 4) ենթակետերով սահմանված փաստաթղթերը, սակայն պետք է Հաշվի Օպերատորին տեղեկություններ տրամադրի Կանոնների 239. կետի 4) ենթակետով սահմանված Թողարկողի արժեթղթերի հաշվի առկայության վերաբերյալ՝ առկայության դեպքում նաև տեղեկություններ տրամադրելով այդ հաշվին հաշվեգրված արժեթղթերի վերաբերյալ:
122. Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դեպքում, որպես տեղեկությունների սկզբնաղբյուր, հիմք են ընդունվում Համակարգում առկա տեղեկությունները:
Եթե Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման ժամանակ առկա են Թողարկողին և նրա տվյալ տեսակի (դասի) արժեթղթերի Ռեեստրին վերաբերող և դեռ Համակարգում չգրանցված տեղեկությունների փոփոխություններ կամ Հաշվի Օպերատորը բացահայտում է այդպիսի փոփոխությունների առկայությունը, և Թողարկողը չի ներկայացնում փոփոխությունների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի բացակայության դեպքում՝ նշելով արժեթղթերի դասը) կամ չի վճարում գրանցման համար անհրաժեշտ վճարները, ապա Ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքվում է նշված փոփոխությունների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Թողարկողի կողմից ներկայացնելուց, ինչպես նաև անհրաժեշտ վճարումները կատարելուց հետո, եթե վճարումների վերաբերյալ Հաշվի Օպերատորի և Թողարկողի միջև այլ պայմանավորվածություն առկա չէ:
123. Եթե Թողարկողը տվյալ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ արդեն կնքել (վերակնքել) է Ռեեստրի վարման պայմանագիր, ապա Թողարկողը հետագայում Ռեեստրի վարման պայմանագրեր կնքելիս կարող է տվյալ Հաշվի Օպերատորին չներկայացնել սույն գլխի 121. կետով սահմանված և արդեն ներկայացված տեղեկությունները (փաստաթղթերը)՝ Հաշվի Օպերատորին ներկայացնելով հավաստում առ այն, որ չներկայացվող տեղեկությունները (փաստաթղթերը) փոփոխության չեն ենթարկվել:
124. Հաշվի Օպերատորը հավաստիանալով, որ Թողարկողի կողմից ներկայացված տեղեկություններում առկա չեն անհամապատասխանություններ ու թերություններ, փաստաթղթերը կազմված և հաստատված են պատշաճ կերպով, և որ Թողարկողի կողմից կատարված են տվյալ Հաշվի Օպերատորի իրավական ակտերով սահմանված, իսկ վերակնքման դեպքում՝ նաև Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ նախկին Հաշվի Օպերատորի (Հաշվի Օպերատորի փոփոխության դեպքում) նկատմամբ Կանոններով նախատեսված ծառայությունների հետ կապված դրամական պարտավորությունները, Թողարկողի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում կնքում է Ռեեստրի վարման պայմանագիր:
Եթե նշված պայմանագիրը կնքելիս որևէ փաստաթղթով չի հավաստվում Թողարկողի կողմից ներկայացված փաստաթղթերի կազմը, ապա կազմվում է Թողարկողի կողմից ներկայացված փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտ, որը ստորագրվում և կնքվում է (կնիքի առկայության դեպքում) Հաշվի Օպերատորի և Թողարկողի կողմից:
125. Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ Կանոններով նախատեսված ծառայությունների հետ կապված Թողարկողի ունեցած դրամական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները Հաշվի Օպերատորը կարող է ստանալ Կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքի միջոցով կամ անմիջական հարցման արդյունքում:
Եթե Հաշվի Օպերատորների միջև Կանոններով նախատեսված ծառայությունների հետ կապված Թողարկողի ունեցած դրամական պարտավորությունների ճշտման այլ եղանակի վերաբերյալ համաձայնություն առկա չէ, ապա Հաշվի Օպերատորի փոփոխության դեպքում նախկին Հաշվի Օպերատորի նկատմամբ Թողարկողի՝ սույն կետում նշված, դրամական պարտավորությունները ճշտելու նպատակով, Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման օրը կամ մինչ այդ նախկին Հաշվի Օպերատորի հետ համաձայնեցված օրը, մինչև նշված օրվա ժամը 16<u>00</u>-ը, նոր Հաշվի Օպերատորը՝ նախապես հեռախոսով զգուշացնելուց հետո, ՍիԲիէյՆեթ

համակարգի միջոցով հարցում է ուղարկում Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորին, ինչը ստանալուց հետո վերջինս պարտավոր է մեկ ժամվա ընթացքում նոր Հաշվի Օպերատորին տեղեկություններ տրամադրել իր հանդեպ Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման օրվա դրությամբ Կանոններով նախատեսված ծառայությունների հետ կապված տվյալ Թողարկողի դրամական պարտավորությունների վերաբերյալ: Եթե Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորը սույն պարբերությամբ սահմանված ժամկետում նոր Հաշվի Օպերատորին չի տրամադրում անհրաժեշտ տեղեկությունները, ապա նոր Հաշվի Օպերատորն իրավունք ունի Թողարկողի հետ Ռեեստրի վարման պայմանագիրը կնքել առանց հաշվի առնելու նախկին Հաշվի Օպերատորի նկատմամբ Թողարկողի ունեցած դրամական պարտավորությունները:

126. Կանոնների 124. և 125. կետերով սահմանված դրույթների խախտմամբ Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ նախկին Հաշվի Օպերատորն իրավունք ունեն նոր Հաշվի Օպերատորից պահանջել իրենց նկատմամբ, Կանոններով նախատեսված ծառայությունների հետ կապված, Թողարկողի ունեցած դրամական պարտավորությունների կատարումը:

127. Ռեեստրի վարման պայմանագրի մեկ բնօրինակը, Թողարկողի կողմից ներկայացված (եթե ներկայացումը պարտադիր է) Հայտի բնօրինակը, Հաշվի Օպերատորը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնել Ռեեստրի վարման պայմանագրի կնքման պահից յոթ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ նշված և սույն գլխի 120. կետի 4) և 6) ենթակետերով սահմանված և ներկայացված (եթե ներկայացումը պարտադիր է) փաստաթղթերի էլեկտրոնային մեկական տարբերակները՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ՍիԲիԷյՆեթ համակարգի իրավասու հասցեից:

128. Եթե Թողարկողը Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կնքում է Ռեեստրի վարման պայմանագիր այնպիսի արժեթղթերի համար, որոնց Ռեեստրի վարումը Հաշվի Օպերատորի միջոցով կամ առանց դրա չի իրականացվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, ապա մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի Օպերատորը Ծրագրային համակարգ է մուտքագրում Թողարկողի վերաբերյալ համապատասխան տվյալները, եթե Ծրագրային համակարգում նրա վերաբերյալ տեղեկությունները բացակայում են, իսկ Կենտրոնական դեպոզիտարիան՝ Հաշվի Օպերատորի կողմից համապատասխան տեղեկությունները ստանալուց հետո, Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ համապատասխան տվյալները:

129. Եթե Ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս Թողարկողը՝ Կանոններին համաձայն, Հաշվի Օպերատորին է ներկայացրել սույն գլխի 120. կետի 4) ենթակետով սահմանված անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը, և որի էլեկտրոնային տարբերակը Հաշվի Օպերատորի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի ՍիԲիԷյՆեթ համակարգի միջոցով ուղարկվել է Կենտրոնական դեպոզիտարիային՝ Թողարկողի արժեթղթերը սեփականատերերի (անվանատերերի) արժեթղթերի հաշիվներին հաշվեգրելու համար, ապա Կենտրոնական դեպոզիտարիան անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի էլեկտրոնային տարբերակը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում, սույն կետում նշված ցուցակում ներառված տվյալների հիման վրա, արժեթղթերի սեփականատերերի համար բացում է արժեթղթերի ժամանակավոր հաշիվներ՝ դրանցում հաշվեգրելով համապատասխան քանակի արժեթղթերը, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունները, եթե այդպիսիք կան:

130. Այն դեպքում, երբ Թողարկողի կողմից ներկայացված անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակում ներառված որևէ անձին վերաբերող տեղեկություններում նշված է նաև Ծրագրային համակարգում այդ անձի համար արդեն բացված արժեթղթերի հաշվի համարը կամ տվյալ անձի անձնագրային տվյալները՝ ֆիզիկական անձի դեպքում կամ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի տվյալները՝ իրավաբանական անձի դեպքում, որոնց հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան կարող է նույնականացնել նշված անձի անվամբ Համակարգում առկա արժեթղթերի սեփականատիրոջ

(անվանատիրոջ) հաշիվը, ապա Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերը հաշվեգրում է Համակարգում տվյալ անձի անվամբ բացված արժեթղթերի հաշվին:

131. Ռեեստրի վարման պայմանագրի կնքման պահից երեք աշխատանքային օրվա կամ Թողարկողի հետ համաձայնեցված ավելի երկար ժամկետի ընթացքում, Հաշվի Օպերատորը Թողարկողին անվճար տրամադրում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ:

132. Ռեեստրի վարման ծառայությունների մատուցման և ռեեստրի վարման ծառայության սակագնի հաշվարկման սկիզբ է համարվում Ռեեստրի վարման պայմանագրի կնքման օրը: Եթե Թողարկողն ունի ներդրումային ֆոնդի իրավական կարգավիճակ, ապա ռեեստրի վարման ծառայության սակագնի հաշվարկն ապահովելու նպատակով ֆոնդը (պայմանագրային ֆոնդի դեպքում՝ ֆոնդի կառավարիչը) պարտավոր է յուրաքանչյուր ամսվա, իսկ միջակայքային ֆոնդերի դեպքում՝ եռամսյակի վերջին աշխատանքային օրը Հաշվի օպերատորին ներկայացնել տվյալ օրվա համար ֆոնդի փայերի հաշվարկային արժեք: Հաշվի օպերատորը պարտավոր է ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ հաշվարկային արժեքը մուտքագրել Համակարգ:

133. Ռեեստրի վարման պայմանագրի կնքումը (վերակնքումը) պետք է զուգորդվի տվյալ Հաշվի Օպերատորի հետ Կանոնների 239. կետի 4) ենթակետով սահմանված Թողարկողի արժեթղթերի հաշվի բացումը և սպասարկումն ապահովող պահառության պայմանագրի կնքումով, եթե Թողարկողն ունի հետգնված (ձեռքբերված) և չմարված տվյալ դասի արժեթղթեր (և, մասնավորապես՝ Համակարգում ունի ոչ զրոյական մնացորդով Թողարկողի արժեթղթերի հաշիվ) և եթե Թողարկողը տվյալ Հաշվի Օպերատորի հետ դեռ չի կնքել նման պայմանագիր: Եթե Թողարկողը սույն կետում սահմանված հանգամանքների առկայության դեպքում հրաժարվում է տվյալ Հաշվի Օպերատորի հետ կնքել նշված արժեթղթերի պահառության պայմանագիրը, ապա Հաշվի Օպերատորը պետք է մերժի նաև Ռեեստրի վարման պայմանագրի կնքումը:

134. Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրի կնքման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի Օպերատորը Թողարկողի համար բացում է Թողարկողի արժեթղթերի հաշիվ, եթե Ծրագրային համակարգում տվյալ Թողարկողի համար առկա չէ տվյալ Հաշվի Օպերատորի միջոցով բացված թողարկողի արժեթղթերի հաշիվ ակտիվ կարգավիճակով: Ընդ որում, մինչև Թողարկողի արժեթղթերի հաշվի բացումը Հաշվի Օպերատորը ստուգում է Ծրագրային համակարգում տվյալ Թողարկողի արժեթղթերի հաշվի առկայությունը ժամանակավոր հաշվի կարգավիճակով: Առկայության դեպքում Կանոններով սահմանված կարգով այն վերաբացվում է:

135. Հաշվի Օպերատորի միջնորդությամբ Թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված Ռեեստրի վարման պայմանագրի (պայմանագրերի) վերակնքման դեպքում նախկինում կնքված Ռեեստրի վարման և, առկայության դեպքում՝ Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրերը համարվում են լուծված նոր Ռեեստրի վարման պայմանագրի (պայմանագրերի) վերակնքման պահից:

Սույն կետում նշված պայմանագրերի լուծվելու դեպքում պայմանագրերի կողմերի ունեցած ժամկետանց բոլոր պարտավորությունները շարունակում են պահպանել իրենց ուժը մինչև դրանց ամբողջական կատարումը:

136. Կենտրոնական դեպոզիտարիան Հաշվի Օպերատորի միջնորդությամբ Ռեեստրի վարման պայմանագրի կնքման կամ վերակնքման արդյունքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ Հաշվի Օպերատորին տալիս է տվյալ Թողարկողին սպասարկելու հասանելիություն, եթե արդեն տրված չէ, իսկ Հաշվի Օպերատորի փոխվելու դեպքում միաժամանակ արգելափակում է նախկին Հաշվի Օպերատորի՝ Թողարկողին սպասարկելու հասանելիությունը և ծանուցում վերջինիս տվյալ Թողարկողի հետ Ռեեստրի վարման և Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրերի լուծման վերաբերյալ: Եթե Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման ժամանակ Թողարկողի համար բացվել է Թողարկողի արժեթղթերի նոր հաշիվ,

ապա Կենտրոնական դեպոզիտարիան, երեք աշխատանքային օրվա ընթացքում, նախկին Հաշվի Օպերատորին տեղեկացնում է նաև Թողարկողի նոր բացված արժեթղթերի հաշվի համարի վերաբերյալ:
137. Ծանուցումը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում նախկին Հաշվի Օպերատորը պարտավոր է փակել իր կողմից բացված Թողարկողի արժեթղթերի հաշիվը՝ եթե այդ հաշիվն ունի զրոյական մնացորդ: Եթե Թողարկողի արժեթղթերի հաշվի մնացորդը զրոյական չէ, ապա նախկին Հաշվի Օպերատորը պարտավոր է Թողարկողի արժեթղթերի նոր բացված հաշվի համարի վերաբերյալ տեղեկացումը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ հաշվում առկա հետգնված կամ ձեռք բերված արժեթղթերի պորտֆելը փոխանցել տեղեկացման մեջ նշված արժեթղթերի հաշվին և փակել իր կողմից բացված Թողարկողի արժեթղթերի հաշիվը:

## Գլուխ 17. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնություններ

138. Արժեթղթերի տեղաբաշխման գործառնությունը Համակարգում գրանցվում է արժեթղթերի առաջնային տեղաբաշխման կամ լրացուցիչ տեղաբաշխման գործառնությունների ձևով:
139. Արժեթղթերի տեղաբաշխման գործառնությունը Համակարգում գրանցելու համար անհրաժեշտ է, որ Թողարկողն ունենա Կենտրոնական դեպոզիտարիայի հետ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ (Կանոններով սահմանված դեպքում՝ առանց Հաշվի Օպերատորի միջնորդության) կնքված տվյալ արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագիր, և Հաշվի Օպերատորին (Կենտրոնական դեպոզիտարիային) ներկայացնի արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) որոշման պատճենը, ինչպես նաև արժեթղթերի տեղաբաշխման կարգը, պայմանները և ժամկետները սահմանող փաստաթղթի պատճենը, եթե նշված տեղեկությունները ներառված չեն արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) որոշման մեջ:
140. Տեղաբաշխվող արժեթղթերը Համակարգում կարող են ներառվել միայն Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերի շնորհման» կարգի համաձայն դրանց շնորհված ԱՆԾ-ի կամ ԱՄՏԾ-ի հիմքով:
Լրացուցիչ կամ նոր տեսակի բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո, Թողարկողին և դրա արժեթղթերին վերաբերող տեղեկությունների փոփոխության, ինչպես նաև տեղաբաշխված արժեթղթերին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ԱՄՏԾ-ի շնորհման (եթե տվյալ արժեթղթերին այն դեռևս շնորհված չէ) նպատակով, Թողարկողը, իրեն սպասարկող Հաշվի Օպերատորի միջնորդությամբ, պետք է Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնի բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների պաշտոնապես ամրագրումը հավաստող, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերիի շնորհման» կարգով սահմանված փաստաթղթերը: Արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների պաշտոնապես ամրագրումը հավաստող փաստաթուղթը չի ներկայացվում այն դեպքում, երբ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվել է Կարգավորվող շուկայի օպերատորի առաջնային տեղաբաշխման հարթակում:
141. Լրացուցիչ կամ նոր դասի (տեսակի) բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում, մինչև այդ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների պաշտոնապես ամրագրումը հավաստող փաստաթղթերը Թողարկողի կողմից իրեն սպասարկող Հաշվի Օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացման հաջորդ օրը, Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգում սահմանափակում է տեղաբաշխված (ձեռք բերված) բաժնետոմսերով գործառնություն իրականացնելու (ձայնի իրավունք տվող արժեթղթերի դեպքում՝ նաև ձայնի իրավունքի մասին տեղեկատվության տրամադրման) հնարավորությունը:
142. Կենտրոնական դեպոզիտարիան իր ինտերնետային կայքում հրապարակում է տեղեկություններ 141. կետում նշված սահմանափակումների կիրառման և դադարեցման վերաբերյալ:
143. Կանոնների 141. կետում սահմանված դեպքում և ժամանակահատվածում Հաշվի

Օպերատորներին արգելվում է սահմանափակման ներքո գտնվող բաժնետոմսերի փոխանցման կամ արժեթղթերի նկատմամբ իրավունքների փոփոխման հանձնարարականների ընդունումը կամ կատարումը:

144. Եթե թողարկողն իրականացնում է նոր դասի արժեթղթերի տեղաբաշխում, որի նպատակով կնքել է ռեեստրի վարման պայմանագիր և տվյալ արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) համար սահմանված ժամկետներում Համակարգում չի գրանցվել տվյալ արժեթղթերի՝ Հաշվետիրոջ հաշվում ամրագրման որևէ գործառնություն, ապա տվյալ դասի արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է՝ Թողարկողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

145. Եթե Թողարկվող արժեթղթերի տեղաբաշխումը նախատեսվում է իրականացնել Կարգավորվող շուկայի արժեթղթերի տեղաբաշխման համակարգով, ապա Թողարկողի հանձնարարականի հիման վրա Հաշվի Օպերատորը բացում է տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվ, որում տեղաբաշխման ենթակա արժեթղթերի ծավալը հաշվեգրվում է Կարգավորվող շուկայում տեղաբաշխման իրականացման առնվազն նախորդ օրը՝ Թողարկողի հանձնարարականի և Կարգավորվող շուկայի օպերատորի արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշման պատճենի հիման վրա: Թողարկողի հանձնարարականում պետք է նշվի արժեթղթերի տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները կամ դրանց որոշման կարգը:

146. Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից ներկայացված ծանուցման հիման վրա Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերից տարբերվող տարբերակիչ ծածկագիր ունեցող՝ տեղաբաշխման ենթակա արժեթղթերի համար Ծրագրային համակարգում ապահովում է առևտրային արգելադրում կատարելու հնարավորություն, որը դադարեցվում է Կարգավորվող շուկայում տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո՝ մինչև տվյալ արժեթղթերի՝ Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրումը:

147. Կարգավորվող շուկայի արժեթղթերի տեղաբաշխման համակարգով արժեթղթերի տեղաբաշխումն ապահովելու համար տեղաբաշխվող արժեթղթերի հաշվին հաշվեգրված արժեթղթերը պետք է Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում առևտրային արգելադրման ենթարկվեն տեղաբաշխումն իրականացնող ԿՇՀԱԱ-ի կողմից:

148. Կարգավորվող շուկայի արժեթղթերի տեղաբաշխման համակարգի միջոցով արժեթղթերի ձեռք բերման դեպքում գործարքի միջնորդ կամ մասնակից ԿՇՀԱԱ-ները պետք է անմիջապես իրականացնեն ձեռք բերված արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցում:

149. Եթե Կարգավորվող շուկայի արժեթղթերի տեղաբաշխման համակարգով արժեթղթերի տեղաբաշխման ավարտի դրությամբ տեղաբաշխվող արժեթղթերի հաշվում դեռ առկա են արգելադրված արժեթղթեր, ապա տվյալ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնող ԿՇՀԱԱ-ն պետք է տեղաբաշխման ավարտի օրը Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնի այդ արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցում:

150. Կարգավորվող շուկայի արժեթղթերի տեղաբաշխման համակարգով արժեթղթերի տեղաբաշխման դեպքում միջոցների դեպոնացումը, ապադեպոնացումը, արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգը և վերջնահաշվարկը կատարվում են Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

151. Եթե արժեթղթերի տեղաբաշխման ավարտի դրությամբ տեղաբաշխվող արժեթղթերի հաշվում դեռ առկա են չտեղաբաշխված (մնացորդային) արժեթղթեր, ապա դրանք չեղարկվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ Հաշվի Օպերատորի ներկայացմամբ:

152. Տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվը փակվում է Թողարկողի պահանջով կամ Հաշվի օպերատորի հետ Ռեեստրի վարման պայմանագրի լուծման դեպքում՝ միաժամանակ չեղարկելով այդ հաշվին առկա չտեղաբաշխված (մնացորդային) արժեթղթերը, եթե այդպիսիք կան:

153. Կարգավորվող շուկայից դուրս իրականացվող արժեթղթերի տեղաբաշխման պարագայում Թողարկողը կամ Թողարկողի հետ կնքած պայմանագրի հիման վրա արժեթղթերը

տեղաբաշխող արժեթղթերի տեղաբաշխման գործարքների արդյունքները Համակարգում ամրագրելու համար այդ արժեթղթերի Ռեեստրի վարումը միջնորդավորող Հաշվի Օպերատորին պետք է ներկայացնի արժեթղթերի տեղաբաշխման հանձնարարականներ, որոնք պետք է պարունակեն հետևյալ պարտադիր տեղեկությունները.

1) Արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Թողարկված արժեթղթերի քանակը.
3) Տեղաբաշխված արժեթղթերի քանակը (արժեթղթերի տեղաբաշխումն ավարտված լինելու դեպքում).
4) Տեղաբաշխված արժեթղթերը ձեռք բերող անձի անուն, ազգանունը (անվանումը), նրա ակտիվ կարգավիճակով արժեթղթերի հաշվի համարը, ձեռքբերած արժեթղթերի քանակը և ձեռքբերման գինը.
5) Նշում արժեթղթերի տեղաբաշխման արդյունքում վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ հաշվին).
6) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող փաստաթղթեր:

154. Արժեթղթերի տեղաբաշխման հանձնարարականները Ծրագրային համակարգ մուտքագրելու արդյունքում Ծրագրային համակարգը ստուգում է հանձնարարականում նշված արժեթղթերի հաշվեհամարների և արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի համապատասխանությունը Ծրագրային համակարգում առկա տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում գործառնությունը Համակարգում գրանցվում է:

155. Արժեթղթերի տեղաբաշխման Հանձնարարականներում և Ծրագրային համակարգում առկա տեղեկատվության համադրության արդյունքում անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Ծրագրային համակարգը մերժում է արժեթղթերի տեղաբաշխման հանձնարարականի կատարումը, որի մասին համապատասխան հաղորդագրությամբ տեղեկացվում է Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորը:

## Գլուխ 18. Կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնություններ

156. Արժեթղթերով հավաստվող իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման մասին Թողարկողի որոշմամբ պետք է հստակ որոշվի այն ամսաթիվը, որի հիման վրա որոշվում են այն անձինք, որոնց վրա տարածվում է այդ որոշումը: Եթե Թողարկողի որոշումից հստակ չի որոշվում սույն կետում նշված ամսաթիվը, ապա որպես այդպիսի ամսաթիվ ընդունվում է Թողարկողի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու ամսաթիվը, եթե այդպիսի ամսաթիվ սահմանված է որոշմամբ, իսկ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթիվ սահմանված չլինելու դեպքում՝ որոշման ընդունման ամսաթիվը:

157. Եթե կորպորատիվ գործողության գրանցման ժամանակ պարզվում է, որ կորպորատիվ գործողության վերաբերյալ Թողարկողի որոշմամբ սահմանված՝ անձանց և/կամ նրանց պատկանող արժեթղթերին վերաբերող տեղեկությունները տարբերվում են Համակարգում առկա տեղեկություններից, ապա Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման համար հիմք են ընդունվում Համակարգում առկա տեղեկությունները: Եթե Թողարկողն իրականացրել է մի քանի կորպորատիվ գործողություններ, ապա դրանցից յուրաքանչյուրով պայմանավորված գործառնությունները Համակարգում գրանցվում են առանձին՝ հաշվի առնելով գործողությունների իրականացման հերթականությունը:

158. Եթե Թողարկողն իրականացնում է արդեն տեղաբաշխված արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխում կամ նոր դասի (տեսակի) արժեթղթերի տեղաբաշխում, ապա մինչև այդ գործընթացի ավարտը (մինչև լրացուցիչ կամ նոր դասի (տեսակի) արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների օրենքով սահմանված կարգով հաստատումը և/կամ կանոնադրության համապատասխան փոփոխությունների գրանցումը՝ եթե արժեթղթերի տեղաբաշխման

արդյունքները պետք է արտացոլվեն կանոնադրությունում) և Համակարգում համապատասխան տեղեկությունների գրանցումը լրացուցիչ կամ նոր տեղաբաշխվող արժեթղթերին առնչվող կորպորատիվ գործողություններով պայմանավորված գործառնությունները (բացառությամբ՝ տվյալ արժեթղթերի չեղյալ համարելու դեպքի) Համակարգում գրանցման ենթակա չեն:

159. Արժեթղթերի անվանական արժեքի փոփոխմամբ, արժեթղթերի համախմբմամբ, արժեթղթերի բաժանմամբ պայմանավորված գործառնությունների գրանցման դեպքում Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում կորպորատիվ գործառության հանձնարարական, որում և որին կից պետք է ներկայացվեն հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

1) Թողարկողի անվանումը և փոխարկվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Կորպորատիվ գործառության նկարագիրը.
3) Արժեթղթերի փոխարկման գործակիցը.
4) Արժեթղթերի քանակը և անվանական արժեքը մինչև փոխարկումը և փոխարկումից հետո.
5) Կորպորատիվ գործողություն իրականացնելու մասին Թողարկողի իրավասու մարմնի որոշման պատճենը.
6) արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի (ԱՄՏԾ) կամ արժեթղթերի նույնականացնող ծածկագրի (ԱՆԾ) շնորհման Հայտ՝ ըստ Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերի շնորհման» կարգի.
7) Թողարկողի կանոնադրության փոփոխությունը (փոփոխված կանոնադրությունը) և պետական գրանցման համապատասխան փաստաթղթերի պատճենները, եթե կորպորատիվ գործողությունը հանգեցրել է Թողարկողի կանոնադրության փոփոխությանը.
8) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող փաստաթղթեր:

160. Թողարկողի որոշմամբ մեկ տեսակի արժեթղթերի մեկ այլ տեսակի արժեթղթերով փոխարկմամբ պայմանավորված գործառնությունների գրանցման համար, ի լրումն Կանոնների 159. կետով սահմանված տեղեկությունների (փաստաթղթերի), Թողարկողը պետք է Հաշվի Օպերատորին ներկայացնի նաև փոխարկումն ապահովող արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) մասին Թողարկողի որոշման պատճենը, եթե նշված փոխարկումն ուղեկցվում է փոխարկումն ապահովող արժեթղթերի տեղաբաշխմամբ և եթե այդ որոշումը դեռ ներկայացված չէ տվյալ Հաշվի Օպերատորին:

Փոխարկելի արժեթղթերի փոխարկման նպատակով լրացուցիչ թողարկվող կամ նոր տեսակի արժեթղթերի տեղաբաշխումն Համակարգում գրանցվում է Կանոնների 17-րդ գլխի համաձայն: Այլ դեպքերում մեկ տեսակի արժեթղթերի մեկ այլ տեսակի արժեթղթերով փոխարկումը կատարվում է փոխարկվող արժեթղթերի մարման և տեղաբաշխվող արժեթղթերի հաշվեգրման միջոցով:

161. Թողարկողի վերակազմավորմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունները Համակարգում գրանցվում են Թողարկողի վերաբերյալ տեղեկությունների փոփոխությամբ, եթե Թողարկողի վերակազմավորման ընթացքում տեղի չի ունեցել արժեթղթերի անվանական արժեքի և/կամ քանակի փոփոխություն:

Եթե Թողարկողի վերակազմավորման ընթացքում նաև տեղի է ունեցել արժեթղթերի անվանական արժեքի և/կամ քանակի փոփոխություն, ապա Համակարգում գրանցվում են նաև այդ կորպորատիվ գործողությունները:

162. Թողարկողի միացման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունները գրանցելու համար ի լրումն Կանոնների 159. կետով սահմանված տեղեկությունների, միացման արդյունքում դադարած Թողարկողի իրավահաջորդ հանդիսացող Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում վերակազմակերպման արդյունքում դադարած ընկերության վերաբերյալ պետական գրանցման մարմնի կողմից տրված

տեղեկանքի պատճենը:
163. Թողարկողի առանձնացման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունները Համակարգում գրանցելու համար, ի լրումն Կանոնների 159. կետով սահմանված տեղեկությունների (փաստաթղթերի), վերակազմակերպվող Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված ընկերությունների պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենները:
164. Թողարկողի միաձուլման և բաժանման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունները Համակարգում գրանցվում են վերակազմակերպման արդյունքում դադարած ընկերությունների իրավահաջորդ հանդիսացող Թողարկողի (թողարկողների) կողմից Հաշվի Օպերատորի միջնորդությամբ Ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս, որի ժամանակ, ի լրումն սույն կանոնների 120. և 159. կետերով սահմանված տեղեկությունների (փաստաթղթերի), իրավահաջորդ հանդիսացող Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում վերակազմակերպման արդյունքում դադարած ընկերությունների (ընկերության) վերաբերյալ պետական գրանցման մարմնի կողմից տրված տեղեկանքները (տեղեկանքը):
165. Եթե բաժանման, միացման կամ միաձուլման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում դադարած և իրավահաջորդ հանդիսացող Թողարկողները չեն սպասարկվել (սպասարկվում) նույն Հաշվի Օպերատորի կողմից, ապա սույն կետում նշված վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունները Համակարգում գրանցելիս իրավահաջորդ Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորը պետք է մինչև գործողության գրանցումը սույն կանոններով սահմանված կարգով պարզի դադարած ընկերությունների ունեցած պարտքերը Հաշվի օպերատորների նկատմամբ և դրանց բացակայության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիային տեղեկություններ տրամադրի դադարած Թողարկողների վերաբերյալ՝ ներկայացնելով նաև վերակազմակերպման արդյունքում դադարած ընկերությունների (ընկերության) վերաբերյալ պետական գրանցման մարմնի կողմից տրված տեղեկանքները (տեղեկանքը): Նշված տեղեկությունների հիմքով Կենտրոնական դեպոզիտարիան արգելափակում է դադարած Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորի՝ այդ Թողարկողին սպասարկման հասանելիությունը՝ անհրաժեշտության դեպքում այն փոխանցելով իրավահաջորդ Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորին, միաժամանակ սպասարկման հասանելիության դադարեցման, ինչպես նաև դադարած Թողարկողի հետ կնքած պայմանագրերի լուծման մասին տեղեկացնում է դադարած Թողարկողին սպասարկած Հաշվի Օպերատորին՝ ներկայացնելով նաև սպասարկված Թողարկողի դադարման վերաբերյալ պետական գրանցման մարմնի կողմից տրված տեղեկանքը: Եթե սույն կետով սահմանված պարտքերն առկա են, ապա հաջորդիվ գործողությունները պետք է կատարվեն միայն պարտքերի մարումից հետո:
166. Կորպորատիվ գործողության իրականացման արդյունքում կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի (այդ թվում բաժնետոմսերի) առաջացման դեպքում դրանք ենթակա են Թողարկողի կողմից հետգնման ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում: Նշված դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան՝ Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորի ներկայացմամբ, իրականացնում է առաջացած կոտորակային արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) հաշիվներից հետգնման ենթակա կոտորակային արժեթղթերի փոխանցումը Թողարկողի արժեթղթերի հաշվին: Անվանատերերի հաշիվներում հաշվառվող կոտորակային արժեթղթերը փոխանցելիս Կենտրոնական դեպոզիտարիան հիմք է ընդունում անվանատերերից ստացված տեղեկությունները, որոնք անվանատերերը պարտավոր են անմիջապես տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիային՝ վերջինիս պահանջով:
166.1. Այն դեպքում, երբ կոտորակային արժեթղթերը գրավադրված են և գրավառուի արժեթղթերի հաշիվը սույն կանոնների իմաստով ունի ակտիվ հաշվի կարգավիճակ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան 166. կետով սահմանված գործողությունները կատարելուց

առաջ նամակ է ուղարկում Գրավառուի՝ Կենտրոնական Դեպոզիտարիայում գրանցված հասցեին գրավադրված կոտորակային արժեթղթերի գրավադրման դադարեցման և հետգնման մասին: Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի գրավատու կողմին տեղեկացնել սույն կետով սահմանված տեղեկացումը գրավառուին ուղարկելու մասին:

167. Կորպորատիվ գործողության արդյունքում Համակարգում առաջացած արժեթղթերը կլորացվում են ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ: Ընդ որում, եթե կլորացման արդյունքում կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի քանակային հանրագումարը չի հավասարվում թողարկողի կորպորատիվ գործողության մասին որոշմամբ սահմանված քանակին, ապա Հաշվի օպերատորն իրավունք ունի այդ շեղումը հարթող փոփոխություն կատարել Համակարգում՝ ավելացնելով ամենափոքր քանակով արժեթղթեր ունեցող հաշվետիրոջ հաշվում առկա կոտորակային արժեթղթերը կամ նվազեցնելով ամենամեծ քանակով արժեթղթեր ունեցող հաշվետիրոջ հաշվում առկա կոտորակային արժեթղթերը՝ Համակարգում արժեթղթերի քանակը թողարկողի որոշմամբ սահմանված քանակին համապատասխանեցնելու նպատակով:

168. Եթե ՀՀ օրենսդրությամբ կամ Թողարկողի որոշմամբ կոտորակային արժեթղթերի հետգնման ժամկետներ սահմանված չեն, ապա Կենտրոնական դեպոզիտարիան կոտորակային արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) հաշիվներից հետգնման ենթակա կոտորակային արժեթղթերի փոխանցումը Թողարկողի արժեթղթերի հաշվին իրականացնում է համապատասխան կորպորատիվ գործողության գրանցման ժամանակ՝ Հաշվի Օպերատորի ներկայացմամբ: Այդ դեպքում կոտորակային արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) հաշիվներից հետգնման ենթակա կոտորակային արժեթղթերի փոխանցումը Թողարկողի արժեթղթերի հաշվին կարող է իրականացվել նաև Հաշվի Օպերատորի կողմից, եթե արժեթղթերի հաշիվներն ունեն ակտիվ կարգավիճակ և սպասարկվում են Հաշվի օպերատորի կողմից:

169. Հաշվի օպերատորը պարտավոր է իր միջոցով սպասարկվող կոտորակային արժեթղթերի սեփականատերերին (անվանատերերին) վերջիններիս դիմումի հիման վրա անվճար տեղեկացնել կորպորատիվ գործողության արդյունքում կոտորակային արժեթղթերի հետգնման վերաբերյալ:

170. Թողարկողին սպասարկող Հաշվի Օպերատորը պարտավոր է Թողարկողի պահանջով նրան տրամադրել կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի սեփականատերեր (անվանատերեր) հանդիսացած անձանց ցուցակը՝ նշելով նրանց պատկանող կոտորակային արժեթղթերի քանակը:

171. Եթե կորպորատիվ գործողությամբ նախատեսված է Հաշվետիրոջ կողմից արժեթղթերի փոխանցում Թողարկողի արժեթղթերի հաշվին, ապա այդ նպատակով Հաշվետերը փոխանցվող արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում հանձնարարական, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

1) Թողարկողի անվանումը և փոխանցվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Արժեթղթերի այն հաշվի համարը, որի վրա հաշվեգրված են փոխանցման ենթակա արժեթղթերը.
3) Թողարկողի արժեթղթերի հաշվի համարը.
4) փոխանցվող արժեթղթերի քանակը.
5) փոխանցվող արժեթղթերի օտարման պայմանագրային գինը.
6) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող փաստաթղթեր:

172. Արժեթղթերի մարմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունները գրանցելու համար Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում հանձնարարական, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

1) Թողարկողի անվանումը և մարվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Արժեթղթերի մարման հիմքերի նկարագրությունը.

3) Մարման ենթակա արժեթղթերի քանակը կամ դրա որոշման կարգը.
4) Ներդրումային ֆոնդի փայերի մարման դեպքում՝ հաշվետերերի արժեթղթերի հաշվի համարները և յուրաքանչյուր հաշվից մարման ենթակա արժեթղթերի քանակը, եթե տեղի է ունենում միաժամանակ ոչ բոլոր Հաշվետերերին պատկանող փայերի մարում.
5) Արժեթղթերի մարման ամսաթիվը.
6) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող փաստաթղթեր:

Պարտատոմսերի մարման ամսաթիվը մարման օրվա (եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա) ժամը 9:00-ի դրությամբ Համակարգում մուտքագրված լինելու դեպքում այդ արժեթղթերի մարման օրը դրանք Հաշվետերերի արժեթղթերի հաշիվներում մարվում են ինքնաշխատ կերպով: Ընդ որում, եթե պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 17:00-ից հետո Համակարգում առկա են տվյալ պարտատոմսերի առևտրային արգելադրումներ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի ինքնուրույն չեղարկել դրանք:

173. Արժեթղթերի չեղարկման կորպորատիվ գործողությունը գրանցելու համար Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում հանձնարարական, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

1) Թողարկողի անվանումը և չեղարկվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Արժեթղթերը չեղարկելու հիմքերի նկարագրությունը.
3) Չեղարկման ենթակա արժեթղթերի քանակը կամ դրա որոշման կարգը.
4) Արժեթղթերը չեղարկման ամսաթիվը.
5) Հաշվի Օպերատորի կանոններով (առկայության դեպքում) սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող փաստաթղթեր:

174. Թողարկողի կողմից կորպորատիվ գործողության դեպքում Համակարգում համապատասխան գրառումները կատարվում են Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բոլոր գրանցված սեփականատերերի (անվանատերերի) արժեթղթերի հաշիվներում՝ ըստ նրանց պատկանող (նրանց անվամբ գրանցված) Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակի համամասնության, եթե այլ բան չի բխում կորպորատիվ գործողության էությունից:

175. Թողարկողի արժեթղթերի հաշվում առկա հետգնված (ձեռքբերված) արժեթղթերի մարումն (չեղյալ համարումը) իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիան՝ Հաշվի Օպերատորի ներկայացմամբ:

176. Կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնությունը Համակարգում գրանցվում է Թողարկողից համապատասխան փաստաթղթերը և տեղեկությունները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե կորպորատիվ գործողության գրանցման հանձնարարականով այլ՝ ավելի երկար, ժամկետ սահմանված չէ կամ այլ բան չի բխում կորպորատիվ գործողության էությունից:

## Գլուխ 19. Ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխումը

177. Ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխությունները կատարվում են Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ՝ Կանոններով սահմանված դեպքերում, առանց Հաշվի Օպերատորի միջնորդության Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացված Թողարկողի դիմումի (հանձնարարականի), դատարանի որոշման, ինչպես նաև օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և Կանոններով սահմանված այլ հիմքերով:

178. Թողարկողը պարտավոր է Թողարկողի լուծարման վերաբերյալ որոշման ընդունման կամ Թողարկողի նկատմամբ սնանկացման գործընթաց սկսվելու կամ դադարեցնելու, Թողարկողի անվանման, պետական գրանցման տեղեկությունների, գրանցման հասցեի կամ գտնվելու վայրի, կոնտակտային տվյալների, Թողարկողի անունից հանձնարարականներ կամ հարցումներ ներկայացնելու լիազորություններ ունեցող անձի, Թողարկողի կողմից թողարկված

(տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ Համակարգում առկա տեղեկությունների փոփոխության, ինչպես նաև Ռեեստրի վարման շրջանակներում Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացված տեղեկություններում անճշտությունների կամ թերությունների (բացթողումների) բացահայտման դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին (Կենտրոնական դեպոզիտարիային, եթե Ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված չէ)՝ ներկայացնելով փոփոխությունները հավաստող կամ անճշտությունները և թերություններն ուղղելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:
Ռեեստրի պատշաճ վարման համար անհրաժեշտ այլ տեղեկությունները և փաստաթղթերը Թողարկողը պետք է ներկայացնի ողջամիտ ժամկետներում:
179. Սույն գլխի 178. կետով նախատեսված տեղեկությունները (փաստաթղթերը) Թողարկողը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում իրեն սպասարկող Հաշվի Օպերատորի միջնորդությամբ, կամ անմիջականորեն՝ եթե դեռ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ չի վերակնքել Ռեեստրի վարման պայմանագիրը և եթե փոփոխությունները կապված չեն արժեթղթերի տեղաբաշխման կամ կորպորատիվ գործողությունների հետ:
180.Եթե Թողարկողին և նրա արժեթղթերին վերաբերող տեղեկությունների փոփոխությունները հանգեցնում են Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերի շնորհման» կարգի համաձայն նախկինում ներկայացված տեղեկատվության փոփոխության, ապա Թողարկողը Հաշվի օպերատորին պետք է ներկայացնի նաև, համապատասխանաբար, ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի շնորհման Հայտի փոփոխությունը:
181. Թողարկողը՝ Ռեեստրի վարման շրջանակներում բացահայտված անճշտությունների (թերությունների, բացթողումների) կամ Ռեեստրում առկա ոչ արդիական տեղեկատվության պատճառով իր կողմից թողարկված արժեթղթերով վերապահված իրավունքների իրականացման համար հնարավոր խոչընդոտները վերացնելու, և ըստ այդմ՝ Ռեեստրում առկա տեղեկատվությունը արդիական պահելու նպատակով, կարող է իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին, կամ՝ եթե դեռ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ չի վերակնքել Ռեեստրի վարման պայմանագիրը, անմիջականորեն Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնել նաև իր կողմից թողարկված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ժամանակավոր կամ նույնականացման ենթակա հաշիվներին վերաբերող՝ իրեն հայտնի դարձած արդիական տեղեկությունները կամ բացահայտված անճշտությունների ուղղումները:
182. Ռեեստրի վարման շրջանակներում բացահայտված անճշտությունների (թերությունների, բացթողումների) ուղղելու կամ թողարկված արժեթղթերի սեփականատերերին վերաբերող տեղեկատվություննարդիական պահելու նպատակով Թողարկողի կողմից ներկայացված տեղեկությունները Համակարգում չեն գրանցվում, եթե Ռեեստրում առկա տեղեկատվության փոփոխության դիմումը (պահանջը) բավարար հիմնավորված չէ, կամ Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը) ունի հիմնավոր կասկածներ այն մասին, որ տեղեկատվության ուղղումը կամ թարմացումը կարող է հանգեցնել Հաշվետիրոջ, նրան պատկանող արժեթղթերի քանակի կամ նշված արժեթղթերի նկատմամբ երրորդ անձանց գույքային իրավունքների անհիմն փոփոխությանը կամ այդ և արժեթղթերով հավաստված իրավունքների իրականացման անհիմն սահմանափակմանը:
183. Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը, եթե դիմումը ներկայացվել է վերջինիս) մերժում է Թողարկողի դիմումի հիման վրա Ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխությունների վերաբերյալ Համակարգում գրանցումների կատարումը, եթե դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են, չեն համապատասխանում օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի (Հաշվի Օպերատորի) կանոններով սահմանված պահանջներին, կամ առկա են սույն գլխի 182. կետով նախատեսված հիմքերը: Դիմումը մերժելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը) պարտավոր է այդ մասին տեղեկացնել դիմումը ներկայացրած անձին՝ նշելով մերժման պատճառները:
184. Թողարկողի նախաձեռնությամբ Ռեեստրի վարման շրջանակներում Կենտրոնական

դեպոզիտարիային (Հաշվի Օպերատորին) ներկայացված տեղեկություններում անճշտությունների կամ թերությունների (բացթողումների) ուղղումները Համակարգում գրանցելու համար Թողարկողը պետք է վճարի ուղղումների գրանցման համար նախատեսված վճարները՝ սահմանված լինելու դեպքում:

185. Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը՝ իր իրավասությունների շրջանակներում) կարող է իր նախաձեռնությամբ կատարել ուղղումներ Համակարգի գրանցումներում, եթե Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը) բացահայտում է, որ կատարված գրանցումը սխալ է կամ բացակայում է, և եթե գրանցման ուղղումը չի խախտում այլ անձանց իրավունքները: Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի Համակարգում միավորել միևնույն անձի անվամբ բացված ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող մեկից ավելի արժեթղթերի հաշիվները:

Սույն կետում նշված ուղղումների կատարման համար Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը) կարող է հիմք ընդունել նաև Թողարկողի կողմից որևէ անձի (մարմնի) ներկայացված (տրամադրված) տեղեկությունները կամ որևէ իրավասու անձի (մարմնի) կողմից տրամադրված (հրապարակված) և իրավաբանական ուժ ունեցող տեղեկությունները:

186. Հաշվի Օպերատորը, Համակարգում առկա տեղեկությունների փոփոխություններին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իր իրավասությունների շրջանակներում Համակարգում կատարում է Թողարկողից ստացած տեղեկությունների փոփոխությունները և/կամ Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցում տեղեկությունների փոփոխություններին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը, եթե Համակարգում տեղեկությունների փոփոխությունների ամբողջական կամ մասնակի կատարումը գտնվում է Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասության շրջանակներում:

187. Թողարկողի դիմումի հիման վրա Համակարգում գրանցումները կատարվում են կամ մերժվում են համապատասխան դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ու տեղեկությունները ստանալուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան չի բխում Համակարգում համապատասխան գրանցումների կատարման էությունից:

### Գլուխ 20. Համակարգից տեղեկությունների տրամադրումը

188. Համակարգից տեղեկություններ տրամադրվում են ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և ծառայությունների մատուցումը կարգավորող Կենտրոնական դեպոզիտարիայի այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերով, ծավալով և կարգով:

Բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված դեպքերի, երրորդ անձանց հարցման հիման վրա կամ երրորդ անձանց վերաբերող տեղեկություններ Համակարգից չեն տրամադրվում:

189. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից օրենքով և նորմատիվ իրավական ակտերով հրապարակման ենթակա տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական Դեպոզիտարիայի ինտերնետայինկայքում:

190. Համակարգից տեղեկություններ ստանալու իրավունք ունեն.

1) Թողարկողը.
2) Հաշվետերը և նրա լիազորված ներկայացուցիչը.
3) նոտարները.
4) Կենտրոնական բանկը և պետական այլ մարմինները.
5) օրենքով և Կանոններով նախատեսված այլ անձինք:

191. Թողարկողն իրավունք ունի Ռեեստրից տեղեկություններ ստանալ իր իրավասության շրջանակներում իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին տրված գրավոր (թղթային կամ էլեկտրոնային՝ ըստ Հաշվի Օպերատորի հետ պայմանավորվածության) հարցմանը համապատասխան ծավալով՝ հաշվի առնելով Կանոններով սահմանված սահմանափակումները:

192. Հաշվի Օպերատորը Թողարկողի գրավոր հարցման հիման վրա հարցումը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում (կամ հարցման մեջ նշված ավելի երկար ժամկետում), Թողարկողի հետ համաձայնեցված կարգով, Թողարկողին տրամադրում է արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը (այսուհետ՝ սույն գլխում Ցուցակ) հարցման մեջ նշված ամսաթվի դրությամբ:

193. Ռեեստրավարման ենթակա արժեթղթերի այն Թողարկողներին, որոնք Հաշվի Օպերատորի հետ չունեն գործող Ռեեստրի վարման պայմանագիր կամ որոնց Ռեեստրի վարման ծառայությունները կասեցված են, Համակարգից տեղեկություններ (այդ թվում՝ Ցուցակ) չի տրամադրվում:

194. Թողարկողի կողմից ներկայացվող Ցուցակի տրամադրման հարցումը պետք է պարտադիր պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ, ԱՆԾ կամ արժեթղթերի դասը.
2) Ցուցակի կազմման ամսաթիվը.
3) Ամսաթիվը, որի դրությամբ պետք է ներկայացվեն ցուցակում ներառված տեղեկությունները,
4) Ցուցակի տրամադրման ձևը՝ թղթային (փոստով կամ առձեռն) կամ էլեկտրոնային:

195. Ցուցակը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Ֆիզիկական անձ Հաշվետիրոջ անունը, ազգանունը, բնակության վայրը և/կամ հաշվառման հասցեն, իրավաբանական անձ Հաշվետիրոջ՝ անվանումը, գտնվելու վայրը (փոստային հասցեն).
2) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը և սերիան (ֆիզիկական անձանց համար), հարկ վճարողի հաշվառման համարը կամ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը (իրավաբանական անձանց համար).
3) Հաշվետիրոջը պատկանող՝ Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակը և մասնաբաժինը արժեթղթերի ընդհանուր քանակում (տոկոսներով).
4) Հաշվետիրոջ վճարային գործակալի վերաբերյալ տեղեկություններ (ընթացիկ/հաշվարկային հաշվի համար).
5) Համակարգում Հաշվետիրոջ՝ Թողարկողի տվյալ դասի արժեթղթերը ներառող, արժեթղթերի հաշվի համարը.
6) տեղեկություն Հաշվետիրոջ արժեթղթերով հավաստվող ձայնի իրավունքի սահմանափակման վերաբերյալ (առկայության դեպքում).
7) Թողարկողին և Թողարկողի արժեթղթերը նույնականացնող տեղեկություններ.
8) Ցուցակի կազմման ամսաթիվը և ժամը.
9) Ամսաթիվը և ժամը, որի դրությամբ ներկայացված են ցուցակում ներառված տեղեկությունները:

196. Թողարկողի պահանջով Հաշվի Օպերատորը պարտավոր է Թողարկողին տրամադրել Ցուցակում ներառված անվանատիրոջ հաշվին հաշվառված արժեթղթերի սեփականատերերի ցանկը: Եթե անվանատերը տվյալ Հաշվի Օպերատորը չէ, ապա Հաշվի Օպերատորը նշված ցանկը ստանում է Կենտրոնական Դեպոզիտարիայից: Կենտրոնական Դեպոզիտարիան իր հերթին ցանկը ստանում է անվանատիրոջից՝ օրենքով և ենթապահառության պայմանագրով սահմանված կարգով:

197. Հաշվի Օպերատորը՝ Թողարկողի գրավոր հարցումը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում (կամ հարցման մեջ նշված ավելի երկար ժամկետում), Թողարկողին է տրամադրում վերջինիս կողմից թողարկված և տեղաբաշխված արժեթղթերով Համակարգում կատարված գործառնությունների (միայն արժեթղթերի փոխանցումների մասով՝ առանց հիմքերի մասին տեղեկանք կամ Կանոններով նախատեսված այլ տեղեկություններ՝ հարցման մեջ նշված ժամանակահատվածի համար:

198. Հաշվի Օպերատորը մերժում է Թողարկողի հարցմամբ պահանջվող տեղեկությունների

տրամադրումը, եթե Թողարկողի հարցումը չի համապատասխանում Կանոններով սահմանված պահանջներին կամ եթե Թողարկողը չի վճարել կամ հրաժարվում է վճարել տեղեկությունների տրամադրման համար Հաշվի Օպերատորի սակագների մասին կանոններով սահմանված վճարը:

199. Հաշվետերն իրավունք ունի Համակարգից տեղեկություններ ստանալ իր իրավասության շրջանակներում իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին տրված գրավոր հարցմանը համապատասխան ծավալով՝ հաշվի առնելով Կանոններով սահմանված սահմանափակումները:

200. Հաշվի Օպերատորը պարտավոր է Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվը բացելուց (վերաբացելուց) հետո ողջամիտ ժամկետում այդ մասին անվճար ծանուցել (տեղեկացնել) Հաշվետիրոջը՝ նշելով Հաշվի Օպերատորի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ինտերնետային կայքը, Հաշվետիրոջ անունը (անվանումը), Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշվի բացման ամսաթիվը և Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ, եթե այդ տեղեկությունները ներառված չեն արժեթղթերի պահառության պայմանագրում կամ չեն ներկայացվում պայմանագրին կից կամ Հաշվետերը չի հրաժարվել իր՝ արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ ծանուցման ստացման իրավունքից:

201. Հաշվետերն իրավունք ունի գրավոր հրաժարվել իր՝ արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ ծանուցման ստացման իրավունքից:

202. Արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ տեղեկացումը Հաշվետիրոջն է ներկայացվում թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Տեղեկացման եղանակը սահմանվում է Հաշվետիրոջ կողմից՝ Հաշվի Օպերատորին հետ պայմանագրի կնքման ժամանակ:

203. Հաշվետերն իրավունք ունի Համակարգից ստանալ հետևյալ տեղեկությունները.

1) Քաղվածք արժեթղթերի հաշվից, որը ներառում է տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի վերաբերյալ.
2) Հաշվետվություն իր արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ, որը ներառում է տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա բոլոր արժեթղթերի մնացորդի վերաբերյալ.
3) Հաշվետվություն արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ.
4) Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ
5) Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ:

204. Հաշվետերերին, որոնց արժեթղթերի պահառության ծառայությունները կասեցված են կամ որոնք արժեթղթերի ոչ զրոյական մնացորդով տվյալ հաշվի համար Հաշվի Օպերատորի հետ չունեն գործող պահառության պայմանագիր, Կանոնների 203. կետով սահմանված տեղեկությունները չեն տրամադրվում:

205. Արժեթղթերի հաշվից քաղվածքը, ինչպես նաև արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Արժեթղթերի հաշվի համար.
2) Հաշվետիրոջ անուն, ազգանուն, անձնագրի սերիա (առկայության դեպքում) և համար, բնակության և/կամ հաշվառման հասցե՝ ֆիզիկական անձի դեպքում և անվանում, հարկ վճարողի հաշվառման համարը կամ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը, գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝ իրավաբանական անձի դեպքում.
3) Արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը և քանակը, բաժնեմասը՝ տոկոսներով, անվանական արժեքը և արժույթը.
4) Գրավադրված կամ սառեցված արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (դրա բացակայության դեպքում՝ արժեթղթերի դասը) և քանակը.
5) Թողարկողի և Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ ընդհանրացված տեղեկություններ.
6) քաղվածքի (հաշվետվության) կազմման ամսաթիվը և ժամը.
7) ամսաթիվ, որի դրությամբ ներկայացված են քաղվածքում կամ հաշվետվությունում

ներառված տեղեկությունները:

206. Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Արժեթղթերի հաշվի համարը.
2) Հաշվետիրոջ անուն, ազգանուն, անձնագրի սերիա (առկայության դեպքում) և համար, բնակության և/կամ հաշվառման հասցե՝ ֆիզիկական անձի դեպքում և անվանում, հարկ վճարողի հաշվառման համարը կամ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը, գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝ իրավաբանական անձի դեպքում.
3) Հարցման մեջ նշված ժամանակահատվածում արժեթղթերի հաշվով կատարված հարցմամբ պահանջվող գործառնությունները՝ նշելով յուրաքանչյուր գործառնության գրանցման ամսաթիվը և հակիրճ բովանդակությունը.
4) հաշվետվության կազմման ամսաթիվը և ժամը.
5) ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը.
6) գործարքի առարկա արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը և քանակը, անվանական արժեքը և արժույթը (եթե հարցմամբ պահանջվող գործառնությունը հանգեցրել է արժեթղթերի մնացորդի հետ կապված որևէ տեղեկության փոփոխության):

206.1. Կենտրոնական դեպոզիտարիան կարող է Հաշվետիրոջը տրամադրել տեղեկանք իր կողմից թողարկողի կանոնադրական կապիտալում կատարված ներդրման մասին, եթե

1) Դրամական միջոցների փոխանցումը թողարկողին կատարվել է Կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով, կամ
2) Հաշվետերը ներկայացնում է ներդրումը հիմնավորող փաստաթղթեր, որտեղ հստակ նշված են փաստացի կատարման օրը, վճարման չափը, վճարման նպատակը: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան կարող է պահանջել ներդրումը հիմնավորող հավելյալ փաստաթղթեր:

207. Արժեթղթերի սեփականատեր չհանդիսացող, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ գրավի կամ այլ իրավունքներ ունեցող (ունեցած) անձինք իրավունք ունեն «Սակագների մասին կանոններով» սահմանված վճարը վճարելու պայմանով Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիայից ստանալ ծառայողական գաղտնիք չհամարվող տեղեկություններ: Ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունները տրամադրվում են միայն դրանք ստանալու իրավասություն ունեցող անձանց:

208. Կանոնների 205, 206. և 207. կետերով սահմանված տեղեկությունները տրամադրվում է համապատասխան գրավոր հարցման ստացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

209. Սույն գլխով սահմանված գործառնությունների մասին հաշվետվությունը կամ տեղեկանքը տրվում է այն ժամանակահատվածի համար, որը նշված է գրավոր հարցման մեջ, և որը չի գերազանցում և ներառում է գործառնությունների առարկա հանդիսացած արժեթղթերի վերաբերյալ Համակարգում տեղեկությունների առկայության ժամանակահատվածը:

210. Հաշվի Օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան սույն գլխով սահմանված տեղեկությունները տրամադրում է միայն այդ տեղեկությունները ստանալու իրավունք ունեցող անձանց, այդ թվում՝ այն լիազորված ներկայացուցիչներին, որոնց լիազորությունների գործողության մեջ լինելու փաստի մասին առկա են համապատասխան տեղեկություններ Համակարգում կամ ներկայացված այլ փաստաթղթերում:

211. Հաշվի Օպերատորը Հաշվետիրոջը տարեկան մեկ անգամ անվճար, ոչ ուշ, քան մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը, էլեկտրոնային եղանակով տրամադրում է հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ իր արժեթղթերի հաշվի մնացորդի, ինչպես նաև իր արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն, եթե հաշվետերը նման տեղեկության ստացման գրավոր (թղթային կամ էլեկտրոնային) պահանջ է ներկայացրել, և տրամադրել է գործող էլեկտրոնային փոստի հասցե:

212. Սույն գլխով սահմանված տեղեկությունները վավերացվում է՝ Հաշվի Օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի՝ համապատասխան իրավասություն ունեցող անձի ստորագրությամբ, և կնքվում է Հաշվի Օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով կամ դրոշմակնիքով (առկայության դեպքում): Նշված տեղեկություններն էլեկտրոնային եղանակով տրամադրելու և վավերացնելու վերաբերյալ սույն կետով սահմանված պահանջները պահպանելու անհնարինության կամ տեղեկությունների ստացման վերաբերյալ ստացող կողմի հետ այլ պայմանավորվածության առկայության դեպքում Հաշվի Օպերատորը պարտավոր է տեղեկությունները տրամադրել էլեկտրոնային կապի այնպիսի միջոցներով, որոնք կհավաստեն նշված տեղեկությունները Հաշվի Օպերատորի կողմից ներկայացնելու փաստը:

213. Նոտարն օրենքով նախատեսված դեպքերում իրավունք ունի Համակարգից տեղեկություններ ստանալ իր իրավասության շրջանակներում տրված հարցմանը համապատասխան ծավալով:

214. Նոտարական հարցումը պետք է հասցեագրվի Կենտրոնական դեպոզիտարիային:
Եթե նոտարական հարցումն ուղղվում է Հաշվի Օպերատորին, ապա Հաշվի Օպերատորը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում նշված հարցումը տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիային:

215. Կենտրոնական դեպոզիտարիան նոտարական հարցման ստացման արդյունքում Համակարգում ստուգում է հարցմամբ պահանջվող տեղեկությունը և երեք աշխատանքային օրվա ընթացքում նոտարին կամ նոտարական հարցման մեջ նշված անձին տրամադրում է նոտարական հարցման պատասխանը:

216. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան նոտարական հարցումը ստացել է Հաշվի Օպերատորի միջնորդությամբ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան կարող է նոտարական հարցման պատասխանը տրամադրել տվյալ Հաշվի Օպերատորի միջոցով:

217. ՀՀ Կենտրոնական բանկը և պետական այլ մարմինները Համակարգից տեղեկություններ ստանալու իրավունք ունեն միայն իրենց իրավասության շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

218. ԴԱՀԿ ծառայության և պետական այլ մարմինների կողմից Հաշվետիրոջ վերաբերյալ Համակարգից տեղեկություններ ստանալու համար տրված հարցումներին Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանում է հետևյալ կարգով.

1) Եթե Կենտրոնական դեպոզիտարիային թղթային կամ էլեկտրոնային ձևով ներկայացված հարցման մեջ հարցվող անձի անվան (անվանման) և անձը հաստատող փաստաթղթի (պետական գրանցման փաստաթղթի) վերաբերյալ տվյալները ամբողջությամբ համապատասխանում են Համակարգում առկա Հաշվետերերից որևէ մեկի արժեթղթերի հաշվում առկա համապատասխան տվյալներին, ապա Կենտրոնական դեպոզիտարիան, տվյալ անձանց միանշանակ նույնականացնելով, տրամադրում է տվյալ Հաշվետիրոջ վերաբերյալ համապատասխան հարցմամբ պահանջվող տեղեկությունները՝ Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացված, տվյալ հարցմամբ պահանջվող տեղեկություններին համապատասխան:
2) Եթե Կենտրոնական դեպոզիտարիային թղթային կամ էլեկտրոնային ձևով ներկայացված հարցման մեջ հարցվող անձի անվան (անվանման) և անձը հաստատող փաստաթղթի (պետական գրանցման փաստաթղթի) վերաբերյալ տվյալները բացակայում են կամ չեն համապատասխանում Համակարգում առկա Հաշվետերերից որևէ մեկի արժեթղթերի հաշվում առկա համապատասխան տվյալներին (կամ այդ տվյալների մի մասն առկա չէ Համակարգում), ապա հարցման պատասխանում Կենտրոնական դեպոզիտարիան նշում է, որ հարցվող անձի տվյալներով Հաշվետեր Համակարգում գրանցված չէ:

219. Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգից տեղեկությունները Կենտրոնական բանկին և պետական այլ մարմիններին է տրամադրում՝ վերջիններիս կողմից ներկայացված հարցումները ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ԴԱՀԿ ծառայությունից ստացված հարցումների դեպքում՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

## Գլուխ 21. Համակարգում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը

220. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել հայտարարություն Համակարգում հաշվետու թողարկողի հանձնարարականի (պահանջի) արդյունքում կատարված գործառնությունների մասին, որոնք վերաբերում են Թողարկողի մասին ընդհանրացված տեղեկություններին, Թողարկողի արժեթղթերի (այդ թվում՝ լրացուցիչ թողարկված) թողարկմանը և տեղաբաշխմանը, Թողարկողի կողմից իրականացվող կորպորատիվ գործողություններին:

Նշված հայտարարությունը հրապարակվում է Կանոններով սահմանված կարգով Թողարկողի հանձնարարականը (պահանջը) Հաշվի Օպերատորի կողմից ստացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կենտրոնական դեպոզիտարիան սույն կետում նշված հայտարարության հրապարակումը կարող է կիրառել նաև այլ թողարկողների նկատմամբ:

221. Հաշվի Օպերատորը 220. կետով սահմանված գրավոր հանձնարարականը (պահանջը) ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է այդ մասին տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիային գրավոր կամ ՍիԲիէյՆեթ իրավասու էլեկտրոնային հասցեով՝ ներկայացնելով Թողարկողից ստացված դիմումի (հանձնարարականի) պատճենը:

Անհրաժեշտության դեպքում Հաշվի Օպերատորը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի պահանջով վերջինիս ներկայացնել նաև Թողարկողից ստացված և դիմումին (հանձնարարականին) առնչվող լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

222. Կանոնների 220. կետով նախատեսված հայտարարությունը պարունակում է Թողարկողի ֆիրմային անվանումը, ՀՎՀՀ կամ պետական գրանցման վերաբերյալ այլ տեղեկություն, գտնվելու վայրը ( փոստային հասցեն), գործառնության նկարագրությունը, գործառնության կատարման ամսաթիվը (հնարավորության դեպքում) և սույն գլխով նախատեսված այլ տեղեկություններ:

223. Արժեթղթերի (այդ թվում՝ լրացուցիչ թողարկված) գրանցման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) գրանցված արժեթղթի տեսակը (դասը).
3) արժեթղթերի անվանական արժեքը (առկայության դեպքում) և արժույթը.
4) արժեթղթերի քանակը:

223.1. Ընդ որում, եթե արժեթղթերի տեղաբաշխման ժամանակահատվածը գերազանցում է 1 (մեկ) աշխատանքային օրը, ապա Հաշվի օպերատորը սույն գլխով սահմանված տեղեկատվությունը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում Համակարգում տեղաբաշխման վերջին օրվանից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

224. Արժեթղթերի անվանական արժեքի փոփոխման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) արժեթղթի նախկին և նոր անվանական արժեքները:

225. Արժեթղթերի փոխարկման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) փոխարկվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) այն արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն, որոնց փոխարկվում են արժեթղթերը, եթե դրանք գրանցված են Համակարգում.
3) Սույն կետի 2) ենթակետում նշված արժեթղթերի թողարկողի անվանումը, եթե Թողարկողը փոխարկվող արժեթղթի թողարկողը չէ.
4) փոխարկման գործակիցը:

226. Արժեթղթերի չեղարկման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) չեղարկվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) չեղարկվող արժեթղթերի քանակը:

227. Կենտրոնական դեպոզիտարիան սույն գլխով նախատեսված հայտարարությունները հրապարակում է միայն այն դեպքում, եթե բավարարված են օրենքով, Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտով և Կանոններով Համակարգում համապատասխան գրանցումների կատարման համար սահմանված բոլոր պահանջները:

## Գլուխ 22. Ռեեստրի վարման պայմանագրի լուծումը

228. Թողարկողի տվյալ տեսակի (դասի) արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագիրը կարող է լուծվել, եթե Թողարկողի վերակազմակերպման (բացառությամբ բաց բաժնետիրական ընկերության փակ բաժնետիրական ընկերության կամ հակառակը վերակազմավորման դեպքի) կամ այլ հիմքով տվյալ արժեթղթերը դադարում են գոյություն ունենալ կամ Կանոններով, օրենքով և/կամ ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:
Ռեեստրի վարման պայմանագրի լուծվելու դեպքում Թողարկողի ունեցած ժամկետանց բոլոր պարտավորությունները շարունակում են պահպանել իրենց ուժը մինչև դրանց ամբողջական կատարումը:

229. Եթե օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանափակված չէ Ռեեստրի վարման պայմանագրի լուծումը, ապա Ռեեստրի վարման պայմանագրի լուծման համար Թողարկողը (նրա իրավահաջորդը) պարտավոր է իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին ներկայացնել՝

1) Դիմում՝ ուղղված Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարին.
2) իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի համապատասխան տեղեկանք (վերակազմակերպման դեպքում).
3) մատուցված ծառայությունների դիմաց համապատասխան պարտավորությունների (առկայության դեպքում) կատարումը հավաստող փաստաթուղթ:

230. Եթե Թողարկողը Ռեեստրի վարման պայմանագրի վարման շրջանակներում դեռևս որևէ Հաշվի Օպերատորի հետ չի վերակնքել Ռեեստրի վարման պայմանագիրը, ապա Ռեեստրի վարման պայմանագրի լուծման նպատակով Թողարկողը (նրա իրավահաջորդը) դիմում է Կենտրոնական Դեպոզիտարիային առանց Հաշվի Օպերատորի միջնորդության:

231. Թողարկողի դադարման կամ վերակազմավորման հիմքով Ռեեստրի վարման պայմանագրի լուծման դեպքում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից տրված՝ Թողարկողի դադարումը հավաստող փաստաթուղթը Հաշվի օպերատորը ներկայացնում է Կենտրոնական Դեպոզիտարիային՝ այդ մասին տեղեկանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

232. Կենտրոնական դեպոզիտարիան թողարկողի վերակազմավորման կամ լուծարման վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար ինքնուրույն կարող է դիմել իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին և վերջինիս կողմից տրամադրված՝ Թողարկողի դադարումը կամ վերակազմավորումը հավաստող տեղեկությունների հիման վրա միակողմանիորեն լուծել ռեեստրի վարման պայմանագիրը՝ Համակարգում չեղարկելով Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերը և այդ մասին տեղեկացնելով Թողարկողի Հաշվի օպերատորին:

233. Ժամկետային արժեթղթերի (մասնավորապես՝ պարտատոմսերի, փոխարկելի արժեթղթերի) մարման հիմքով Ռեեստրի վարման պայմանագիրը համարվում է լուծված:

234. Թողարկողի և Կենտրոնական Դեպոզիտարիայի միջև կնքված Ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է նաև Թողարկողի լուծարման դեպքում:

235. Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա Թողարկողի և Կենտրոնական

Դեպոզիտարիայի միջև կնքված Ռեեստրի վարման պայմանագրի լուծման դեպքում (բացառությամբ Հաշվի Օպերատորի փոփոխման դեպքի).

1) եթե Ռեեստրի վարման պայմանագրի առարկա հանդիսացած արժեթղթերը դադարել են գոյություն ունենալ, ապա այդ արժեթղթերը Համակարգում չեղարկվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ միաժամանակ դադարեցնելով արժեթղթի և դրա ԱՄՏԾ-ի (ԱՆԾ-ի) գոյությունը, ինչի մասին Կենտրոնական դեպոզիտարիան անմիջապես հրապարակում է իր ինտերնետային կայքում.
2) եթե Ռեեստրի վարման պայմանագրի առարկա հանդիսացած արժեթղթերը չեն դադարել գոյություն ունենալուց, ապա Կենտրոնական դեպոզիտարիան՝

ա. Համակարգում պահպանելով Ռեեստրի վարման պայմանագրի առարկա հանդիսացած արժեթղթերը՝ Ռեեստրի վարման պայմանագրի լուծման օրվա դրությամբ Համակարգում առկա տվյալներով, դադարեցնում է տվյալ արժեթղթերի Ռեեստրի վարումը և տվյալ արժեթղթերի Ռեեստրի վարման հետ կապված ծառայությունների մատուցումը Թողարկողին, սակայն շարունակում է Հաշվի Օպերատորների միջնորդությամբ տվյալ արժեթղթերի սեփականատերերին (անվանատերերին) ծառայությունների մատուցումը.

բ. Համակարգում սահմանափակում է Թողարկողին սպասարկած Հաշվի Օպերատորի (առկայության դեպքում)՝ Թողարկողին սպասարկելու հասանելիությունը տվյալ արժեթղթերի Ռեեստրի վարման մասով.

գ. լուծված է համարում Թողարկողի արժեթղթերի հաշվի սպասարկման պայմանագիրը և տվյալ հաշվին Թողարկողին սպասարկած Հաշվի Օպերատորի (առկայության դեպքում) հասանելիությունը, եթե Թողարկողը չունի այլ Ռեեստրի վարման պայմանագրեր,

դ. անմիջապես իր ինտերնետային կայքում հրապարակում է և Համակարգի Անդամներին տեղեկացնում է նշված արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագրի լուծման, տվյալ արժեթղթերի Ռեեստրի վարման և տվյալ արժեթղթերի Ռեեստրի վարման հետ կապված Թողարկողին ծառայությունների մատուցման դադարեցման վերաբերյալ, հրապարակման (տեղեկացման) մեջ ներառելով նաև զգուշացում այն մասին, որ այդ պարագայում նշված արժեթղթերով գործառնություններ իրականացնելիս հնարավոր են շեղումներ՝ նշված արժեթղթերի դասին վերաբերող փաստացի և Համակարգում առկա տվյալների միջև:

236. Համակարգի Անդամները և անվանատերերը պարտավոր են Կանոնների 235. կետում նախատեսված դեպքերի մասին տեղեկանալուց հետո դրանց վերաբերյալ անմիջապես տեղեկացնել Կանոնների 235. կետում նշված արժեթղթերի՝ իրենց կողմից սպասարկվող սեփականատերերին (անվանատերերին), իսկ Կանոնների 235. կետի 2) ենթակետով նախատեսված դեպքում նաև տեղեկացման մեջ ներառել 235. կետի 2) ենթակետի դ. ենթակետում նախատեսված զգուշացումը:

## Գլուխ 23. Ռեեստրի կորուստ

237. Ռեեստրի ամբողջական կամ մասնակի կորստի և այն անհապաղ վերականգնելու անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան, առանց ընդհատելու իր գործունեությունը, պարտավոր է.

1) Այդ մասին գրավոր տեղեկացնել Թողարկողին և վերջինիս սպասարկող Հաշվի Օպերատորին մեկ աշխատանքային օրվա ընթացքում.
2) Պարզել Հաշվի Օպերատորի, Թողարկողի, Հաշվետերերի և այլ անձանց մոտ Ռեեստրը վերականգնելու համար բավարար հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայությունը, հավաքագրել դրանք և անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստի պահից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, վերականգնել կորած տեղեկությունները.
3) Չդադարեցնել Ռեեստրում գրառումների կատարման աշխատանքները՝ Ռեեստրի մասնակի կորստի դեպքում:

## ԲԱԺԻՆ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ

### Գլուխ 24. Համակարգում բացվող հաշիվները և դրանց տեսակները

238. Արժեթղթերի և դրանցով կատարված գործառնությունների հաշվառման համար Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Հաշվի Օպերատորների կողմից կարող են բացվել արժեթղթերի, ինչպես նաև գործառնական հաշիվներ:

239. Համակարգում կարող են բացվել արժեթղթերի հաշիվների հետևյալ տեսակները.

1) Սեփական արժեթղթերի հաշիվ, որը բացվում է անձանց (այդ թվում՝ պայմանագրային ներդրումային ֆոնդերին) սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու նպատակով.
2) Անվանատիրոջ հաշիվ, որը բացվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ պահառուների անունով այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար.
3) Օտարերկրյա անվանատիրոջ հաշիվ, որը բացվում է օտարերկրյա պահառուների համար այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար.
4) Թողարկողի արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են Թողարկողի տիրապետման տակ գտնվող (այդ թվում՝ ձեռքբերված կամ հետգնված) իր կողմից տեղաբաշխված արժեթղթերը.
5) Բաժնային սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որտեղ հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց՝ սահմանված բաժնային համամասնության սկզբունքով.
6) Համատեղ սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց համատեղ սեփականության իրավունքով:

240. Համակարգում կարող են բացվել գործառնական հաշիվների հետևյալ տեսակները.

1) Տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է Կարգավորվող շուկայում արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնելու համար, ինչպես նաև Կանոններով նախատեսված այլ դեպքերում: Տեղաբաշխվող արժեթղթերի հաշվին հաշվառվում են թողարկված և դեռևս չտեղաբաշխված արժեթղթերը:
2) Գրավառուի գրավային հաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է արժեթղթերի գրավադրման գործառնությունը գրանցելու համար, եթե գրավատուն չի ներկայացնում գրավառուի ակտիվ կարգավիճակով սեփական արժեթղթերի հաշվի համարը կամ գրավառուն Համակարգում չունի ակտիվ կարգավիճակով սեփական արժեթղթերի հաշիվ,
3) Դեպո հաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է սեփական արժեթղթերի հաշվի ներքո՝ պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և դրանց սահմանափակումների հաշվառման համար.
4) Տեխնիկական հաշիվ, որը Կարգավորվող շուկայում առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերի և դրամական միջոցների հաշվառման համար նախատեսված հաշիվ է.
5) Book Entry հաշիվ, որը բացվում է Համակարգից դուրս՝ այլ ենթապահառուների մոտ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ամփոփ հաշվառման համար.
6) Դրամական հաշիվ:

241. Համակարգում բացված արժեթղթերի հաշիվը կարող է ունենալ հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.

1) **«Ժամանակավոր հաշվի կարգավիճակ»** (այսուհետ՝ Արժեթղթերի ժամանակավոր հաշիվ) կարգավիճակ, որը տրվում է Թողարկողի կողմից ռեեստրի վարման պայմանագրի կնքման շրջանակներում ներկայացրած տվյալների (անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի) հիման վրա Համակարգում բացված

արժեթղթերի հաշիվներին, ինչպես նաև Համակարգում բացված (վերաբացված) արժեթղթերի այն հաշիվներին, որոնց սպասարկման իրավունքն որևէ Հաշվի Օպերատորի վերապահված չէ և որոնցով գործառնություն իրականացնելու իրավունքը՝ Կանոններով սահմանված դեպքերում և կարգով, վերապահվում է միայն Կենտրոնական դեպոզիտարիային: Ժամանակավոր հաշվով որևէ գործառնություն կարող է իրականացվել Կանոններով սահմանված կարգով և դեպքերում:

2) **«Չնույնականացված հաշվի կարգավիճակ»** (այսուհետ՝ Արժեթղթերի չնույնականացված հաշիվ) տրվում է Հաշվի Օպերատորի կողմից արժեթղթերի ժամանակավոր հաշվի վերաբացման գործառնության իրականացման ընթացքում չնույնականացված Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:
3) **«Ակտիվ հաշվի կարգավիճակ»** (այսուհետ՝ Արժեթղթերի ակտիվ հաշիվ) տրվում է Հաշվի Օպերատորի կողմից բացված կամ վերաբացված հաշվին, որի նկատմամբ Հաշվի Օպերատորի հասանելիության իրավունքը դադարեցված չէ:
4) **«Ժառանգատուի հաշվի կարգավիճակ»** կարգավիճակ, որը տրվում է Հաշվի Օպերատորի կողմից բացված (վերաբացված) այն հաշվին, որից պետք է իրականացվի ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի փոխանցում իրավահաջորդ (ժառանգ) հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

## Գլուխ 25. Արժեթղթերի հաշվի բացումը

242. Համակարգում արժեթղթերի հաշիվները բացվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Հաշվի Օպերատորների կողմից՝ Կանոններով սահմանված կարգով և դեպքերում:
243. Համակարգում արժեթղթերի անվանատիրոջ հաշիվները չեն կարող բացվել Հաշվի օպերատորների կողմից:
244. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Համակարգում արժեթղթերի հաշիվները բացվում և/կամ սպասարկվում են այն դեպքերում, երբ Կանոններով այդ գործառույթներն անմիջականորեն վերապահված է Կենտրոնական դեպոզիտարիային կամ Կանոններով Կենտրոնական դեպոզիտարիան համար սահմանված է այդ գործառույթներն առանց Հաշվի Օպերատորի միջնորդության իրականացնելու հնարավորությունը:
245. Կանոնների 244. կետով չսահմանված դեպքերում Հաշվետիրոջ պահանջի (հանձնարականի) հիմքով Համակարգում արժեթղթերի հաշիվներ կարող են բացվել (վերաբացվել) և սպասարկվել բացառապես Հաշվի Օպերատորների միջնորդությամբ:
246. Համակարգում Հաշվետիրոջ համար արժեթղթերի հաշիվ կարող է բացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված և ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվի վերաբացմամբ, որը ենթադրում է նաև Կանոններով, ինչպես նաև Հաշվի օպերատորի կանոններով սահմանված նույնականացում.
2) արժեթղթերի նոր հաշվի բացմամբ:

247. Միևնույն Հաշվի Օպերատորը միևնույն անձի համար կարող է բացել նույն տեսակի միայն մեկ հաշիվ, բացառությամբ ընդհանուր սեփականության հաշիվների բացման դեպքերի:
248. Ընդհանուր (բաժնային կամ համատեղ) սեփականության հաշիվները բացվում են այն դեպքում, երբ միևնույն արժեթղթերը պատկանում են մեկից ավելի անձանց: Բաժնային և համատեղ սեփականության հաշիվները բացելիս պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են յուրաքանչյուր Հաշվետիրոջ համար:
249. Եթե Հաշվետերը Համակարգի ուղղակի մասնակիցն է, ապա նրա համար ևս կիրառելի են սույն գլխով սահմանված դրույթները, հետևյալ առանձնահատկություններով.

1) Համակարգի ուղղակի մասնակիցն իր համար Համակարգում արժեթղթերի հաշիվ բացելիս (վերաբացելիս) պահառության (ենթապահառության) պայմանագիրը կնքում է անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիայի հետ.

2) Համակարգի ուղղակի մասնակցի համար արժեթղթերի սեփական և/կամ անվանատիրոջ հաշիվը բացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այն դեպքում, եթե Համակարգի ուղղակի մասնակիցը միացած չէ Ծրագրային համակարգին.
3) եթե Համակարգի ուղղակի մասնակիցը Համակարգում ունի ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվ, ապա վերջինս պարտավոր է ողջամիտ ժամկետում վերաբացել այն.
4) եթե Համակարգի ուղղակի մասնակիցը ունի Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պահառության (ենթապահառության) պայմանագիր, որը, սակայն, արդեն չի համապատասխանում Կանոնների պահանջներին, ապա վերջինս պարտավոր է ողջամիտ ժամկետում կնքել նոր պայմանագիր՝ լուծելով նախկինը,
5) Համակարգի ուղղակի մասնակիցը ՝ իր անվամբ Համակարգում արժեթղթերի հաշիվ բացելու (վերաբացելու) և պահառության (ենթապահառության) պայմանագիր կնքելու (վերակնքելու) ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերը և/կամ հանձնարարականները անմիջականորեն ներկայացնում է Կենտրոնական դեպոզիտարիային: Ընդ որում, Համակարգի ուղղակի մասնակիցը կարող է Կենտրոնական դեպոզիտարիային չներկայացնել Կանոններով սահմանված, սակայն արդեն իսկ ներկայացված և փոփոխության չենթարկված փաստաթղթերը՝ Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրելով նշված փաստաթղթերում փոփոխության բացակայության մասին հավաստող գրություն:

250. Եթե Հաշվետերը (կամ Կանոններով սահմանված դեպքերում՝ այլ իրավասու անձը) ցանկանում է վերաբացել Համակարգում առկա ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվը կամ ապահովել այդպիսի հաշվում հաշվեգրված արժեթղթերով գործառնությունների հնարավորությունը, ապա Հաշվի օպերատորը պետք է ձեռնարկի Կանոններով սահմանված անհրաժեշտ և բավարար գործողություններ՝ հաշվում առկա տեղեկությունների հիմքով Հաշվետիրոջը նույնականացնելու համար:

251. Կանոններով կարգավորվող իրավահարաբերություններում անհատական ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համար կիրառվում են Կանոններով ֆիզիկական անձանց համար սահմանված նորմերը:

252. Հաշվի բացման (վերաբացման) համար, բացառությամբ ժառանգատուի հաշվի վերաբացման դեպքի, ֆիզիկական անձ հանդիսացող Հաշվետերը կամ նրա լիազորված անձը պետք է Հաշվի Օպերատորին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1) Հաշվետիրոջ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
2) ՀՀ ռեզիդենտ Հաշվետիրոջ հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը, ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
3) հաշվի վերաբացման դեպքում՝ Հաշվետիրոջ նույնականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
4) լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
5) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված (առկայության դեպքում) այլ փաստաթղթեր:

253. Հաշվի բացման (վերաբացման) համար իրավաբանական անձ հանդիսացող Հաշվետիրոջ լիազորված անձը պետք է Հաշվի Օպերատորին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1) Հաշվետիրոջ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը.
2) Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).
3) առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց

համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճենը (կարող է չներկայացվել Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնության դեպքում).
4) իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
5) լիազորագրի հիման գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը.
6) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված (առկայության դեպքում) այլ փաստաթղթեր:

254. Հաշվի Օպերատորը Սեփական արժեթղթերի հաշվի բացման համար Հաշվետիրոջ հետ կնքում է արժեթղթերի պահառության գրավոր պայմանագիր՝ ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

255. Ֆիզիկական անձը Սեփական արժեթղթերի հաշվի բացման ժամանակ Հաշվի Օպերատորին ներկայացնում է հանձնարարական, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) անուն, ազգանուն.
2) ծննդյան ամսաթիվ.
3) քաղաքացիությունը՝ երկրի անվանմամբ.
4) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան (սերիան՝ առկայության դեպքում).
5) ՀՀ ռեզիդենտ Հաշվետիրոջ հանրային ծառայությունների (կամ սոցիալական քարտի) համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը, ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը (առկայության դեպքում)
6) հասցեն (հաշվառման և/կամ տվյալ պահին բնակության).
7) կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ՝ առկայության դեպքում).
8) բանկային հաշվեհամարը և սպասարկող բանկի վավերապայմանները, կամ Հաշվետիրոջը սպասարկող Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվի համարը.
9) տեղեկություններ Հաշվետիրոջ անունից գործելու լիազորված ներկայացուցչի մասին (առկայության դեպքում)՝ նշելով լիազորությունների շրջանակը, որտեղ լիազորված ներկայացուցչի մասին տեղեկությունները ներառում են.
   ա) ֆիզիկական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի դեպքում՝ սույն կետի 1), 4), 6) և 7) ենթակետերով նախատեսված տեղեկությունները,
   բ) իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի դեպքում՝ Կանոնների 256. կետի 1)-ից 5) ենթակետերով նախատեսված տեղեկությունները և իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի անունից գործելու լիազորված ներկայացուցչի մասին սույն կետի 1), 4), 6) և 7) ենթակետերով նախատեսված տեղեկությունները:

256. Իրավաբանական անձը Սեփական արժեթղթերի հաշվի բացման ժամանակ Հաշվի Օպերատորին է ներկայացնում հանձնարարական, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) իրավաբանական անձի անվանումը.
2) գտնվելու վայրը (փոստային հասցեն), կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ՝ առկայության դեպքում).
3) Առկայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կամ այլ համարժեք

համարը (ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում).

4) պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցումը հավաստող փաստաթղթի համարը, սերիան (առկայության դեպքում) կամ պետական գրանցման համարը, գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի) և գրանցող մարմնի անվանումը.

5) Կենտրոնական բանկի ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցում գրանցված հասցեն (առկայության դեպքում).

6) տեղեկություններ Հաշվետիրոջ անունից գործելու լիազորված ներկայացուցչի մասին (առկայության դեպքում)՝ նշելով լիազորությունների շրջանակը, որտեղ լիազորված ներկայացուցչի մասին տեղեկությունները ներառում են.

ա) ֆիզիկական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի դեպքում՝ Կանոնների 255. Կետի 1), 4), 6) և 7) ենթակետերով նախատեսված տեղեկությունները,

բ) իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի դեպքում՝ սույն կետի 1)-ից 5) ենթակետերով նախատեսված տեղեկությունները և իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի անունից գործելու լիազորված ներկայացուցչի մասին Կանոնների 255. Կետի 1), 4), 6) և 7) ենթակետերով նախատեսված տեղեկությունները.

7) բանկային հաշվեհամարը և սպասարկող բանկի վավերապայմանները, կամ Հաշվետիրոջը սպասարկող Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվի համարը:

257. Օրենքով սահմանված կարգով պահառություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձինք (այսուհետ նաև՝ Պահառու) Համակարգում Անվանատիրոջ հաշիվ ունենալու նպատակով պարտավոր են Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքել ենթապահառության պայմանագիր: Կենտրոնական դեպոզիտարիայի հետ ենթապահառության պայմանագիրը կնքվում է ուղղակիորեն:

258. Համակարգում Անվանատիրոջ հաշվի բացման համար Պահառուն Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անվանատիրոջ հաշվի բացման դիմում, ինչպես նաև ենթապահառության պայմանագրի կնքման համար անհրաժեշտ տվյալները, այդ թվում՝ իրավասու էլեկտրոնային կապի միջոցները, բանկային վավերապայմանները.

2) Օրենքով սահմանված պահառություն իրականացնելու թույլտվության՝ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված տեղեկացման կամ լիցենզիայի պատճենը (Օտարերկրյա պահառուի դեպքում՝ իր երկրի պետական մարմնի կողմից տրված թույլտվության կամ լիցենզիայի պատճենը, որի համաձայն օտարերկրյա պահառուն իրավունք ունի իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ վարել).

3) պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) Պահառուի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնի նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը.

5) Պահառուի լիազորված անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթը, որն առնվազն ապահովում է լիազորված անձի նույնականացումը և հստակ նախատեսում է լիազորությունների շրջանակը:

259. Համակարգում առկա ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվի (բացառությամբ՝ Ժառանգատուի հաշվի) վերաբացման նպատակով Հաշվետերը Հաշվի Օպերատորին է ներկայացնում, համապատասխանաբար, Կանոնների 255. կամ 256. կետերով սահմանված փաստաթղթերը և արժեթղթերի հաշվի վերաբացման հանձնարարական, որը՝ ի լրումն Կանոնների 255. կամ 256. կետերով սահմանված տեղեկությունների, պարունակում է նաև Կանոնների 261. կետի 6)-ից 9) ենթակետերով սահմանված տեղեկությունները:

260. Համակարգում առկա ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվը վերաբացվում է (համարվում է վերաբացված) և պահառության (ենթապահառության) պայմանագիրը Հաշվետիրոջ և Հաշվի Օպերատորի միջև կնքվում է Կանոններով, ինչպես նաև Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված կարգով նույնականացումից հետո:

261. Հաշվի Օպերատորը իր հաճախորդի համար Համակարգում առկա ժամանակավոր հաշվի

կարգավիճակով հաշվի վերաբացման նպատակով հաճախորդի կողմից իրեն ներկայացված համապատասխան փաստաթղթերի և տվյալների հիման վրա Համակարգում ստուգում է տվյալ հաճախորդի՝ ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվի առկայությունը: Ստուգման նպատակով Հաշվի Օպերատորը Ծրագրային համակարգ է մուտքագրում հետևյալ տեղեկությունները կամ դրանցից նրանք, որոնք հնարավորություն կտան նույնականացնել Հաշվետիրոջը.

1) անունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում)՝ ֆիզիկական անձի դեպքում, անվանումը (այնպես, ինչպես նշված է պետական գրանցման փաստաթղթում)՝ իրավաբանական անձի դեպքում.
2) ազգանունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում).
3) անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում)՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցումը հավաստող փաստաթղթի կամ պետական գրանցման համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում)՝ իրավաբանական անձանց դեպքում.
4) բնակության և/կամ հաշվառման վայրը՝ ֆիզիկական անձի դեպքում, գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝ իրավաբանական անձի դեպքում.
5) ծննդյան ամսաթիվը՝ ֆիզիկական անձանց դեպքում.
6) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված արժեթղթերի ժամանակավոր հաշվի համարը (տեղեկությունների առկայության դեպքում).
7) Հաշվետիրոջ հանրային ծառայությունների (կամ սոցիալական քարտի) համարանիշը կամ, հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը՝ ֆիզիկական անձանց դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կամ այլ համարժեք նույնականացնող տարբերանիշը՝ իրավաբանական անձանց դեպքում (տեղեկությունների առկայության դեպքում).
8) ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվում հաշվեգրված արժեթղթերի ԱՄՏԾ-ները (ԱՆԾ-ները) կամ դրանց դասը (տեսակը) և թողարկողների անվանումները.
9) անձին պատկանող՝ սույն կետի 8) ենթակետում նշված արժեթղթերի քանակները:

262. Եթե Հաշվի Օպերատորի կողմից տվյալ հաճախորդի համար Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Համակարգում բացված ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվի առկայության ստուգման արդյունքում սույն գլխի 261. կետով սահմանված տեղեկություններից առնվազն հինգ ցանկացած տեղեկություն համընկնում է Համակարգում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների հետ, ապա Հաշվի Օպերատորը ստանում է հասանելիություն տվյալ հաշվում առկա տեղեկություններին և տվյալ հաճախորդին՝ որպես Հաշվետեր, նույնականացնելու իրավունք՝ մինչև Հաշվետիրոջ հետ (Հաշվետիրոջ՝ Հաշվի Օպերատոր լինելու դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ) պահառության (ենթապահառության) պայմանագրի կնքումն առանց հաշվում հաշվեգրված արժեթղթերով գործառնություններ ամրագրելու իրավունքի:

263. Հաշվի Օպերատորը հաճախորդին՝ որպես Հաշվետեր, նույնականացնելիս պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

1) եթե հաճախորդի կողմից ներկայացված տեղեկություններից Համակարգում համընկել են Կանոնների 261. կետի 1)-3) կամ 1), 2), 7) և ցանկացած այլ երկու (երեք՝ իրավաբանական անձանց դեպքում) կամ 1), 2), 4), 5), 8), 9) ենթակետերով սահմանված տեղեկությունները, ապա անձը համարվում է նույնականացված՝ որպես տվյալ հաշվի Հաշվետեր: Այս սկզբունքը կիրառելի է նաև այն դեպքում, երբ և Համակարգում սույն ենթակետում թվանշված տեղեկությունների փոխարեն համընկել են համապատասխան նույնականացնող տեղեկությունները, որոնք նշված են տվյալ տեղեկությունների պաշտոնական հաշվառում իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթում կամ դատարանի որոշման մեջ՝ ֆիզիկական

անձի դեպքում, կամ պետական գրանցումն իրականացրած մարմնի կողմից տրված համապատասխան տեղեկանքում կամ դատարանի համապատասխան որոշման մեջ՝ իրավաբանական անձի դեպքում (ընդ որում, եթե համադրվող տեղեկություններում շեղումը պայմանավորված է ակնհայտ տեխնիկական վրիպակով կամ թարգմանչական անհամապատասխանության հետևանք է, ապա այդ տեղեկությունները համարվում են համընկած).

2) եթե հաճախորդի կողմից ներկայացված տեղեկություններից Համակարգում համընկել են Կանոնների 261. կետի 1), 2), 8), 9) և այլ, բայց ոչ՝ 3) կամ 7), ենթակետերով սահմանված տեղեկությունները, կամ համընկել են Կանոնների 261. կետի 3), 8), 9) և երկու այլ ենթակետերով սահմանված տեղեկությունները, սակայն չեն համընկել 1) և/կամ 2) ենթակետերով սահմանված տեղեկությունները, ապա Հաշվի Օպերատորը հաճախորդին նույնականացումը իրականացնում է միայն հաշվում հաշվառված արժեթղթերի Թողարկողի (Թողարկողների) կողմից հաճախորդին տվյալ արժեթղթերի սեփականատեր ճանաչելու մասին պատշաճ հավաստիացված տեղեկանքի (տեղեկանքների) կամ դատարանի որոշման հիման վրա.

3) եթե հաճախորդի կողմից ներկայացված տեղեկություններից Համակարգում համընկել են Կանոնների 261. կետով սահմանված տեղեկություններից այնպիսի 5-ը, որոնք չեն ներառում նշված կետի 1)-3) և 7) ենթակետերով սահմանված տեղեկություններից որևէ մեկը, Հաշվետերը համարվում է չնույնականացված:

264. Այն դեպքերում, երբ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա Կենտրոնական դեպոզիտարիային Թողարկողի կողմից արժեթղթերի Ռեեստրի հանձման արդյունքում ձևավորված ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվների վերաբացման գործընթացում Հաշվետիրոջ նույնականացման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում ճշտել (ուղղել) Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի Ռեեստրում ներառված տեղեկությունները և, ըստ այդմ, հստակեցնել այդ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը, Թողարկողը պարտավոր է իրեն դիմած անձին ողջամիտ ժամկետում տեղեկանք տրամադրել տվյալ անձի՝ Թողարկողի արժեթղթերի սեփականատեր (անվանատեր) հանդիսանալու վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ձեռնարկել անհրաժեշտ և բավարար գործողություններ Ռեեստրում ներառված տեղեկությունների բացահայտված անճշտությունները կամ բացթողումները վերացնելու համար, կամ պաշտոնապես մերժել դիմումը, եթե դիմումատուի փաստարկներն անհիմն են:

265. Ժառանգության իրավունքի գրանցման դեպքում ժառանգատուի նույնականացումը իրականացվում է իրավահաջորդի (իրավահաջորդների) դիմումի և ժառանգության վկայականի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Թողարկողի կողմից տրված տեղեկանքի, նոտարի կողմից լրացուցիչ պարզաբանող փաստաթղթերի և տեղեկությունների կամ Կենտրոնական դեպոզիտարիայի (Հաշվի Օպերատորի) կողմից նոտարական հարցման պատասխանի հիման վրա, հաշվի առնելով Կանոնների 263. կետով սահմանված սկզբունքները:

Ժառանգության գրանցման գործընթացում նույնականացված ժառանգատուի ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվին Հաշվի Օպերատորի կողմից տրվում է ժառանգատուի հաշվի կարգավիճակ:

Ժառանգատուի հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշիվն ենթակա է անմիջապես փակման արժեթղթերի զրոյական մնացորդի դեպքում:

266. Այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվի վերաբացման գործընթացում Հաշվի Օպերատորը ստանում է հասանելիություն տվյալ հաշվում առկա տեղեկություններին, սակայն Հաշվի Օպերատորից անկախ պատճառներով հնարավոր չի լինում նույնականացնել Հաշվետիրոջը, ապա Հաշվի Օպերատորը՝ նշված հասանելիության ստացման օրը, տվյալ արժեթղթերի հաշվին տալիս է չնույնականացված հաշվի կարգավիճակ՝ արժեթղթերի հաշվում համապատասխան նշում կատարելով:

267. Եթե չնույնականացված հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվի Հաշվետերը

Կանոններով սահմանված կարգով Հաշվի Օպերատորի կողմից չի նույնականացվում այդ հաշվին հասանելիություն ստանալու պահից 15 աշխատանքային օրվա կամ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ համաձայնեցված ավելի երկար ժամկետի ընթացքում, ապա Հաշվի Օպերատորը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիային՝ նշելով արժեթղթերի հաշվի համարը:

268. Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի հաշվի Հաշվետիրոջ նույնականացման անհնարինության մասին տեղեկությունը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում արգելափակում է Հաշվի Օպերատորի իրավասությունը տվյալ հաշվի նկատմամբ:

269. Եթե Հաշվետիրոջ պահանջով Հաշվի Օպերատորը վերաբացում է արժեթղթերի այնպիսի հաշիվ, որից տվյալ Հաշվետիրոջ համար արդեն բացել և սպասարկում է տվյալ Հաշվի Օպերատորը, ապա այդ դեպքում պահառության նոր պայմանագիր չի կնքվում, իսկ վերաբացված և արդեն առկա հաշիվներն ենթակա են անմիջապես միավորման՝ պահպանելով Հաշվետիրոջ նախընտրած հաշիվը, եթե Հաշվետերը Հաշվի Օպերատորի հարցմանն ի պատասխան նշել է հաշիվը: Հաշվի Օպերատորի պարտավոր է հաշիվների միավորման մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հաշվետիրոջը և Կենտրոնական դեպոզիտարիային:

270. Բացված կամ վերաբացված արժեթղթերի հաշվի սպասարկման համար Հաշվետերը պարտավոր է վճարել պահառության (ենթապահառության) պայմանագրով և Հաշվի Օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի իրավական ակտերով սահմանված կարգով և չափով:

271. Հաշվի բացման (վերաբացման) գործընթացում Հաշվետիրոջ կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերը ստորագրվում են Հաշվետիրոջ կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի կողմից, ինչպես նաև նշվում է այն մասին, թե Համակարգից տվյալ Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրումն ինչ եղանակով պետք է իրականացվի՝ փաստաթղթային թե էլեկտրոնային:

Եթե իրավաբանական անձ հանդիսացող Հաշվետերը կամ Հաշվետիրոջ լիազորված ներկայացուցիչն ունի կնիք, ապա սույն կետում նշված փաստաթղթերը նաև կնքվում են նշված անձանց կողմից:

272. Հաշվի բացման (վերաբացման) գործառնությունը Համակարգում գրանցվում է և Հաշվետիրոջ հետ պահառության (ենթապահառության) պայմանագիրը կնքվում է Կանոններով և Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց (նույնականացման անհրաժեշտության դեպքում՝ անձին նույնականացնելուց) հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## Գլուխ 26. Արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխություն

273. Կենտրոնական դեպոզիտարիան՝ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա, արժեթղթերի հաշվում փոփոխություններ կատարում է Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցված հանձնարարականների, դատարանի որոշման, ինչպես նաև օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և Կանոններով սահմանված այլ հիմքերով: Ընդ որում՝ Հաշվի Օպերատորը հանձնարարականները Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցում դրանք Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով:

274. Համակարգի ուղղակի մասնակիցը իր իրավասությունների շրջանակում արժեթղթերի հաշվում փոփոխությունների կատարման նպատակով հանձնարարական է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիային Ծրագրային համակարգում դրա մուտքագրման միջոցով, իսկ Ծրագրային համակարգի միացած չլինելու դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ եղանակով:

275. Հաշվետերը պարտավոր է տեղեկացնել Հաշվի Օպերատորին (եթե Հաշվետերը Համակարգի ուղղակի մասնակից է՝ Կենտրոնական դեպոզիտարիային) արժեթղթերի հաշվի

բացման (վերաբացման) ժամանակ տրամադրված (Համակարգ մուտքագրված) տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին:
276. Հաշվետիրոջ անվան կամ նրա անձը հաստատող (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցումը հաստատող) փաստաթղթի փոփոխության դեպքում Հաշվետերը պետք է ներկայացնի նաև համապատասխան փոփոխությունը հավաստող փաստաթուղթը:
277. Հաշվում ամրագրված տեղեկությունների փոփոխությունների մասին Հաշվետիրոջ տեղեկացումը կատարվում է Հաշվի Օպերատորի համապատասխան իրավական ակտերով սահմանված հանձնարարականների ներկայացմամբ կամ այլ կարգով:
278. Հաշվետիրոջ կողմից արժեթղթերի իր հաշվում ամրագրված տեղեկությունների փոփոխությունները չներկայացնելու կամ սահմանված կարգով չներկայացնելու դեպքում Հաշվի Օպերատորը և Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չեն կրում Հաշվետիրոջը պատճառված վնասի համար:
279. Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը՝ Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնությամբ) կարող է իր նախաձեռնությամբ Համակարգում կատարել ուղղումներ, եթե Կենտրոնական դեպոզիտարիան բացահայտում է, որ կատարված գրանցումը սխալ է կամ բացակայում է, և եթե գրանցման ուղղումը չի խախտում այլ անձանց իրավունքները:
280. Հաշվի տվյալների փոփոխությունը Համակարգում գրանցում է անհրաժեշտ փաստաթղթերը և հանձնարարականները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## Գլուխ 27. Արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի պահառության (ենթապահառության) պայմանագրի լուծում

281. Հաշվի Օպերատորի միջոցով բացված (վերաբացված) արժեթղթերի հաշիվը կարող է փակվել և/կամ արժեթղթերի պահառության (ենթապահառության) պայմանագիրը կարող է լուծվել.

1) Հաշվետիրոջ ցանկությամբ՝ Կանոններով սահմանված դեպքերում և համապատասխան գրավոր դիմումի (հանձնարարականի) հիման վրա.
2) օրենքով և/կամ Կանոններով սահմանված այլ դեպքերում:

282. Պահառության (ենթապահառության) պայմանագրի լուծվելու դեպքում Հաշվետիրոջ ունեցած ժամկետանց բոլոր պարտավորությունները շարունակում են պահպանել իրենց ուժը մինչև դրանց ամբողջական կատարումը:
283. Համակարգում կարող են փակվել միայն արժեթղթերի զրոյական մնացորդով արժեթղթերի հաշիվները:
284. Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի ոչ զրոյական մնացորդով հաշվի փակման համար Հաշվետերը՝ մինչև արժեթղթերի հաշվի փակման դիմումի (հանձնարարականի) ներկայացումը, պարտավոր է հաշվում հաշվեգրված արժեթղթերի պորտֆելը, փոխանցել այլ ակտիվ հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշվին, ինչպես նաև Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվում հաշվառվող՝ Հաշվետիրոջը պատկանող դրամական միջոցները փոխանցել վերջինիս կողմից նշված հաշվեհամարին:
285. Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի հաշիվը փակվում է Հաշվետիրոջ հետ կնքված պահառության (ենթապահառության) պայմանագրի լուծման արդյունքում:
286. Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի պահառության (ենթապահառության) պայմանագիրը լուծվում է պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնությունը Հաշվետիրոջ և Հաշվի Օպերատորի կողմից ստորագրվելու (հաստատելու) արդյունքում:
Արժեթղթերի պահառության (ենթապահառության) պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնությունը ստորագրվում է, եթե Հաշվետերը կատարել է Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված բոլոր պարտավորությունները:

287. Արժեթղթերի զրոյական մնացորդով հաշվի պարագայում արժեթղթերի պահառության (ենթապահառության) պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնությունը ստորագրումից հետո Հաշվի Օպերատորն արժեթղթերի հաշվի փակման հանձնարարականն անմիջապես գրանցում է Համակարգում, որի արդյունքում արժեթղթերի հաշիվը Համակարգում ստանում է արժեթղթերի փակված հաշվի կարգավիճակ:
288. Համակարգում առկա և մեկ տարվա ընթացքում շարունակաբար բացառապես Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասության տակ գտնվող արժեթղթերի զրոյական մնացորդով արժեթղթերի հաշիվներն ենթակա են փակման Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

## Գլուխ 28. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնություններ

289. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունները Համակարգում իրականացվում են հետևյալ տեսակներով, որոնց մեջ չի ներառվում արժեթղթերի փոխանցման գործառնությունը, որը արդյունք է Կարգավորվող շուկայում կնքված գործարքի.

1) Ազատ առաքում կամ ST փոխանցում.
2) Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում.
3) Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում.
4) Արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում.
5) Կենտրոնական Բանկի և/կամ ֆինանսական կազմակերպությունների միջև կնքված ռեպո պայմանագրից բխող արժեթղթերի փոխանցում:

290. Հաշվի Օպերատորի միջնորդությամբ արժեթղթերի փոխանցման գործառնություն կարող է կատարվել միայն, եթե արժեթղթեր փոխանցող և ստացող կողմ հանդիսացող Հաշվետերերի արժեթղթերի հաշիվներն ունեն ակտիվ հաշվի կարգավիճակ, բացառությամբ Կանոններով սահմանված դեպքերի:
291. Դատարանի վճռի և ժառանգության հիման վրա արժեթղթերի փոխանցումները Համակարգում կատարվում են ազատ առաքմամբ՝ շահագրգիռ կողմի պահանջով:
292. Նվիրատվության (նվիրաբերության) հիման վրա արժեթղթերի փոխանցումները Համակարգում կատարվում են ազատ առաքմամբ (ST փոխանցում)՝ նվիրատուի պահանջով, եթե նվիրատուն ներկայացնում է նվիրատվության պայմանագիրը, կամ համաձայնությամբ ազատ առաքմամբ (FOP փոխանցում), եթե նվիրատվության պայմանագիրը ներկայացված չէ:
Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման հիմքով Թողարկողի արժեթղթերի հաշվին արժեթղթերի փոխանցումները Համակարգում կատարվում են ազատ առաքում՝ համաձայնությամբ (FOP փոխանցում) կամ առաքում վճարման դիմաց (DVP փոխանցում) տեսակներով:
293. Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը կատարելու համար արժեթղթերի փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետերը (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի, որը հանձնարարականը ներկայացնում է ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիային) պետք է դիմի իր հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին և ներկայացնի արժեթղթերի փոխանցման հանձնարարական հետևյալ տեղեկություններով.

1) Արժեթղթեր փոխանցող և ստացող կողմերի անուն, ազգանունները (անվանումները).
2) Արժեթղթեր փոխանցող և ստացող կողմերի արժեթղթերի հաշիվների համարները.
3) Փոխանցվող արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
4) Փոխանցման ենթակա արժեթղթերի քանակը.
5) Արժեթղթերի փոխանցման գործառնության տեսակի մասին էական տվյալները՝ գործարքի կնքման օրը, միավոր արժեթղթի գինը և գործարքի դրամական հատուցման չափը (առկայության դեպքում).
6) Նշում արժեթղթերի փոխանցման արդյունքում վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ հաշվին).

7) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և փաստաթղթեր:

294. Դատարանի վճռի հիման վրա արժեթղթերի փոխանցման դեպքում շահագրգիռ կողմը Հաշվի Օպերատորին (Կենտրոնական դեպոզիտարիային, եթե շահագրգիռ կողմը Համակարգի ուղղակի մասնակից) է ներկայացնում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը, ինչպես նաև դիմում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ:

295. Այն դեպքում, երբ դատարանի վճռի հիման վրա փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվը չի սպասարկվում այն Հաշվի Օպերատորի միջնորդությամբ, որին ներկայացվել է համապատասխան վճիռը կամ որոշումը կամ տվյալ վճռով պատասխանող կողմ է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիան կամ Հաշվի Օպերատորին ներկայացված չէ ստացող կողմի ակտիվ հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշվի համարը, ապա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը և շահագրգիռ կողմի դիմումը Հաշվի Օպերատորի կողմից այն ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիային:

296. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշման հիման վրա իրականացնել ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնություն Համակարգում, եթե փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվն ունի ժամանակավոր հաշվի կարգավիճակ կամ տվյալ վճռով կամ որոշմամբ պատասխանող կողմ է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիան, և եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշման հիման վրա հնարավոր է միանշանակ նույնականացնել այն Հաշվետիրոջը, ում հաշվից պետք է փոխանցվեն արժեթղթերը:

297. Կենտրոնական Դեպոզիտարիան կարող է անձամբ իրականացնել ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը Համակարգում իրեն ներկայացված դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշման հիման վրա կամ վերահասցեագրել փոխանցող կողմին սպասարկող Հաշվի օպերատորին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը այն ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե փոխանցող և ստացող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշիվները ունեն ակտիվ հաշվի կարգավիճակ:

298. Ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի ազատ առաքման համար ժառանգը պարտավոր է Հաշվի Օպերատորին ներկայացնել հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

1) Իր Ժառանգության իրավունքի վկայականը.
2) Արժեթղթերի հաշվի բացման համար Կանոններով սահմանված փաստաթղթերը, եթե ժառանգի (ժառանգների) համար նախկինում արժեթղթերի հաշիվ բացված չի եղել տվյալ Հաշվի Օպերատորի միջնորդությամբ.
3) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

299. Համակարգում արժեթղթերի փոխանցման գործառնության կատարումից անմիջապես հետո Հաշվի Օպերատորը պարտավոր է փոխանցող կողմի հաշվին տալ ժառանգատուի հաշվի կարգավիճակ:

300. Հաշվի Օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը կատարում է հանձնարարականը (դիմումը) ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանում կատարման այլ ժամկետ նշված չէ:

301. Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնության հանձնարարականի համակարգ հաջողությամբ մուտքագրման պահը համարվում է Փոխանցման

հանձնարարականի անվերադարձելիության պահ:
302. Համակարգում ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը կատարվում է, եթե արժեթղթերի փոխանցման հանձնարարականով ներկայացված տեղեկությունները համընկնում են փոխանցող և ստացող կողմերի վերաբերյալ Համակարգում առկա տեղեկությունների հետ:
303. Համակարգի անդամը (բացառությամբ ԿԾՀՀԱ-ի) «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման նպատակով պետք է մինչև Համակարգում արժեթղթերի վերջնահաշվարկի օրը իր համապատասխան Դրամական հաշվում ապահովի «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման դիմաց վճարման ապահովման համար անհրաժեշտ միջոցները:
304. «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման նպատակով Հաշվետերն իր արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում արժեթղթերի փոխանցման հանձնարարական, որն էլ Հաշվի Օպերատորի կողմից Ծրագրային համակարգ է մուտքագրվում հանձնարարականում նշված վերջնահաշվարկի օրվա ավարտից առնվազն տասը րոպե շուտ: Համակարգի ուղղակի մասնակիցը «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարականը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում SWIFT կամ Բանկմեյլ համակարգերի միջոցով, կամ էլ Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով՝ հանձնարարականում նշված վերջնահաշվարկի օրվա ավարտից առնվազն տասը րոպե շուտ:
305. «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) Արժեթղթեր փոխանցող և ստացող կողմերի անուն, ազգանունները (անվանումները).
2) Նշում արժեթղթերի փոխանցման արդյունքում վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ հաշվին).
3) Արժեթղթերը ստացողի արժեթղթերի հաշվի համարը և այդ հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի անվանումը.
4) Արժեթղթերը փոխանցող կողմի արժեթղթերի հաշվի համարը.
5) Փոխանցման ենթակա արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
6) Արժեթղթերի քանակը.
7) Վճարման ենթակա գումարի չափը.
8) Դրամական միջոցի արժույթը.
9) Գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).
10) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
11) Վերջնահաշվարկի իրականացման համար Ծրագրային համակարգում նախատեսված այլ տեղեկությունները (առկայության դեպքում).
12) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

306. «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման նպատակով արժեթղթեր ստացող կողմ հանդիսացող Հաշվետերը արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական, որն էլ Հաշվի Օպերատորի կողմից ծրագրային համակարգ է մուտքագրվում հանձնարարականում նշված վերջնահաշվարկի օրվա ավարտից առնվազն տասը րոպե շուտ: Համակարգի ուղղակի մասնակիցը «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման հանձնարարականը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում SWIFT կամ Բանկմեյլ համակարգերի միջոցով, կամ էլ Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով՝ հանձնարարականում նշված վերջնահաշվարկի օրվա ավարտից առնվազն տասը րոպե շուտ:
307. «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) Արժեթղթերը ստացող կողմի անուն, ազգանունը (անվանումը).
2) Արժեթղթերը փոխանցողի արժեթղթերի հաշվի համարը և այդ հաշիվը սպասարկող

Հաշվի Օպերատորի անվանումը.
3) Արժեթղթերը ստացող կողմի արժեթղթերի հաշվի համարը.
4) Ստացվելիք արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
5) Արժեթղթերի քանակ.
6) Վճարման ենթակա գումարի չափը.
7) Դրամական միջոցի արժույթը.
8) Գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).
9) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
10) վերջնահաշվարկի իրականացման համար Ծրագրային համակարգում պահանջվող այլ տեղեկությունները (առկայության դեպքում).
11) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

308. Արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական ներկայացրած Հաշվետերը միևնույն ժամանակ իրականացնում է արժեթղթերի ձեռք բերման համար վճարման ենթակա գումարի փոխանցում իր արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվին, իսկ Համակարգի ուղղակի մասնակից հանդիսացող հաշվետերը արժեթղթերի ձեռք բերման համար վճարման ենթակա գումարը ապահովում է իր սեփական կամ հաճախորդների ամփոփ Դրամական հաշվում:

309. Վերջնահաշվարկի օրվա ավարտից առնվազն տասը րոպե շուտ արժեթղթեր ստացող կողմի արժեթղթերի հաշիվը սպասարկող Համակարգի անդամը (բացառությամբ ԿՇՀՀԱ-ի) ապահովում է իր համապատասխան Դրամական հաշվին արժեթղթերը ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարը:

310. Մինչև վերջնահաշվարկի օրվա ավարտը, այն պահի դրությամբ, երբ Համակարգում համընկնում են արժեթղթերի փոխանցող և ստացող կողմեր հանդիսացող Համակարգի անդամների հանձնարարականների՝ գործառնության իրականացման համար անհրաժեշտ տվյալները և սույն գլխի 309. կետով սահմանված կարգով Դրամական հաշվին առնվազն առկա է հանձնարարականում նշված վճարման ենթակա գումարը, ապա տեղի է ունենում վերջնահաշվարկ՝ արժեթղթերը և դրամական միջոցների փոխանցելով համապատասխան Դրամական և արժեթղթերի հաշիվներում:

311. «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի փոխանցումը տեղի է ունենում նույն ընթացակարգով, ինչ «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման դեպքում՝ առանց դրամական միջոցի առկայության պահանջի:

312. «Առաքում վճարման դիմաց» և «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարականները Համակարգի անդամի կողմից կարող են հետ կանչվել և/կամ միակողմանիորեն փոփոխվել մինչև հանդիպակաց կողմ հանդիսացող Համակարգի անդամի կողմից մուտքագրված հանձնարարականի հետ համընկման պահը, իսկ դրանից հետո, մինչև վերջնահաշվարկի օրը, այդ հանձնարարականները կարող են փոփոխվել միայն երկու կողմերի համաձայնությամբ:

313. Համակարգում փաստացի վերջնահաշվարկի կատարման (արժեթղթերի և/կամ դրամական միջոցների փոխանցման) պահը հանդիսանում է «Առաքում վճարման դիմաց» և «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով Փոխանցման հանձնարարականների անվերադարձելիության պահ:

314. «Արժեթղթերի պորտֆելի փոխանցում» արժեթղթերի փոխանցման գործառնությունը Համակարգում կատարվում է.
1) Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա, երբ Հաշվետերը մի Հաշվի Օպերատորի կողմից սպասարկվող արժեթղթերի հաշվում առկա իր բոլոր արժեթղթերը փոխանցում է այլ Հաշվի Օպերատորի կողմից սպասարկվող իր արժեթղթերի հաշվին.
2) Կանոններով նախատեսված այլ դեպքերում:

315. Հաշվետերը արժեթղթերի պորտֆելի փոխանցման համար Հաշվի Օպերատորին է ներկայացնում համապատասխան պորտֆելի փոխանցման հանձնարարական՝ հետևյալ

տեղեկություններով.

1) Արժեթղթերի հաշիվների համարները, որոնք պետք է ապահովեն արժեթղթերի պորտֆելի փոխանցումը (արժեթղթերի ելքագրումը և հաշվեգրումը).
2) Այն Հաշվի Օպերատորի անվանումը, որը սպասարկում է Հաշվետիրոջ արժեթղթերի այն հաշիվը, որին պետք է հաշվեգրվեն արժեթղթերը:

316. Արժեթղթերի պորտֆելի փոխանցման հանձնարարականի ներկայացման դեպքում Հաշվետերը պարտավոր է միաժամանակ Հաշվի օպերատորին ներկայացնել Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվում իր ունեցած դրամական միջոցների փոխանցման հանձնարարական՝ Կենտրոնական դեպոզիտարիայի Դրամական միջոցների հաշվառման կանոններով սահմանված կարգով:

317. Հաշվի Օպերատորի կողմից արժեթղթերի պորտֆելի փոխանցման հանձնարականը ենթակա է կատարման ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

318. Եթե Հաշվի Օպերատորի կողմից արժեթղթերի պորտֆելի փոխանցման հանձնարարականի կատարման ժամանակ Հաշվի Օպերատորը բացահայտում է, որ արժեթղթերի պորտֆելի փոխանցման համար ներկայացված հաշիվներում Հաշվետիրոջ անունի, ազգանունի (անվանման) գրառումների միջև առկա են շեղումներ, ապա Հաշվի Օպերատորը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիային: Այդ դեպքում արժեթղթերի պորտֆելի փոխանցումն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի թույլտվությամբ:

319. Պորտֆելի փոխանցման հանձնարարականի հիմքով Համակարգում արժեթղթերի փաստացի փոխանցման պահը համարվում է պորտֆելի Փոխանցման հանձնարարականի անվերադարձելիության պահ:

320. «Ռեպո, հակադարձ ռեպո և ռեպո պայմանագրի խզում» գործարքներից բխող արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների կատարման առանձնահատկությունները և ժամկետները Համակարգում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով: Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև ռեպո, հակադարձ ռեպո գործարքներից բխող արժեթղթերի փոխանցումը իրականացվում է հետևյալ եղանակով.

1) Ռեպո գործարքի կնքման արդյունքում առևտրային բանկը Բանկմեյլ համակարգի ՀՏ523 (24B դաշտում նշվում է REP) հաղորդագրության միջոցով Կենտրոնական դեպոզիտարիային գործառնական օրվա մինչև ժամը 15:30-ը հանձնարարական է ներկայացնում Համակարգում իր սեփական հաշվից ՀՏ523-ում նշված արժեթղթերը նշված քանակով ՀՀ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի հաշվին փոխանցելու համար:
2) Համակարգը ստուգում է ՀՏ523–ում պարունակվող տեղեկություններն իր մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Ամբողջական համընկման դեպքում իրականացվում է արժեթղթերի փոխանցում, ինչպես նաև փոխանցված արժեթղթերի ծանրաբեռնում ռեպո գործարքի հիմքով, որի արդյունքում հաստատման վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիան Բանկմեյլ համակարգի ՀՏ535 հաղորդագրությամբ՝ տեղեկացնում է առևտրային բանկին, իսկ ՀՏ523 պատճենը ուղարկվում է ՀՀ Կենտրոնական բանկին: Եթե ստուգման արդյունքում ի հայտ է գալիս որևէ անհամապատասխանություն, ապա Կենտրոնական դեպոզիտարիան Բանկմեյլ համակարգի ՀՏ535 հաղորդագրությամբ տեղեկացնում է այդ մասին առևտրային բանկին:

321. Հակադարձ ռեպո կամ ռեպո զամբյուղից արժեթղթերի հետ փոխանցմամբ պայմանավորված արժեթղթերի փոխանցման գործառնությունը Համակարգում կարող է գրանցվել 320. Կետով սահմանված կարգով: Այս դեպքում արժեթղթերի փոխանցող կողմ է հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկը, իսկ Բանկմեյլ համակարգի ՀՏ523 հաղորդագրության 24B դաշտում նշվում է RMT:

322. Ռեպո պայմանագրի լուծմամբ պայմանավորված արժեթղթերի փոխանցման նպատակով ՀՀ Կենտրոնական բանկը Բանկմեջյ Համակարգի ՀՏ523 (24B դաշտում նշվում է RCL) հաղորդագրությամբ հանձնարարական է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիա: Համակարգը ստուգում է հանձնարարականում առկա տեղեկությունները Համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Տեղեկությունների համընկման արդյունքում ՀՀ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի հաշվին արժեթղթերը ծանրաբեռնումից հանվում են, որի արդյունքում ՀՀ Կենտրոնական բանկը, որպես հաստատում Կենտրոնական դեպոզիտարիայից Բանկմեջյ համակարգով ստանում է ՀՏ523 պատճենը և ՀՏ535 հաղորդագրությունը: Համակարգի կողմից տեղեկությունների ստուգման արդյունքում անհամապատասխանությունների ի հայտ գալու դեպքում արժեթղթերի փոխանցումը մերժվում է, որի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ծանուցվում է Համապատասխան ՀՏ535 հաղորդագրությամբ:

323. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հիմքով Համակարգում արժեթղթերի փաստացի փոխանցման պահը համարվում է Ռեպո և հակադարձ ռեպո հիմքով Փոխանցման հանձնարարականի անվերադարձելիության պահ:

## Գլուխ 29. Արժեթղթերի գրավի իրավունքի գրանցումը

324. Համակարգի անդամը (բացառությամբ ԿՇՀՀԱ-ի) արժեթղթերի գրավի իրավունքի գրանցման (այդ թվում՝ գրավի իրավունքի գրավադրման) գործառնություն կարող է իրականացնել միայն գրավատու կողմ հանդիսացող Հաշվետիրոջ ակտիվ կարգավիճակով հաշվի առկայության դեպքում: Համակարգում գրավադրված արժեթղթերով կորպորատիվ գործողությունների իրականացման դեպքում գրավի իրավունքը պահպանվում է կորպորատիվ գործողության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ: Այն դեպքում, երբ կորպորատիվ գործողության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ Ծրագրային համակարգում գրավի իրավունքն ինքնաշխատ չի գրանցվում, Հաշվի օպերատորը պարտավոր է անմիջապես Կենտրոնական դեպոզիտարային գրավոր տեղեկացնել այդ մասին: Տեղեկացումը ստանալուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան անմիջապես ապահովում է կորպորատիվ գործողության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով:

325. Արժեթղթերի գրավի իրավունքի գրանցումն իրականացնելու համար գրավատուն (բացառությամբ Համակարգի ուղղակի մասնակցի, որը դիմում է ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիային) պետք է դիմի իր հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին և ներկայացնի հետևյալ տեղեկությունները.

1) գրավադրման ենթակա արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) գրավատու և գրավառու կողմերի արժեթղթերի հաշվի համարները.
3) գրավադրման ենթակա արժեթղթերի քանակը.
4) գրավադրման դադարեցման ամսաթիվը (առկայության դեպքում).
5) գրավառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ հանրային ծառայությունների (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ գրավառուին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, ՀՎՀՀ կամ դրան համարժեք համարը (առկայության դեպքում), գրավառուի հասցեն, կապի միջոցները, եթե Հաշվի Օպերատորին չի ներկայացվում գրավառուի՝ ակտիվ կարգավիճակով Սեփական արժեթղթերի հաշվի համարը.
6) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող

փաստաթղթեր:
326. Համակարգում գրավադրման հանձնարարականի կատարման մասին տեղեկանալուց հետո Գրավառուի հաշիվը սպասարկվող Հաշվի օպերատորը պարտավոր է այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել գրավառուին:
327. Եթե ինչ-որ պատճառով արժեթղթերի գրավի իրավունքի գրանցման գործառնությունը Համակարգում գրանցելու համար չի ներկայացվել գրավառուի՝ ակտիվ կարգավիճակով Սեփական արժեթղթերի հաշվի համարը կամ Հաշվի Օպերատորը տեղեկություններ չունի գրավառուի՝ Համակարգում ակտիվ կարգավիճակով Սեփական արժեթղթերի հաշվի վերաբերյալ, ապա Հաշվի Օպերատորը Համակարգում գրավառուի համար բացում է Գրավառուի գրավային հաշիվ, որտեղ արտացոլվում են գրավառուի օգտին հաշվառված արժեթղթերը և որում գրառվում են անհրաժեշտ և բավարար տեղեկություններ՝ Գրավառուին միանշանակ նույնականացնելու համար:
328. Եթե գրավադրման գործառնության դեպքում գրավառու են հանդիսանում միաժամանակ մեկից ավելի անձինք, ապա Համակարգում բացված Գրավառուի գրավային հաշվում պարտադիր նշումներ են կատարվում բոլոր գրավառուների նույնականացման տվյալների մասին:
329. Արժեթղթերի հաջորդող գրավով պայմանավորված գործառնությունը Համակարգում գրանցվում է, եթե այն արգելված չէ գրավադրվող արժեթղթերի թողարկման պայմաններով և (կամ) արժեթղթերի գրանցման հայտարարագրում:
330. Գրավադրման գործառնությունը Հաշվի Օպերատոր(ներ)ի կողմից ենթակա է կատարման գրավատու կողմ հանդիսացող Հաշվետիրոջ հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի կողմից գրավադրման հանձնարականի ստացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:
331. Արժեթղթերի գրավառուի փոփոխության, ինչպես նաև գրավի իրավունքի գրավադրման դեպքում գրավի իրավունքի գրանցումը նոր գրավառուի օգտին կատարվում է Համակարգում տվյալ պահին գրանցված գրավառուի հանձնարարականի (կամ վերջինիս համաձայնության դեպքում՝ գրավատուի հանձնարարականի) հիման վրա՝ դրա ստացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## Գլուխ 30. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցման ծառայություն

332. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցման ծառայության մատուցման դեպքում գրավառուն գրավատուի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը՝

1) արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման պայման նախատեսող պայմանագիր/համաձայնագիր.
2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավատուին կատարված ծանուցումը և ապացույց գրավատուի կողմից դրա ստացման վերաբերյալ, որոնք կարող են Հաշվի Օպերատորին ներկայացվել ինչպես Հաշվի Օպերատորին դիմելիս, այնպես էլ գրավի առարկայի իրացման ժամանակ.
3) Կանոններով սահմանված արժեթղթերի փոխանցման հանձնարարական.
4) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթեր (այդպիսիք սահմանված լինելու դեպքում).
5) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ (առկայության դեպքում):

333. Հաշվի Օպերատորը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ստուգելով ներկայացված փաստաթղթերը և համոզվելով, որ դրանցում պահպանվել են Կանոններով և ՀՀ

օրենսդրությամբ սահմանված պահանջները, Համակարգում կատարում է համապատասխան հանձնարարականը: Հակառակ դեպքում հանձնարարականի կատարումը մերժվում է:

## Գլուխ 31. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցումը

334. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցումը կարող է կատարվել հետևյալ դեպքերում.
1) Գրավի իրավունքի դադարեցման ամսաթվի դրությամբ, որի մասին տեղեկությունը Համակարգ մուտք էր արվել գրավի իրավունքի գրանցման գործառնության ժամանակ.
2) Գրավառուի կողմից գրավադրման դադարեցման հանձնարարականի ներկայացման դեպքում.
3) գրավի իրավունքի դադարեցման վերաբերյալ գրավատուի կողմից հանձնարարականի և գրավառուի համաձայնությունը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում.
4) գրավի առարկա հանդիսացող՝ տվյալ դասի արժեթղթերը Համակարգում չեղարկվել կամ մարվել են (բացառությամբ կորպորատիվ գործողության հետևանքով արժեթղթերի մարման դեպքերի).
5) տվյալ դասի արժեթղթերով կորպորատիվ գործողության արդյունքում առաջացող գույքի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասությունների շրջանակում չէ.
6) Դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ ՀՀ օրենսդրությամբ նման իրավասություն ունեցող մարմնի համապատասխան որոշման հիման վրա:

335. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցման հանձնարարականը (որոշումը) ներկայացվում է գրավառուի՝ արժեթղթերի գրավի ամրագրումն ապահովող հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին, եթե գրավադրման դադարեցման հանձնարարականը ներկայացնողը գրավատուն չէ:

336. Գրավատուն արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցման հանձնարարականը և գրավառուի համաձայնությունը հավաստող փաստաթուղթը ներկայացնում է իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին:

337. Եթե արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցման հանձնարարականը (որոշումը) ներկայացվել է գրավատուին սպասարկող Հաշվի Օպերատորին, որը չի սպասարկում գրավառուի հաշիվը, ապա գրավատուին սպասարկող Հաշվի Օպերատորը գրավի իրավունքի դադարեցման համար դիմում է գրավառուի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին՝ միաժամանակ ներկայացնելով անհրաժեշտ հիմքերը: Նշված դեպքում, բավարար հիմքերի առկայության պարագայում, գրավառուի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի պետք է անմիջապես իրականացնի արժեթղթերի գրավադրման դադարեցման համար անհրաժեշտ գործողությունները:

338. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցման հանձնարարականը (որոշումը) Հաշվի Օպերատորի (Օպերատորների) կողմից ենթակա է կատարման ստացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

339. Եթե գրավատուի և գրավառուի հաշիվները սպասարկվում են տարբեր Հաշվի Օպերատորների կողմից, ապա գրավառուի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորը պարտավոր է անմիջապես տեղեկացնել գրավատուի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցման մասին:

## Գլուխ 32. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում և դրա դադարեցում Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա

340. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցումը Հաշվետիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցիչի կողմից իրականացվում է, որպես իր սեփական արժեթղթերի հաշվով կամ արժեթղթերի հաշվում առկա որևէ դասի և քանակի արժեթղթով(երով) գործառնությունների

իրականացման արգելք (սահմանափակում): Սառեցման գործառնությունը գրանցելու համար Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում սառեցման համապատասխան հանձնարարականը, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Սառեցման ենթակա արժեթղթերի քանակը.
3) Սառեցման վերաբերյալ հաճախորդի կողմից ներկայացվող այլ էական տվյալները.
4) Հաշվի Օպերատորի կանոններով (առկայության դեպքում) սահմանված այլ տեղեկություններ և հիմք հանդիսացող փաստաթղթեր:

341. Արժեթղթերի սառեցման դադարեցումը կատարվում է Հաշվետիրոջ համապատասխան հանձնարարականի հիման վրա կամ Հաշվետիրոջ հետ կնքված պահառության պայմանագրի լուծման, ժառանգության գրանցման և սառեցված արժեթղթերով դատարանի որոշմամբ նախատեսված գործառնությունն իրականացնելու դեպքերում: Դատարանի որոշման հիման վրա արժեթղթերի ապասառեցումը կատարվում է այն չափով, որքանով այն անհրաժեշտ է դատարանի որոշմամբ նախատեսված գործառնության իրականացման համար:

342. Արժեթղթերի սառեցման և դրա դադարեցման հանձնարարականը Հաշվի Օպերատորի կողմից ենթակա է կատարման ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

## Գլուխ 33. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում գրավադրված արժեթղթերի համար

343. Եթե բաժնետոմսերի գրավի դեպքում գրավատու և գրավառու կողմերը համաձայնության են եկել նաև բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի (սույն գլխում այսուհետ՝ քվեարկելու իրավունք) ժամանակավոր սահմանափակման վերաբերյալ, ապա սահմանափակման ամրագրման նպատակով գրավատու Հաշվետերը համապատասխան հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին՝ նշելով ԱՄՏԾ կամ ԱՆԾ-ն և արժեթղթերի քանակը, որոնց նկատմամբ պետք է կիրառվի ձայնի իրավունքի սահմանափակումը: Միաժամանակ գրավառուն իր հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում քվեարկելու իրավունքի սահմանափակման համաձայնություն, եթե արժեթղթերը արդեն իսկ ծանրաբեռնված են գրավադրման հիմքով:

344. Այն դեպքում, երբ գրավատու և գրավառու կողմերը քվեարկելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ համաձայնության են եկել արժեթղթերի գրավադրման գործառնությունը Համակարգում գրանցելու պահին, ապա քվեարկելու իրավունքի սահմանափակման գրառումը Համակարգում իրականացվում է՝ գրավադրման գործառնությունը գրանցելիս:

345. Քվեարկելու իրավունքի սահմանափակումը համարվում է դադարեցված արժեթղթերի գրավադրման դադարեցման գրանցմամբ կամ, եթե նախապես նշվել է ժամկետ՝ քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման իրականացման համար: Այն դեպքում, երբ քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման վերաբերյալ հանձնարարականը գրավատուի կողմից տրվել է ավելի վաղ, քան սույն կետում նշված հանգամանքների ի հայտ գալը, ապա քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցումը Համակարգում գրանցվում է միայն գրավառուի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

## Գլուխ 34. Համակարգում գործառնական ժամերը

346. Սույն կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև հանձնարարականները կարող են ներկայացվել Համակարգի Անդամներին դրանց իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածներում, որոնք, պետք է սահմանված լինեն այնպես, որ ապահովվեն ծառայությունների մատուցումը Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

347. Կենտրոնական դեպոզիտարիայի Ծրագրային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով գործառնությունները կատարվում են ամեն օրացուցային օր, 24-ժամյա ռեժիմով:
348. Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգի հետ կապված և Ծրագրային համակարգի կողմից ինքնաշխատ չիրականացվող գործառույթներն իրականացնում է յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը $09^{30}$-$17^{30}$-ը: Բացառիկ դեպքերում, ելնելով Համակարգի արդյունավետ գործունեության ապահովման նկատառումներից, Կենտրոնական դեպոզիտարիան կարող է Համակարգի հետ կապված և իրեն վերապահված գործառույթներն իրականացնել նաև ավելի երկար ժամանակահատվածում, ինչի մասին Համակարգի անդամները տեղեկացվում են նախապես՝ ՍիԲիԷյնեթ ցանցի միջոցով:
349. Կենտրոնական դեպոզիտարիան յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա ժամը $18^{00}$-ից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը $09^{00}$-ն՝ տեղեկությունների արխիվացման նպատակով, իրավունք ունի արգելափակել Ծրագրային համակարգում գործառնություններ կատարելու Համակարգի Անդամների հնարավորությունը:
350. Հաշվի Օպերատորը Թողարկողներից կամ Հաշվետերերից ստացված հարցումների պատասխանները վերջիններիս տրամադրելիս պետք է հաշվի առնի և տեղեկացնի Թողարկողին կամ Հաշվետիրոջը այն մասին, որ Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով ցուցակված (առևտրին թույլատրված) և ներկայացման օրվա ժամը $10^{30}$-ից մինչև ժամը $15^{40}$-ի դրությամբ առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերը կգտնվեն արժեթղթերի տեխնիկական հաշվին և չեն արտացոլվի Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվում:

## ԲԱԺԻՆ 5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Գլուխ 35. Համակարգի միջոցով պետական պարտատոմսերի պահառության իրականացման ընդհանուր սկզբունքները

351. Պետական պարտատոմսերի պահառություն իրականացնելիս Կենտրոնական դեպոզիտարիան հանդես է գալիս ենթապահառուի կարգավիճակով: Ընդ որում՝ եթե Հայաստանի Հանրապետության անունից օտարերկրյա պետություններում և/կամ օտարերկրյա արժույթով տեղաբաշխված պետական պարտատոմսերի պահառությունն իրականացնելիս Կենտրոնական դեպոզիտարիան հանդես է գալիս որպես Օտարերկրա պահառուի ենթապահառու, ապա նշված պարտատոմսերի պահառությունն Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառության համար Կանոններով սահմանված սկզբունքերով:
352. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող պետական պարտատոմսերի պահառության (ենթապահառության) գործառույթները կարգավորվում է ՀՀ օրենքներով, դրանց հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության նորմատիվ իրավական ակտերով, ՀՀ Կենտրոնական բանկի հետ Կենտրոնական դեպոզիտարիայի կնքած պայմանագրով, Կանոններով և Կենտրոնական դեպոզիտարիայի այլ իրավական ակտերով:
353. Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ Հաշվետիրոջ Դեպո հաշիվների բացումը) կատարվում է Կանոններով սահմանված կարգով Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվետիրոջ միջև կնքված պահառության պայմանագրի հիման վրա:
354. Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման (այդ թվում՝ Դեպո հաշվի բացման) համար նախապայման է հանդիսանում Հաշվետիրոջ՝ ՀՀ դրամով արտահայտված բանկային (ընթացիկ) հաշվի առկայությունը:
355. Համակարգում պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության և պետական

պարտատոմսերի պահառությունը կարգավորող իրավական ակտերով պարտադիր գրանցման (հաշվառման) ենթակա այլ իրավունքների հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով՝ այդ նպատակով Համակարգում բացված հաշիվների (ներառյալ՝ Դեպո հաշիվների) միջոցով: Հաշվետիրոջ պետական պարտատոմսերի Դեպո հաշիվները (ազատ, գրավադրված, արգելադրված (կալանված), գրավադրված արգելադրված) ավտոմատ ձևավորվում են Ծրագրային համակարգում՝ Հաշվետիրոջ համար Համակարգում հաշիվ բացելու ժամանակ:

356. Համակարգում առանձին հաշվառման են ենթակա Հաշվետիրոջը սեփականության իրավունքով պատկանող պետական պարտատոմսերն այն պետական պարտատոմսերից, որոնք սեփականատեր չհանդիսացող անձը օգտագործում, տիրապետում կամ տնօրինում է օրենքով սահմանված իրավասության կամ սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա: Առանձին հաշվառման են ենթակա նաև այն պետական պարտատոմսերը, որոնց նկատմամբ իրավունքները սահմանափակված են:

357. Համակարգի միջոցով Պետական պարտատոմսերով սահմանված, ինչպես նաև այդ պարտատոմսերով գործարքների հետ կապված իրավունքներն ու պարտականությունները ծագում են, իսկ այդ իրավունքների փոխանցումը, վերապահումը և սահմանափակումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես պահառուի, և/կամ Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես ենթապահառուի, մոտ վարվող հաշիվներում համապատասխան գրառում անելուց հետո:

358. Կենտրոնական դեպոզիտարիան Հաշվետիրոջ պետական պարտատոմսերով գործառնություններ կարող է իրականացնել միայն պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով, Կանոններով, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի և ՀՀ կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրերով սահմանված գրավոր, այդ թվում՝ նաև էլեկտրոնային կարգադրությունների հիման վրա: Որպես կարգադրություն կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը.

1) պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից՝ սահմանված ձևով լրացված և ներկայացված Դեպո հանձնարարականները, ինչպես նաև պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ այդ իրավունքները հավաստող այլ փաստաթղթերը.
2) դատական վճռի հիման վրա արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակման, փոխանցման, դադարեցման գործառնությունների կատարման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական ակտերը և/կամ ԴԱՀԿ որոշումները:

359. Դեպո հանձնարարականները ներկայացվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ կախված լինել մատուցվող ծառայության տեսակից: Դեպո հանձնարարականը պետք է պատշաճ վավերացված լինի Հաշվետիրոջ (իրավասու անձի) կողմից:

360. Հաշվի օպերատորի կողմից Դեպո հանձնարարականները Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցվում են Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով:

361.Համակարգ մուտքագրված Դեպո հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգն անհրաժեշտության դեպքում ձևավորում է համապատասխան հաղորդագրություն և ՀՀ կենտրոնական բանկի Բանկմեյլ համակարգով ուղարկում ՀՀ կենտրոնական բանկին: Բանկմեյլ համակարգով հաղորդագրության ուղարկման անհնարինության դեպքում Դեպո հանձնարարականը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում թղթային եղանակով:

362. ՀՀ կենտրոնական բանկի Բանկմեյլ համակարգով հաղորդագրությունն ուղարկելուց հետո մինչև տվյալ օրվա ժամը $16^{00}$-ն համապատասխան ՀՏ535 հաղորդագրության չստացվելու դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիան հանձնարարականի կատարման նպատակով ճշգրտումներ է իրականացնում Կենտրոնական բանկի հետ:

363. Հաշվի Օպերատորները Ծրագրային համակարգի միջոցով տեղեկանում են ներկայացված Դեպո հանձնարարականի կարգավիճակի վերաբերյալ (սպասվող, մերժված, կատարված):

364. Հանձնարարական ներկայացրած հաճախորդները կարող են հեռախոսով իրենց սպասարկող Հաշվի Օպերատորից ստանալ նախնական տեղեկատվություն ներկայացված Դեպո հանձնարարականների կատարման վերաբերյալ:
365. ՀՀ կենտրոնական բանկից հանձնարարականի կատարման վերաբերյալ ստացված հաստատումը հավաստում է, որ ՀՀ կենտրոնական բանկի Դեպո հաշվառման համակարգում կատարվել է համապատասխան գրառում՝ պետական պարտատոմսերով հավաստված իրավունքների ամրագրման, փոխանցման, դադարեցման, վերապահման կամ սահմանափակման վերաբերյալ:
366. ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատումը հիմք է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիայի համար՝ Համակարգում Հաշվետիրոջ հաշվում համապատասխան գրառում կատարելու համար:
367. Դեպո հանձնարարականի կատարման վերաբերյալ հաստատումը ստանալուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան Համակարգում Հաշվետիրոջ հաշվում կատարում է համապատասխան գրառում: Ծրագրային համակարգի խափանման դեպքում գրառումները կարող են կատարվել անմիջականորեն Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան աշխատակիցների կողմից:
368. Դեպո հանձնարարականը ենթակա է կատարման դրանում նշված աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ժամը $16^{00}$-ն, եթե Դեպո հանձնարարականը ստացվել է նշված աշխատանքային օրվա մինչև $15^{30}$ ընկած ժամանակահատվածում, կամ դրա և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման օրվա ընթացքում (մինչև ժամը $16^{00}$)՝ գործառնության կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում (արժեթղթերի բավարար մնացորդ, հաշվի կարգավիճակ (ազատ, գրավադրված և այլն)): Նշված ժամկետից ուշ ներկայացված Դեպո հանձնարարականները կատարվում են հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ժամը $16^{00}$-ն:
369. Դեպո հանձնարարականը ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրա տրմանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Վերջինիս չբավարարման դեպքում Դեպո հանձնարարականը հանվում է և Հաշվի Օպերատորի կողմից կազմվում է գործառնության չկատարման վերաբերյալ հաշվետվություն, որը ներկայացվում է Հաշվետիրոջը:
370. Հաշվի Օպերատորը մերժում է ներկայացված Դեպո հանձնարարականի ընդունումը (գործառնության կատարումը), եթե՝

1) հանձնարարականը չի բավարարում նրա ձևին ներկայացվող պահանջներին.
2) հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ՝ օրինական լինելու հարցում.
3) Հաշվետիրոջ Դեպո հաշվի կարգավիճակը թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը.
4) պետական պարտատոմսերի քանակը և կարգավիճակը (պետական պարտատոմսերի ծանրաբեռնումը երրորդ անձանց իրավունքով, գրավադրում և այլն) կամ գործառնության համար անհրաժեշտ ծավալով դրամական միջոցների բացակայությունը թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը.
5) հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել պետական պարտատոմսերը.
6) հանձնարարականի հետ ներկայացված չեն անհրաժեշտ փաստաթղթերը.
7) հանձնարարականի ներկայացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որի դեպքում հնարավոր կդառնար կատարել հանձնարարականը.
8) Հաշվետիրոջը պահառության ծառայությունների մատուցումը կասեցված է Հաշվի Օպերատորի (Կենտրոնական դեպոզիտարիայի) սակագների կանոններով սահմանված կարգով.
9) այլ հիմնավոր պատճառների առկայության դեպքում:

## Գլուխ 36. Պետական պարտատոմսերի հետ կապված եկամուտների վճարումը

371. Պետական պարտատոմսերի հետ կապված եկամուտների (մարման, մասնակի մարման, արժեկտրոնի գումարների) վճարումը կատարվում է շրջանառության մեջ գտնվող այդ թողարկման համարի բոլոր պետական պարտատոմսերի համար: Եթե եկամտի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա եկամտի վճարումների հետ կապված գործողությունները կատարվում են ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
372. Պետական պարտատոմսերի հետ կապված եկամուտների գումարները ՀՀ կենտրոնական բանկը մուտքագրում է Առևտրային հաշվին:
373. Կենտրոնական դեպոզիտարիան ՀՀ կենտրոնական բանկից ստանում է տեղեկություններ պետական պարտատոմսերի մարման (մասնակի մարման, արժեկտրոնային եկամուտի վճարման) համար տրամադրված միջոցների՝ Առևտրային հաշվին մուտքագրման վերաբերյալ:
374. Կենտրոնական դեպոզիտարիան պետական պարտատոմսերի մարման (մասնակի մարման, արժեկտրոնային եկամուտի վճարման) մուտքագրված գումարների պատկանելիության վերաբերյալ Համակարգում առկա տեղեկությունների հիման վրա նույն աշխատանքային օրվա ընթացքում կազմում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում Հաշվետերերի կողմից ներկայացված և Համակարգ մուտքագրված բանկային/Դրամական հաշիվներին դրամական միջոցների փոխանցման հանձնարարականներ:
375. Կենտրոնական դեպոզիտարիան պետական պարտատոմսերի մարման (մասնակի մարման, արժեկտրոնային եկամուտի վճարման) օրը կատարում է մարման (մասնակի մարման, արժեկտրոնային եկամուտի վճարման) գործառնություն՝ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկից գործառնության վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումը ստանալուց անմիջապես հետո:

## Գլուխ 37. Պետական պարտատոմսերով երկրորդային շուկայում գործառնությունների կատարումը

376. Երկրորդային շուկայում պետական պարտատոմսերով իրականացվում են առքուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պետական պարտատոմսերի փոխանակում և ՀՀ օրենսդրությամբ թույլատրված այլ գործարքներ:
377. Երկրորդային շուկայում Հաշվետիրոջ կողմից կատարված գործարքների հիմքում ընկած պետական պարտատոմսերի Դեպո հաշվարկները ներառում են Կենտրոնական դեպոզիտարիայի, գործարքի երկրորդ կողմին պահառության ծառայություններ մատուցող անձի և/կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների բազմությունը, որի արդյունքում գործարքի մասնակիցների միջև իրականացվում է պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» (DVP) կամ «Ազատ առաքում» սկզբունքով:
378. Պետական պարտատոմսերի ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների Դեպո և դրամական հաշվարկներն իրականացվում են առքուվաճառքի գործարքների հաշվարկների կանոնների համաձայն:
379. Առքուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն պետական պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ պարտատոմսերի կարգավիճակով Դեպո հաշվում առկա պետական պարտատոմսերը):
380. Առքուվաճառքի հիմքում ընկած պետական պարտատոմսերի փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդների միջև «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով իրականացվում է Կանոններով սահմանված ընդհանուր կարգով:
381. Առքուվաճառքի հիմքում ընկած պետական պարտատոմսերի միջենթապահառուական

փոխանցումը (երբ կողմերից միայն մեկն է Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդը) «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով իրականացվում է հետևյալ ընթացակարգի համաձայն՝ առքուվաճառքի կողմը, որը հանդիսանում է Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ, պետք իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին ներկայացնի պետական պարտատոմսերի «Առաքում՝ վճարման դիմաց» հանձնարարական, որը մուտքագրվում է Ծրագրային համակարգ և որի հիման վրա Ծրագրային համակարգում ձևավորվում են հետևյալ հանձնարարականները.

1) ՀՏ521, եթե հաճախորդը պետական պարտատոմսերը առաքողն է՝ վաճառողը. (այս դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան ստուգում է հանձնարարականում նշված ծավալով պետական պարտատոմսերի առկայությունը հաճախորդի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվին, ստուգման դրական արդյունքի դեպքում սառեցնում է արժեթղթերը, իսկ բացասական արդյունքի դեպքում հանձնարարականը չի կատարվում և Համակարգում նշվում է մերժման պատճառը).
2) ՀՏ520, եթե հաճախորդը պետական պարտատոմսերը ստացողն է՝ գնորդը, (այս դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան ստուգում է հանձնարարականը մուտքագրած Հաշվի Օպերատորի Դրամական հաշվում գնման համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը և դրական արդյունքի դեպքում սառեցնում է դրակաման միջոցները: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և Համակարգում նշվում է մերժման պատճառը):

382. Ծրագրային համակարգի միջոցով ձևավորված Դեպո հանձնարարականները Բանկմեյլ համակարգի միջոցով ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկ:

383. ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատման հիման վրա, նույն աշխատանքային օրվա ընթացքում, Ծրագրային համակարգն իրականացնում է առքուվաճառքի հիմքում ընկած պետական պարտատոմսերի մուտքագրում գնորդ-Հաճախորդի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվին, իսկ համապատասխան ծավալով դրամական միջոցները ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխանցվում են Կենտրոնական դեպոզիտարիայի Առևտրային հաշվից դեպո հանձնարարականում նշված վաճառողի՝ առևտրային բանկում բացված դրամական հաշվին:

384. Այն դեպքում, երբ վաճառողն է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ, Ծրագրային համակարգը ելքագրում է վաճառքի համար հաշվառված հաճախորդի պետական պարտատոմսերը և միաժամանակ դրամական միջոցներ մուտքագրվում են վաճառող կողմին սպասարկող Հաշվի Օպերատորի համապատասխան Դրամական հաշվին:

385. Սահմանված գործողությունները կատարելուց հետո Հաշվետիրոջ պահանջով, Կանոնների համաձայն, Հաշվետիրոջը ներկայացվում է կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն:

386. Առքուվաճառքի հիմքում ընկած պետական պարտատոմսերի փոխանցումը «Ազատ առաքում» սկզբունքով իրականացվում է հետևյալ կերպ՝ առքուվաճառքի կողմը, որը հանդիսանում է Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ, պետք է իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին ներկայացնի «Ազատ առաքման» հանձնարարական, որի հիման վրա Ծրագրային համակարգում ձևավորվում են հետևյալ հանձնարարականները՝

1) ՀՏ522՝ պետական պարտատոմսերի ազատ առաքման հանձնարարական, որը ձևավորվում է Կենտրոնական դեպոզիտարիային պարտատոմսեր վաճառող-հաճախորդի կողմից տրամադրված հանձնարարականի հիման վրա.
2) Ծրագրային համակարգը ստուգում է հանձնարարականում նշված ծավալով պետական պարտատոմսերի առկայությունը հաճախորդի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվին. ստուգման բացասական արդյունքի դեպքում հանձնարարականը չի կատարվում և Համակարգում նշվում է մերժման պատճառը.
3) հանձնարարականի ստուգման դրական արդյունքի դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան ծավալով արժեթղթերը փոխանցում է Book Entry հաշվին, միաժամանակ պարտատոմսերի ազատ առաքման ՀՏ522 է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկին.

4) ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատման հիման վրա, նույն աշխատանքային օրվա ընթացքում, Ծրագրային համակարգը համապատասխան գրառում է կատարում Համակարգում:

387. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդն է հանդիսանում պետական պարտատոմսերի գնորդը, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ՀՀ կենտրոնական բանկից ստանում է վաճառողին պահառության ծառայություններ մատուցող անձի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ուղարկված Դեպո հանձնարարականի օրինակը, որը հիմք է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գնորդ-հաճախորդի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվին տվյալ պետական պարտատոմսերի մուտքագրման համար: Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդի արժեթղթերի հաշվի կարգավորումները նախատեսում են տվյալ հաշվին արժեթղթերի մուտքագրումն իրականացնել միայն հաճախորդի համաձայնությամբ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը հաճախորդի համաձայնությունը չստանալու դեպքում ՀՏ522 հաղորդագրության միջոցով արժեղթերը հետ է ուղարկում առաքող կողմի հաշվեհամարին:

388. Եթե Հաշվի Օպերատորը չի կարող կատարել հաճախորդի կողմից ներկայացված Դեպո հանձնարարականը դրանում նշված կատարման օրը, նա վերադարձնում է հաճախորդին Դեպո հանձնարարականը առանց կատարման՝ նշելով մերժման պատճառը:

389. Այն դեպքում, երբ և գնորդը, և վաճառողը միաժամանակ հանդիսանում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդներ, Դեպո հաշվարկները սահմանափակվում են միայն Կենտրոնական դեպոզիտարիայի մոտ համապատասխան գործողությունների կատարմամբ:

390. Պետական պարտատոմսերի առքուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքներից բացի, պետական պարտատոմսերով երկրորդային շուկայի այլ գործարքների Դեպո հաշվարկներն իրականացվում են «Ազատ առաքման» սկզբունքով:

## Գլուխ 38. Պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացումը

391. Պետական պարտատոմսերի գրավատու կարող է հանդիսանալ միայն դրանց սեփականատեր (անվանատեր) հանդիսացող անձը:

392. Պետական պարտատոմսերի գրավառու կարող է լինել ցանկացած անձ՝ անկախ սեփականության իրավունքով իրեն պատկանող պետական պարտատոմսերի առկայությունից:

393. Գրավառուն գրավի պայմանագիրը կնքելուց առաջ պետք է ունենա Համակարգում բացված Սեփական արժեթղթերի հաշիվ:

394. Գրավի առարկա կարող են հանդիսանալ միայն այն պետական պարտատոմսերը, որոնց նկատմամբ գրավատուի իրավունքները սահմանափակված չեն (ազատ պարտատոմսերի Դեպո հաշվում առկա պետական պարտատոմսերը):

395. Պետական պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել միայն ՀՀ օրենսդրության համաձայն գրավատուի և գրավառուի միջև գրավոր պայմանագիր կնքելու և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետական պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը գրանցելու միջոցով:

396. Պահառության վերցված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այն գրանցվելու պահից:

397. Կենտրոնական դեպոզիտարիան գրավադրված պետական պարտատոմսերի հաշվառումն իրականացնում է ըստ առանձին գրավատուների՝ վերջիններիս «գրավով սահմանափակված» Դեպո հաշիվներով:

398. Համակարգում գրավատուի (գրավառուի) գրավի իրավունքների հաշվառումը վարում է ըստ առանձին գրավատուների, գրավառուների և գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի տարբերակիչ ծածկագրերի:

399. Պետական պարտատոմսերի գրավադրման գործառնության դեպքում պետական պարտատոմսերի գրավատուի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի գրավադրված պարտատոմսերի Դեպո հաշվին՝ այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ:
400. Համակարգում համապատասխան գործառնության ձևակերպումը (գրավի իրավունքի գրառումը) կատարում է ՀՀ կենտրոնական բանկից ստացված գործառնության կատարումը հաստատող փաստաթղթի հիման վրա:
401. Պետական պարտատոմսերով կարող են իրականացվել գրավի հետ կապված հետևյալ գործառնությունները՝

1) պետական պարտատոմսերի գրավադրում, որի արդյունքում սահմանափակվում է պետական պարտատոմսերն ազատ տնօրինելու գրավատուի իրավունքը, և գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ ծագում է գրավառուի գրավի իրավունքը: Պետական պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, երբ պետական պարտատոմսերի գրավադրման հետ միաժամանակ գրավառուի կողմից իրականացվում է փոխառության տրամադրումը (գրավատուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է ՀՏ540, իսկ գրավառուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա՝ ՀՏ541 հանձնարարականը), կամ առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման (գրավատուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է ՀՏ542 հանձնարարականը), երբ պետական պարտատոմսերի գրավադրումը չի ուղեկցվում գրավառուի կողմից միաժամանակ փոխառության տրամադրմամբ.
2) գրավի դադարեցում, որի արդյունքում վերականգնվում է գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի ազատ տնօրինման իրավունքը, և վերանում է դրանց նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը: Պետական պարտատոմսերի գրավից հանումը կարող է իրականացվել հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, երբ պետական պարտատոմսերի գրավից հանման հետ միաժամանակ գրավատուի կողմից իրականացվում է փոխառության մարումը (գրավատուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է ՀՏ544, գրավառուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա՝ ՀՏ543 հանձնարարականը), կամ առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, երբ պետական պարտատոմսերի գրավից հանումը չի ուղեկցվում գրավատուի կողմից միաժամանակ փոխառության մարմամբ (գրավառուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է ՀՏ545 հանձնարարականը).
3) գրավի առարկայից հրաժարվելը, որի արդյունքում դադարում է գրավատուի սեփականության իրավունքը գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ, և վերջիններս փոխանցվում են գրավառուի սեփականությանը առանց դատարան դիմելու (գրավատուի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է ՀՏ546 հանձնարարականը).
4) գրավադրված պետական պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարում, որի արդյունքում գրավատուն վաճառում է պետական պարտատոմսերը երրորդ անձին և պետական պարտատոմսերի իրացումից ստացված գումարից բավարարում է գրավառուի պահանջները.
5) գրավի առարկայի փոխարինում, որի արդյունքում գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, և դրանց փոխարեն գրավադրվում են այլ թողարկման պետական պարտատոմսեր.
6) գրավատուի փոխարինում, որի արդյունքում գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (նոր գրավատուի)՝

պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը.

7) գրավառուի փոխարինում, որի արդյունքում գրավառուի գրավի իրավունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը.
8) գրավադրված պետական պարտատոմսերի արգելադրում, որի արդյունքում արգելադրվում է պետական պարտատոմսերի տնօրինումը ցանկացած անձի կողմից՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը և գրավառուի գրավի իրավունքը և թույլատրելով արգելանքի տակ գտնվող պետական պարտատոմսերի հետ կատարել գործառնություններ միայն դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշմամբ.
9) գրավադրված պետական պարտատոմսերի արգելանքից հանում, որի արդյունքում պետական պարտատոմսերից հանվում է արգելադրումը, և պետական պարտատոմսերը կարող են տնօրինվել գրավադրված պետական պարտատոմսերի համար սահմանված կանոնների համաձայն.
10) գրավադրված պետական պարտատոմսերի փոխանցում, որի արդյունքում դատական ակտի հիման վրա պետական պարտատոմսերի նկատմամբ կարող են վերականգնվել սեփականության և/կամ գրավի՝ մինչև արգելադրումը եղած իրավունքները կամ դադարեցվել հին և գրանցվել սեփականության և (կամ) գրավի նոր իրավունքներ.
11) գրավադրված պետական պարտատոմսերի մարում, որի արդյունքում, համաձայն պետական պարտատոմսերի թողարկման պայմանների, իրականացվում է գրավադրված պետական պարտատոմսերի կամ մասնակի մարման դեպքում դրանց մի մասի մարումը, դադարում են մարված պետական պարտատոմսերի նկատմամբ բոլոր իրավունքները, և առաջանում են համապատասխան գույքային իրավունքներ մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հանդեպ.
12) գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարում, որի արդյունքում, համաձայն պետական պարտատոմսերի թողարկման պայմանների, պետական պարտատոմսերի սեփականատերերին վճարվում է պետական պարտատոմսերի տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը:

402. Պետական պարտատոմսերի գրավադրումը, գրավից հանումը, գրավի առարկայի փոխանցումը, գրավադրված պետական պարտատոմսերի իրացումից ստացված գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարումը կարող է իրականացվել միայն հաճախորդ-գրավատուի համապատասխան Դեպո հաշվի (ազատ կամ գրավադրված) մնացորդի սահմաններում:

## Գլուխ 39. Պետական պարտատոմսերի գրավադրման պայմանները

403. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, պետական պարտատոմսերի գրավադրման գործառնություններն իրականացվում են հետևյալ պայմաններով՝

1) պետական պարտատոմսերի գրավադրումը հօգուտ գրավառուի չի ուղեկցվում միաժամանակ գրավառուի կողմից գրավատուին ՀՀ դրամով փոխառության տրամադրմամբ.
2) պետական պարտատոմսերի գրավադրման գործառնությունը նախաձեռնում է գրավատուն.
3) եթե գրավատուն Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդն է, ապա վերջինս Հաշվի Օպերատորին (Կենտրոնական դեպոզիտարիային) է ներկայացնում պետական պարտատոմսերի գրավադրման միակողմանի հանձնարարականը և գրավի պայմանագրի պատճեն.

4) ներկայացված հանձնարարականի հիման վրա Հաշվի Օպերատորն իրականացնում է նաև անհրաժեշտ ծավալով պետական պարտատոմսերի առկայության ստուգում հաճախորդի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվին և դրական արդյունքի դեպքում Համակարգում մուտքագրում համապատասխան հանձնարարականը, որի արդյունքում արժեթղթերը գրավադրում են և որի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է ՀՏ542 հանձնարարականը.
5) եթե կատարված ստուգման արդյունքը բացասական է ապա հանձնարարականը մերժվում է և մերժման պատճառի նշմամբ՝ վերադարձվում հաճախորդին: Հակառակ դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան Դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկ.
6) ՀՀ կենտրոնական բանկը, ստանալով Դեպո հանձնարարականը, իրականացնում է համապատասխան ստուգումներ, եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Կենտրոնական դեպոզիտարիային, և գործառնությունը համարվում է մերժված.
7) ստուգման դրական արդյունքի դեպքում կատարվում է գրավի իրավունքի վերաբերյալ գրառում, որից հետո ՀՀ կենտրոնական բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային (գրավառու հաճախորդ ունենալու դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիային գրավադրման վերաբերյալ տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկը, որը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում իրեն տրամադրված Դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը).
8) ՀՀ կենտրոնական բանկից ստացած հաստատման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան կատարում է համապատասխան գրառումներ իր մոտ վարվող Դեպո հաշվառման համակարգում՝ Ծրագրային համակարգը պետական պարտատոմսերը գրավատուի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվից փոխանցում է վերջինիս գրավադրված պարտատոմսերի Դեպո հաշվին, այդ պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի ձևակերպմամբ, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և հաճախորդ-գրավառուն և/կամ հաճախորդ-գրավատուն սահմանված փաստաթղթերով (հաճախորդ-գրավառուին տրամադրում վերջինիս օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք, իսկ հաճախորդ-գրավատուին տրամադրում տեղեկանք իր գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ և քաղվածք գրավադրված պետական պարտատոմսերի Դեպո հաշվից) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

404. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավադրման գործառնություններն իրականացվում են հետևյալ կերպ՝

1) հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավադրման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի կողմից ՀՀ դրամով փոխառության/վարկի տրամադրումը գրավատուին և վերջինիս կողմից պետական պարտատոմսերի գրավադրումը հօգուտ գրավառու-վարկատուի իրականացվում է միաժամանակ.
2) հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ արժեթղթերի գրավադրման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Դրա համար հաճախորդ-գրավատուն և/կամ հաճախորդ-գրավառուն Հաշվի Օպերատորին ներկայացնում են համապատասխան հանձնարարականները.
3) Հաշվի Օպերատորն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Գրավատուն Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ հանդիսանալու դեպքում իրականացվում է հանձնարարականի վավերության ստուգում և անհրաժեշտ ծավալի պետական պարտատոմսերի առկայության ստուգում հաճախորդ-գրավատուի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվում: Դրական արդյունքի

դեպքում Հաշվի Օպերատորը Ծրագրային համակարգ է մուտքագրում համապատասխան հանձնարարականը, որի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ՀՏ540 հանձնարարականը: Գրավառուն Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ հանդես գալու դեպքում, իրականացվում է Դեպո հանձնարարականի վավերության, անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգում՝ համապատասխան Դրամական հաշվում: Դրական արդյունքի դեպքում Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ՀՏ541 հանձնարարականը.

4) այնուհետև կատարվում են Կանոններ 403. կետի 5) և 6) ենթակետերի համանման գործողությունները.
5) ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կատարում է դրամական միջոցների փոխանցում Առևտրային հաշվին (երբ գրավատուն հանդիսանում է Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ), և կատարում համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի այլ գրառումներ.
6) այնուհետև ՀՀ կենտրոնական բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային.
7) ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում Համակարգում, ինչպես նաև իրականացնում է դրամական միջոցների փոխանցում հաճախորդ-գրավատուին սպասարկող Հաշվի օպերատորի կողմից ամփոփ ներդրողների Դրամական հաշվին, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և հաճախորդ-գրավառուն և/կամ հաճախորդ-գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ.
8) եթե գրավատուն և գրավառուն միաժամանակ հանդիսանում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդներ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պետական պարտատոմսերի գրավադրման հանձնարարականը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող Դեպո հանձնարարականներն ընդունելուց հետո: Այդ դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է վարկի գումարի փոխանցում գրավատուի հաշիվը սպասարկող հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվին:

## Գլուխ 40. Պետական պարտատոմսերի գրավից հանումը (ազատումը)

405. Պետական պարտատոմսերի գրավից հանման գործառնության դեպքում պետական պարտատոմսերը գրավատուի գրավադրված Դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվի վրա՝ գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի ազատ տնօրինման իրավունքի վերականգնումով և այդ պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարումով:
406. Պետական պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը կարող է կատարվել ինչպես գրավադրված պետական պարտատոմսերի ողջ ծավալի, այնպես էլ դրա մի մասի նկատմամբ:
407. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունները իրականացվում են հետևյալ պայմաններում՝

1) գրավառուն նախաձեռնում է գրավից պետական պարտատոմսերի ազատման գործառնությունն առանց գրավատուի կողմից միաժամանակ հիմնական պարտավորության (վարկի) մարման գործառնության իրականացման.

2) հաճախորդ-գրավառուն Հաշվի Օպերատորին է ներկայացնում գրավի դադարեցման հանձնարարական.
3) Հաշվի Օպերատորն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ և հանձնարարականի վավերության ստուգումը և մուտքագրումը Ծրագրային համակարգ: Ծրագրային համակարգում հանձնարարականի մուտքագրումից հետո Ծրագրային համակարգը համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգման հետ միաժամանակ ստուգում է նաև հաճախորդ-գրավառուի օգտին տվյալ գրավատուի կողմից բավարար ծավալի պետական պարտատոմսերի գրավադրված լինելու վերաբերյալ տեղեկությունները: Եթե Հաշվի Օպերատորի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին.
4) Մուտքագրված հանձնարարականի հիման վրա Ծրագրային համակարգն իր հերթին համապատասխան Դեպո հանձնարարական (ՀՏ545) է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկ.
5) ՀՀ կենտրոնական բանկը, ստանալով Դեպո հանձնարարականը, իրականացնում է համապատասխան ստուգումներ և ստուգման դրական արդյունքի դեպքում կատարում է գրավի իրավունքի դադարեցման գրառում, այնուհետև գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային.
6) այն դեպքում, երբ գրավատուն է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ, ՀՀ կենտրոնական բանկը Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնում է գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված Դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը.
7) ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան գրառումներ է կատարում Համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և հաճախորդները (գրավառուն և/կամ գրավատուն) սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ.
8) Եթե ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին, և գործառնությունը համարվում է մերժված:

408. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավից ազատման գործառնություններն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) պետական պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Այդ գործառնությունը իրականացնելու համար հաճախորդ-գրավատուն և/կամ հաճախորդ-գրավառուն Հաշվի օպերատորին ներկայացնում են համապատասխան հանձնարարականները.
2) Հաշվի Օպերատորն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Ընդ որում, եթե Հաշվի Օպերատորի հաճախորդը գրավառուն է, ապա Հաշվի Օպերատորի կողմից իրականացվող ստուգումը պետք է ներառի Դեպո հանձնարարականի վավերության և համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը: Դրական արդյունքի դեպքում Հաշվի Օպերատորը Համակարգում մուտքագրում է համապատասխան հանձնարարականը, որի հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ՀՏ543 հանձնարարականը: Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդը գրավատուն է, ապա Հաշվի Օպերատորի կողմից իրականացվող ստուգումը պետք է ընդգրկի Դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ

ծավալի պետական պարտատոմսերի առկայության ստուգումը հաճախորդ-գրավատուի գրավադրված պարտատոմսերի Դեպո հաշվում և անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգումը Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվում: Դրական արդյունքի դեպքում և Հաշվի Օպերատորի կողմից Համակարգում համապատասխան հանձնարարականի մուտքագրումից հետո Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում է և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ՀՏ544 հանձնարարականը.

3) այնուհետև կատարվում են Կանոնների 403. կետի 5) և 6 ենթակետերի համանման գործողությունները.
4) ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է դրամական միջոցների փոխանցում Առևտրային հաշվին (երբ գրավառուն Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդն է), և միաժամանակ իրականացնում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ ու գրավի իրավունքի դադարեցման այլ գրառումներ.
5) այնուհետև ՀՀ կենտրոնական բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային (Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդը գրավատուն լինելու դեպքում ուղարկում է քաղվածք համապատասխան Դեպո հաշիվներից).
6) Կենտրոնական դեպոզիտարիան ՀՀ կենտրոնական բանկից ստացած փաստաթղթերի հիման վրա համապատասխան գրառումներ է կատարում Համակարգում, իսկ եթե Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդը գրավառուն է, ապա Կենտրոնական դեպոզիտարիան գրավառուի սպասարկող Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվին է փոխանցում համապատասխան ծավալով դրամական միջոցները, որից հետո գործառնությունը համարվում է կատարված.
7) գործառնության արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդը(ները) սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ.
8) եթե գրավատուն և գրավառուն միաժամանակ հանդիսանում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդներ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պետական պարտատոմսերի գրավից ազատման հանձնարարականը, ինչպես նաև գրավատուին սպասարկող Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվին համապատասխան ծավալով դրամական միջոցներ է փոխանցում՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող հանձնարարականները ընդունելուց հետո:

## Գլուխ 41. Պետական պարտատոմսերի գրավի առարկայից հրաժարվելը

409. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության չկատարման պարագայում, առանց դատարան դիմելու, գրավատուն հրաժարվում է գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերից (կամ դրանց մի մասից)՝ հանձնելով դրանք ի սեփականություն գրավառուին:
410. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կարող է կատարվել միայն գրավի պայմանագրում կամ գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում նման պայման սահմանված լինելու դեպքում:
411. Գրավի առարկայից հրաժարման գործառնության դեպքում պետական պարտատոմսերը գրավատուի գրավադրված պարտատոմսերի Դեպո հաշվից փոխանցվում են գրավառուի ազատ պարտատոմսերի Դեպո հաշվի վրա, այդ պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքի և գրավառուի գրավի իրավունքի դադարումով և գրավառուի սեփականության իրավունքի ծագումով:
412. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կողմից:
413. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է հետևյալ կերպ՝

1) հաճախորդ-գրավատուն Հաշվի Օպերատորին ներկայացնում է գրավի առարկայից հրաժարման հանձնարարական.
2) Հաշվի Օպերատորն իրականացնում է ներկայացված փաստաթղթի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են Դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պետական պարտատոմսերի առկայության ստուգումը հաճախորդ-գրավատուի գրավադրված պարտատոմսերի Դեպո հաշվում: Եթե Հաշվի Օպերատորի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում Հաշվի Օպերատորն ընդունում է այն կատարման, իրականացնում անհրաժեշտ գրանցումները Համակարգում, որից հետո Ծրագրային համակարգը ձևավորում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան Դեպո հանձնարարական (ՀS546).
3) ՀՀ կենտրոնական բանկը, ստանալով Դեպո հանձնարարականը իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն ստուգումներ.
4) ստուգման դրական արդյունքի դեպքում կատարվում են համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի դադարման այլ գրառումներ.
5) այնուհետև ՀՀ կենտրոնական բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային (հաճախորդ-գրավառուի դեպքում ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային գործառնության կատարման մասին՝ ուղարկելով Դեպո հանձնարարականի օրինակը).
6) ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում Համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն և/կամ գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

414. Գրավադրված պետական պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարումը գործառույթ է, որի արդյունքում գրավատուն վաճառում է պետական պարտատոմսերը երրորդ անձին և պետական պարտատոմսերի իրացումից ստացված գումարից բավարարում է գրավառուի պահանջները, ընդ որում՝
1) առանց դատարան դիմելու գրավադրված պետական պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարման գործառնությունը կարող է կատարվել այն դեպքում, եթե այդպիսի գործառնություն նախատեսված է գրավադրման պայմանագրում կամ գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում.
2) տվյալ գործառնությունն իրականացվում է երկու գործառնությունների միջոցով՝ ըստ Կանոններում ներկայացված գրավառուի կողմից նախաձեռնված գրավից հանման գործառնության և այնուհետև գրավատուի կողմից երրորդ անձին գրավից հանված պետական պարտատոմսերի վաճառքի գործառնության.
3) պետական պարտատոմսերի վաճառքի արդյունքում գրավատուին վճարված դրամական միջոցները այնուհետև վերջինիս կողմից փոխանցվում են գրավառուին:

## Գլուխ 42. Պետական պարտատոմսերի գրավի առարկայի փոխարինումը

415. Գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի փոխարինման գործառնությունն իրականացվում է այն դեպքում, երբ գրավի պայմանագրով գրավադրվել են պետական պարտատոմսեր, որոնց մարման (մասնակի մարման) ժամկետը նախորդում է գրավի պայմանագրում սահմանված հիմնական պարտավորության կատարման ժամկետին, կամ գրավի պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

416. Գրավի առարկայի փոխարինման դեպքում նախկինում գրավադրված (փոխարինվող)

պետական պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, որի արդյունքում այդ պետական պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի ազատ դեպո հաշվի վրա, այդ պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարեցմամբ, միաժամանակ փոխարինող պետական պարտատոմսերը գրավադրվում են, որի արդյունքում այդ պետական պարտատոմսերը գրավատուի ազատ դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվի վրա, փոխարինող պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ:

417. Գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի փոխարինումը կարող է կատարվել միայն գրավառուի համաձայնության դեպքում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով այլ բան սահմանված չէ:

418. Գրավի առարկայի փոխարինման դեպքում գրավի պայմանագրում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

419. Գրավի առարկայի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Հաճախորդ-գրավատուն Հաշվի Օպերատորին ներկայացնում է պետական պարտատոմսերի գրավի փոխարինման գրավատուի հանձնարարականը և փոփոխված գրավի պայմանագիրը, իսկ հաճախորդ-գրավառուն՝ արժեթղթերի գրավի փոխարինման գրավառուի հանձնարարականը:

420. Հաճախորդ-գրավառու ունենալու դեպքում Հաշվի Օպերատորն ստուգում է Դեպո հանձնարարականի վավերությունը և փոխարինվող գրավի իրավունքի համապատասխան ծավալի առկայությունը, իսկ որպես գրավատուի Հաշվի Օպերատոր՝ ստուգում է Դեպո հանձնարարականի վավերությունը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի փոխարինվող պետական պարտատոմսերի առկայությունը հաճախորդ-գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվում, անհրաժեշտ ծավալի փոխարինող պետական պարտատոմսերի առկայության ստուգումը նրա ազատ դեպո հաշվում, գրավի պայմանագրի դրույթները:

421. Եթե Հաշվի Օպերատորի կողմից իրականացվող ստուգումների արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին (գրավատու և/կամ գրավառու):

422. Ստուգման դրական արդյունքի դեպքում Հաշվի Օպերատորն ընդունում է Դեպո հանձնարարականը կատարման և կատարում համապատասխան ձևակերպումներ Համակարգում: Մուտքագրված տեղեկությունների հիման վրա Ծրագրային համակարգի կողմից ձևավորվում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան դեպո հանձնարարականներ (ՀՏ547, ՀՏ548):

423. Եթե, և գրավատուն, և գրավառուն միաժամանակ սպասարկվում են Կենտրոնական դեպոզիտարիայի մոտ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան գրավի առարկայի փոխարինման հանձնարարականը ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող հանձնարարականներն ընդունելուց հետո:

424. ՀՀ կենտրոնական բանկը, ստանալով Դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Կենտրոնական դեպոզիտարիային, և գործառնությունը համարվում է մերժված:

425. Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի վերաձևակերպման այլ գրառումներ: Այնուհետև գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային, որպես գրավառուի և/կամ գրավատուի Ենթապահառու, ինչպես նաև գործառնական օրվա ավարտից հետո ուղարկվում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:

426. ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված հաստատման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան գրառումներ է կատարում Համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն և/կամ գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում է գործառնության կատարման վերաբերյալ:

### Գլուխ 43. Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինումը

427. Գրավատուի փոխարինումը գործառնություն է, որի արդյունքում գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (նոր գրավատուի)՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը: Գրավատուի փոխարինման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի: Գրավատուի փոխարինման դեպքում գրավադրված պետական պարտատոմսերը գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվից փոխանցվում են նոր գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվի վրա՝ միաժամանակ միևնույն գրավառուի անունով գրավի իրավունքի համապատասխան վերագրանցմամբ:
428. Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կողմից կամ իրավահաջորդության դեպքում՝ պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձի (նոր գրավատուի) կողմից:
429. Պետական պարտատոմսերի հաճախորդ-գրավատուն Հաշվի Օպերատորին է ներկայացնում պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինման հանձնարարականը, որի վրա պետք է առկա լինեն գրավառուի, նոր գրավատուի համաձայնությունը արտացոլող գրառում՝ վավերացված իրենց պահառության ծառայություններ մատուցող անձանց կողմից:
430. Հաշվի Օպերատորն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ, ինչպես նաև հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պետական պարտատոմսերի առկայության ստուգումը գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին:
431. Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա Հաշվի Օպերատորը համապատասխան գրանցումներ է կատարում Համակարգում: Մուտքագրված տեղեկությունների հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում ՀS549 Դեպո հանձնարարականը: Անհրաժեշտության դեպքում հանձնարարականին կցվում են ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:
432. ՀՀ կենտրոնական բանկը, ստանալով Դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Կենտրոնական դեպոզիտարիային, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կատարում է գրավի իրավունքի վերաձևակերպման վերաբերյալ գրառում՝ Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնելով գործառնության կատարման հաստատում, ինչպես նաև աշխատանքային օրվա ավարտից հետո ուղարկվում է քաղվածք համապատասխան Դեպո հաշիվներից:
433. Եթե գրավատուի փոխարինման գործառնությունում Կենտրոնական դեպոզիտարիան հանդես է գալիս որպես գրավառուի և/կամ նոր գրավատուի պահառու, ապա ՀՀ կենտրոնական բանկը պետք է Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնի գրավատուի պահառության ծառայություններ մատուցող անձից ստացված Դեպո հանձնարարականի օրինակը և

ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:
434. ՀՀ կենտրոնական բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է համապատասխան գրառումներ Համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված և գրավառուն և/կամ գրավատուն և/կամ նոր գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք, փաստաթղթերի կրկնօրինակներ) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

## Գլուխ 44. Պետական պարտատոմսերի գրավառուի փոխարինումը

435. Գրավառուի փոխարինումը գործառնություն է, որի արդյունքում գրավառուի գրավի իրավունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը:
436. Գրավառուի փոխարինումը գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքների փոխանցումն է այլ անձի (նոր գրավառուի)՝ պահանջը զիջելու միջոցով պարտատիրոջ իրավունքները այլ անձի անցնելու կանոններին համաձայն:
437. Գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները նոր գրավառուին զիջելը վավեր է, եթե նոր գրավառուին զիջվել է գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը:
438. Գրավառուի իրավունքները նոր գրավառուին անցնելու համար գրավատուի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
439. Գրավառուի փոխարինման դեպքում փոփոխվում են միայն գրավի իրավունքի գրառումները՝ նախկին գրավառուի գրավի իրավունքը դադարում է, այդ գրավի իրավունքը վերագրանցվում է հօգուտ նոր գրավառուի:
440. Գրավառուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է նախկին գրավառուի կողմից: Գրավառուի փոխարինման համար նախկին հաճախորդ-գրավառուն Հաշվի Օպերատորին ներկայացնում է գրավառուի փոխարինման հանձնարարական, ինչպես նաև գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ նոր գրավառուի իրավունքները հավաստող փաստաթղթեր, մասնավորապես՝

1) ՀՀ օրենսդրության համաձայն կազմված ցեսիայի պայմանագիրը, ըստ որի՝ գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները զիջվում են նոր գրավառուին (այդ պայմանագիրը պետք է համապատասխանեցված լինի գրավի պայմանագրին).
2) ՀՀ օրենսդրության համաձայն կազմված ցեսիայի պայմանագիրը, ըստ որի՝ գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը զիջվում է նոր գրավառուին (այդ պայմանագիրը պետք է համապատասխանեցված լինի գրավի պայմանագրին).
3) եթե օրենքով կամ գրավի պայմանագրով գրավառուի փոխարինման գործառնության համար պահանջվում է գրավատուի համաձայնությունը, ապա գրավառուի փոխարինման Դեպո հանձնարարականի վրա պետք է առկա լինի գրավատուի համաձայնությունն արտացոլող գրառում՝ վավերացված գրավատուին պահառության ծառայություններ մատուցող անձի կողմից:

441. Հաշվի օպերատորն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի ստուգումներ, ինչպես նաև համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգում: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին:
442. Ստուգման դրական արդյունքի դեպքում Հաշվի Օպերատորը կատարում է համապատասխան գրանցումներ Համակարգում: Մուտքագրված տեղեկությունների հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան Դեպո հանձնարարականը (ՀՏ550)՝ անհրաժեշտության դեպքում կցելով ներկայացված այլ

փաստաթղթերի կրկնօրինակները:
443. ՀՀ կենտրոնական բանկը, ստանալով Դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա Դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Կենտրոնական դեպոզիտարիային, և գործառնությունը համարվում է մերժված: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա կատարում է գրավի իրավունքի վերաձևակերպման գրառումներ, այնուհետև ՀՀ կենտրոնական բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Կենտրոնական դեպոզիտարիային: Եթե Կենտրոնական դեպոզիտարիան գրավառուի փոխարինման գործառնությունում հանդես է գալիս որպես գրավատուի/նոր գրավառուի պարտատոմսերի ենթապահառու, ապա ՀՀ կենտրոնական բանկը ներկայացնում է նախկին գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձից ստացված Դեպո հանձնարարականի օրինակները, որոնք հավաստում են տվյալ գործառնության կատարման փաստը՝ կից ներկայացնելով նաև ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:
444. ՀՀ կենտրոնական բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում համապատասխան գրառումներ Համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, ինչի մասին Հաճախորդը տեղեկացվում է սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, փաստաթղթերի կրկնօրինակներ):

## Գլուխ 45. Գրավադրված պետական պարտատոմսերի մարումը

445. Գրավադրված պետական պարտատոմսերի մարումը գործառնություն է, որի արդյունքում, համաձայն պետական պարտատոմսերի թողարկման պայմանների, իրականացվում է գրավադրված պետական պարտատոմսերի կամ մասնակի մարման դեպքում դրանց մի մասի մարումը, դադարում են մարված պետական պարտատոմսերի նկատմամբ բոլոր իրավունքները, և առաջանում են համապատասխան գույքային իրավունքներ մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հանդեպ:
446. Գրավադրված պետական պարտատոմսերի մարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորությունները ժամանակին չկատարելու, գրավի առարկան ժամանակին չփոխարինելու կամ այլ դեպքերում պետական պարտատոմսերը տվյալ թողարկման մարման, մասնակի մարման օրվա դրությամբ մնում են գրավով սահմանափակված:
447. Գրավադրված պետական պարտատոմսերի մարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պետական պարտատոմսերի ողջ ծավալի մարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:
448. Գրավադրված պետական պարտատոմսերի մարման դեպքում գրավի առարկա են դառնում մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները, և իրականացվում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում) որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի:
449. Գրավադրված պետական պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի հաշվառումը իրականացվում է հետևյալ կերպ՝

1) ՀՀ կենտրոնական բանկը գրավադրված պետական պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները փոխանցում է ՀՀ կենտրոնական բանկում Կենտրոնական դեպոզիտարիայի հատուկ միջանկյալ հաշվի վրա (երբ Գրավատուն Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդն է), և իրականացվում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում)՝ որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի: Հաշվառումը վարվում է ըստ յուրաքանչյուր գրավատուի, գրավառուի և պետական պարտատոմսերի թողարկումների: Տվյալ փոխանցման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ հաճախորդ-

գրավատու և/կամ հաճախորդ-գրավառու ունենալու դեպքում.

2) ոչ ուշ, քան հինգ բանկային օրվա ընթացքում, Կենտրոնական դեպոզիտարիան հաճախորդ-գրավատու ունենալու դեպքում, պարտավոր է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել՝ համաձայնագիր, ըստ որի՝ գրավատուն և գրավառուն համաձայնում են առ այն, որ գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները հաշվառվեն երրորդ անձ հանդիսացող առևտրային բանկում: Տվյալ համաձայնագիրը պետք է վավերացվի տվյալ առևտրային բանկի կողմից, գրավատուի, գրավառուի, Կենտրոնական դեպոզիտարիայի և գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձի կողմից: Համաձայնագրին կից ներկայացվում է միջանկյալ հաշվից դրամական միջոցները փոխանցելու վճարման հանձնարարականը: Եթե հինգ բանկային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան չներկայացնի վերը նշված փաստաթղթերը, ապա ՀՀ կենտրոնական բանկը իրավասու է գրավադրված գումարները փոխանցել նոտարի դեպոզիտ՝ միաժամանակ տրամադրելով նոտարին տեղեկություններ գրավադրված գումարների հետ կապված Կենտրոնական դեպոզիտարիայի և գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձի վերաբերյալ.
3) ստացված համաձայնագրի և վճարման հանձնարարականի հիման վրա ՀՀ կենտրոնական բանկը դրամական միջոցները փոխանցում է միջանկյալ հաշվից գրավի իրավունքը հաշվառող առևտրային բանկի թղթակցային հաշվի վրա, հանում է դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը իր հաշվառումից և այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային և գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձին
4) գրավի իրավունքը հաշվառող առևտրային բանկը բանկային փոխանցման և իրեն ներկայացված համաձայնագրի օրինակի հիման վրա մուտքագրում է դրամական միջոցներն իր մոտ բացված գրավատուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա և հետագայում իրականացնում է այդ գրավի հաշվառման սպասարկումը գրավատուի և գրավառուի հանձնարարականների հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշման հիման վրա.
5) գործառնության կողմ հանդիսացող Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդը տեղեկացվում է գործառնության կատարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերով (քաղվածք, տեղեկանք):

## Գլուխ 46. Գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարումը

450. Գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ ըստ պետական պարտատոմսերի թողարկման պայմանների՝ պետական պարտատոմսերի սեփականատերերին վճարվում է արժեկտրոնային կամ տոկոսային եկամուտ (այսուհետ՝ տոկոսներ):
451. Գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պետական պարտատոմսերի ողջ ծավալի տոկոսների վճարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:
452. Գրավառուի գրավի իրավունքը տարածվում է գրավադրված պետական պարտատոմսերից ստացված տոկոսների վրա՝ գրավի պայմանագրով նախատեսված դեպքերում:
453. Գրավի պայմանագրում նման պայման սահմանված չլինելու դեպքում տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը պետք է ազատ տնօրինվի գրավատուի կողմից:
454. Եթե գրավատուն Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդն է, ապա գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

1) ՀՀ կենտրոնական բանկի կողմից տոկոսները հաշվեգրվում են ՀՀ կենտրոնական բանկում վարվող Կենտրոնական դեպոզիտարիայի հատուկ գրավային հաշվի վրա, ինչի մասին Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացվում է.
2) Եթե գրավի պայմանագրով նախատեսված չէ գրավի իրավունքի տարածում գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց ստացված տոկոսների վրա, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ներկայացնում է այդ միջոցները Առևտրային հաշվին փոխանցման հանձնարարական՝ վավերացված նաև գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձի կողմից.
3) Կենտրոնական բանկի կողմից վճարման հանձնարարականը կատարելուց հետո, Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան ծավալով դրամական միջոցները մուտքագրում է հաճախորդ-գրավատուին սպասարկող Հաշվի օպերատորի հաճախորդների ամփոփ Դրամական հաշվին.
4) Եթե գրավի պայմանագրով նախատեսված է գրավի իրավունքի տարածում գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց ստացված տոկոսների վրա, ապա գործում են Կանոնների գրավադրված պետական պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների համար սահմանված կանոնները:

## Գլուխ 47. Պետական պարտատոմսերով գործառնությունների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, հաշվետվությունների տրամադրումը

455. Պետական պարտատոմսերով գործառնություն կատարելիս հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին Հաշվի Օպերատորի կողմից տրամադրվում է հաշվետվություն՝ ներկայացված Դեպո հանձնարարականների կատարման վերաբերյալ, այդ հանձնարարականը կատարելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:
456. Սույն գլխով չսահմանված դեպքերում Համակարգից քաղվածքների, հաշվետվությունների և տեղեկանքների տրամադրումը կատարվում է Կանոններով սահմանված ընդհանուր կարգով:
457. Դեպո հաշվում շարժի դեպքում շարժից հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտն ընկած ժամանակահատվածում Հաշվի Օպերատորը հաճախորդի պահանջով վերջինիս տրամադրում է իրեն պատկանող պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք:
458. Հաճախորդ-գրավառու ունենալու դեպքում Հաշվի Օպերատորը գրավառուի օգտին պետական պարտատոմսերի գրավադրումից հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտն ընկած ժամանակահատվածում հաճախորդին տրամադրում է վերջինիս օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք:
459. Արժեթղթերի հաշվից քաղվածքները, պետական պարտատոմսերով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունները, հաճախորդին պատկանող պետական պարտատոմսերի և հաճախորդ-գրավառուի օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանքները տրամադրվում են թղթային, էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային եղանակով:

## Գլուխ 48. Արժեթղթերի հաշվի փակման և պահառության պայմանագրի լուծման առանձնահատկությունները պետական պարտատոմսերի պահառության դեպքում

460. Եթե Հաշվետերը ցանկանում է Հաշվի Օպերատորի հետ լուծել պահառության պայմանագիրը և փակել արժեթղթերի հաշիվը, որում պետական պարտատոմսեր են հաշվառված, ապա Հաշվետերը պարտավոր է այդ մասին Հաշվի Օպերատորին տեղեկացնել առնվազն քսան աշխատանքային օր առաջ և առաջնորդվել Կանոններով սահմանված դրույթներով:
461. Արժեթղթերի հաշվի փակման նպատակով, եթե դրանում պետական պարտատոմսեր են

հաշվառված, Հաշվի Օպերատորը գրավոր ծանուցում է Հաշվետիրոջը՝ պետական պարտատոմսերն այլ Հաշվի Օպերատորի մոտ բացված հաշվում պորտֆելի փոխանցման հանձնարականի ներկայացման անհրաժեշտության մասին:

462. Եթե Հաշվետերը ցանկանում է Հաշվի Օպերատորի հետ լուծել պահառության պայմանագիրը, և միևնույն ժամանակ չի ներկայացնում այլ Հաշվի Օպերատորի մոտ բացված հաշվում պորտֆելի փոխանցման հանձնարարական, ապա Հաշվի Օպերատորը պահառության պայմանագիրը լուծելուց առաջ ծանուցում է Հաշվետիրոջը՝ վերջինիս հաշվում առկա պետական պարտատոմսերը պահառության ծառայություններ մատուցող այլ անձի մոտ բացված հաշվին փոխանցելու հանձնարարական ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

463. Հաշվետիրոջ կողմից, իր արժեթղթերը պահառության ծառայություն մատուցող այլ անձին պահառության հանձնելու նպատակով, «Արժեթղթերի ազատ առաքման» հանձնարարական չներկայացվելու դեպքում Հաշվի Օպերատորն իրավասու է չլուծել պահառության պայմանագիրը:

464. Պահառության պայմանագիրը լուծելուց հետո եռօրյա ժամկետում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է Հաշվետիրոջը փոխանցել նրա պետական պարտատոմսերը և դրամական միջոցները (առկայության դեպքում):

## ԲԱԺԻՆ 6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ

### Գլուխ 49. Օտարերկրյա պահառուների միջոցով հաշվառվող արժեթղթերի հաշվառման առանձնահատկությունները

465. Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառություն (ենթապահառություն)՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվի միջոցով:

466. Կենտրոնական դեպոզիտարիան Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերը գրանցում և հաշվառում է Համակարգում Հաշվետերերի համար բացված արժեթղթերի հաշիվներում՝ անհրաժեշտության դեպքում Հաշվետերերի հետ կնքելով օտարերկրյա արժեթղթերի ենթապահառության վերաբերյալ համաձայնագրեր:

467. Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվին կարող են հաշվառվել մեկից ավելի Հաշվետերերին պատկանող օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթեր:

468. Կենտրոնական դեպոզիտարիայում Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերը կարող են գրավադրվել, արգելադրվել (այդ թվում՝ կարգավորվող շուկայում առևտրին մասնակցելու նպատակով) և որպես ապահովման միջոց այլ ձևով օգտագործվել՝ Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա:

Ընդ որում, ելնելով սույն կետում նշված արժեթղթերով գործառնությունների իրականացման առանձնահատկություններից և այդ արժեթղթերով գործառնությունների իրականացումն ապահովելու համար, Կենտրոնական դեպոզիտարիան կարող է նշված արժեթղթերին լրացուցիչ նույնականացնող համարանիշներ շնորհել:

469. Կենտրոնական դեպոզիտարիան ողջամիտ ժամկետում Հաշվի օպերատորի միջոցով Հաշվետերերին է փոխանցում օտարերկրյա պահառուից ստացված՝ անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերով կորպորատիվ գործողությունների մասին տեղեկությունները: Եթե Կենտրոնական դեպոզիտարիան ժամանակին Հաշվետերերի կողմից չի ստացել արժեթղթերով կամավոր կորպորատիվ գործողությունների իրականացման հանձնարարական, ապա Կենտրոնական դեպոզիտարիան իր նախաձեռնությամբ չի իրականացնում այդ իրավունքները:

470. Օտարերկրյա պահառուի մոտ բացված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվին հաշվառվող արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման

պատասխանատվությունը կրում է Հաշվետերը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաշվետիրոջ կողմից Կենտրոնական դեպոզիտարիան նախապես օրենքով սահմանված կարգով լիազորված է եղել կատարել արժեթղթերից բխող որևէ պարտավորություն:

471. Հաշվետիրոջ հանձնարարությամբ Կենտրոնական դեպոզիտարիան կարող է Օտարերկրյա պահառուի միջոցով աջակցել նրան՝ օտարերկրյա արժեթղթերից բխող իրավունքների իրականացման գործում, այդ թվում նաև՝

1) օտարերկրյա արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտների ստացում, հաշվարկում և փոխանցում (այդ թվում՝ օգտագործելով Համակարգի անդամների Դրամական հաշիվները).
2) արժեթղթերի սեփականատերերի (բաժնետերերի) ժողովին Հաշվետիրոջ շահերի ներկայացում (Հաշվետիրոջ կողմից լիազորագրի հիման վրա հեռակա և առկա քվեարկությամբ մասնակցություն).
3) աջակցություն Հաշվետիրոջն օտարերկրյա արժեթղթերի թողարկողի, թողարկված արժեթղթերի մասին տեղեկությունների ստացման, թողարկողի բաժնետերերի ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունների և կառավարման մարմիններում թեկնածուների ներկայացման գործում.
4) Օտարերկրյա պահառուի միջոցով մատուցվող ներդրումային փայերի բաժանորդագրության և մարման հայտերի ընդունում և փոխանցում:

## Գլուխ 50. Օտարերկրյա պահառուների միջոցով հաշվառվող արժեթղթերով անդրսահմանային (արտաքին) գործառնությունների կատարման ընթացակարգը

472. Օտարերկրյա արժեթղթերի սեփականատերերի կողմից իրենց իրավունքների իրականացման նպատակով Կենտրոնական դեպոզիտարիան՝

1) իրականացնում է պահառության պայմանագրով, Օտարերկրյա արժեթղթերի ենթապահառության համաձայնագրով (առկայության դեպքում) և Կանոններով սահմանված բոլոր գործողությունները.
2) Օտարերկրյա պահառուից (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) ստանում է օտարերկրյա արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր և դրանք փոխանցում Հաշվետերերին.
3) Հաշվետերերից ստացված տեղեկությունները և փաստաթղթերը փոխանցում է Օտարերկրյա պահառուին (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը).
4) Հաշվետիրոջ հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ձեռնարկում է Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթի թողարկողի գրանցող երկրի օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ գործողությունները՝ թողարկողի կողմից արժեթղթերին վերաբերող էական գործառնությունների իրականացման ընթացքում Հաշվետիրոջ շահերի պաշտպանության ուղղությամբ.
5) Հաշվետերերի իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կողմից արժեթղթերի սեփականատերերի ցուցակի կազմման ընթացքում Օտարերկրյա պահառուին (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) է փոխանցում Հաշվետերերի մասին տեղեկություններ.
6) Հաշվետիրոջ հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ապահովում է բաժնետերերի ընդհանուր ժողովում Հաշվետիրոջ ձայնի իրավունքի իրականացումը՝ ընդհանուր ժողովում Կենտրոնական դեպոզիտարիայի ներկայացուցչի մասնակցության և Հաշվետիրոջ կարգադրությամբ քվեարկելու միջոցով:

473. Օտարերկրյա արժեթղթերի թողարկողի այն գործողությունները (այդ թվում՝ կորպորատիվ գործողությունները), որոնք վերաբերում են տվյալ դասի բոլոր արժեթղթերին և դրանց բոլոր սեփականատերերին (սույն գլխում՝ գլոբալ գործառնություններ) և արտացոլվում են

Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում, Օտարերկրյա պահառուի (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, արտացոլվում են նաև տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի)՝ Համակարգում բացված հաշիվներում:

474. Կենտրոնական դեպոզիտարիան հաճախորդին տեղեկացնում է տեղի ունեցող գլոբալ գործառնության մասին՝ ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով սահմանված եղանակով:

475. Օտարերկրյա արժեթղթերի փոխարկման գործառնությունն իրականացվում է արժեթղթերի փոխարկման մասին թողարկողի որոշման և Օտարերկրյա պահառուի (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվին նոր դասի արժեթղթերի փոխանցված քանակի վերաբերյալ տրված քաղվածքի համապատասխան:

Հաշվարկային տվյալների և փոխանցված արժեթղթերի քանակի միջև տարբերությունների առկայության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան չի կատարում գործառնությունը, ընդհուպ մինչև վիճահարույց հարցի վերջնական կարգավորումը:

Արժեթղթերի փոխարկման արդյունքում, եթե հաճախորդների արժեթղթերի քանակը կազմում է կոտորակային մնացորդ, ապա կոտորակային մասի հետգնումն իրականացվում է օտարերկրյա արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան:

Արժեթղթերի փոխարկման համար հիմք է հանդիսանում Օտարերկրյա պահառուի (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) կողմից տրված քաղվածքը, որը հաստատում է Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվով փոխարկման գործառնությունների կատարումը: Արժեթղթերի փոխարկման գործառնությունները կատարվում են Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում փոխարկման գործառնությունների կատարումը հավաստող փաստաթղթի ստացման օրվա ընթացքում: Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի փոխարկման մասին հաշվետվությունը ներկայացնում է Հաշվետերերին գործառնության կատարման օրվա հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

476. Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի գծով որպես եկամուտ արժեթղթերի փոխանցման գործառնությունը կատարվում է արժեթղթերի գծով եկամուտների վճարման մասին թողարկողի որոշման և Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվին արժեթղթերի փաստացի փոխանցման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) կողմից տրված քաղվածքներին համապատասխան: Կենտրոնական դեպոզիտարիան Հաշվետերերի արժեթղթերի հաշիվներին արժեթղթերը փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվին համապատասխան արժեթղթերի փոխանցումը հավաստող քաղվածքների ստացման օրը, եթե վերջիններս ստացվել են գործառնական օրվա ընթացքում: Հաշվի օպերատորը արժեթղթերի փոխանցման մասին ծանուցում է Հաշվետիրոջը՝ գործառնության կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

477. Օտարերկրյա պահառու միջոցով հաշվառվող արժեթղթերի ենթապահառության շրջանակներում տվյալ արժեթղթերի սեփականատերերի/անվանատերերի համար Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվին փոխանցված դրամական միջոցները Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արտացոլվում են տվյալ արժեթղթերին տիրապետող Հաշվետերերին սպասարկող Հաշվի Օպերատորների հաճախորդների ամփոփ Դրամական հաշիվներում (իսկ Հաշվետերը Համակարգի ուղղակի մասնակից հանդիսանալու պարագայում՝ վերջիններիս սեփական Դրամական հաշվում)՝ ըստ Հաշվետերերին պատկանող արժեթղթերի համամասնության, եթե դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ Օտարերկրյա

պահառուի (որի մոտ բացված է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշիվը) կողմից ներկայացված փաստաթղթերով այլ բան նախատեսված չէ:
478. Օտարերկրյա արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Թողարկողի կամ այլ անձանց հարցման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան տրամադրում է արժեթղթերի հաշիվներում վարվող օտարերկրյա արժեթղթերի սեփականատերերի ցուցակը: Պահանջվող տեղեկությունների ձևը և կազմը սահմանվում է հարցմամբ՝ հաշվի առնելով օտարերկրյա արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրության պահանջները: Հաշվետերը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացված հարցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել պահանջվող տեղեկությունները:
479. Հաշվի օպերատորի միջոցով սպասարկվող Հաշվետերն իր արժեթղթերի հաշվում հաշվառվող կամ հաշվառման ենթակա արժեթղթերով Կանոններով նախատեսված գործառնությունների իրականացման, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերի բաժանորդագրության և մարման հայտերի տրամադրման նպատակով Հաշվի Օպերատորին է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված հանձնարարականները, որոնք Հաշվի Օպերատորը փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով: Այն պարագայում, երբ հանձնարարականի փոխանցումը հնարավոր չէ իրականացնել Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով, ապա հանձնարարականը Հաշվի Օպերատորը Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնում է ՍիԲիԷյնեթ ցանցով կամ թղթային եղանակով:
Հաշվետերը Հաշվի Օպերատորին է ներկայացնում նշված հանձնարարականով նախատեսված գործառնության համար Կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի հետ պայմանագիր կնքած Օտարերկրյա պահառուի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:
480. Հաշվի Օպերատորի՝ անհրաժեշտ ժամկետներում Համակարգում մուտքագրված հանձնարարականների հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան անհրաժեշտության դեպքում ձևավորում է Օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված հանձնարարականներ և սահմանված ժամկետներում ներկայացնում կատարման: Ընդ որում, սույն կետի իմաստով հանձնարարականը համարվում է անհրաժեշտ ժամկետում ներկայացված, եթե այն Համակարգում մուտքագրվել է Օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված՝ գործառնության իրականացման վերջնաժամկետից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:
481. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման կամ մերժման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի կողմից տեղեկատվության ներկայացումից հետո (եթե դա նախատեսված է Օտարերկրյա պահառուի կանոններով և/կամ Օտարերկրյա պահառուի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով), Կենտրոնական դեպոզիտարիան Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով գործառնության կատարման կամ մերժման վերաբերյալ գրառում է կատարում Համակարգում՝ անհրաժեշտության դեպքում այդ մասին տեղեկացնելով Հաշվի Օպերատորին: Հաշվի Օպերատորը պարտավոր է գործառնության կատարման կամ մերժման վերաբերյալ ծանուցել Հաշվետիրոջը մինչև Համակարգում գրառում կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:
482. Հաշվետերը՝ իր հաշվում առկա օտարերկրյա արժեթղթերի մնացորդի, ինչպես նաև արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով դիմում է Հաշվի Օպերատորին: Հաշվի Օպերատորը Հաշվետիրոջ դիմումի հիման վրա վերջինիս տրամադրում է Կանոններով սահմանված հաշվետվությունները (քաղվածք, տեղեկանք): Նշված հաշվետվությունները Հաշվի Օպերատորը ստանում է Համակարգում համապատասխան հարցում կատարելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Հաշվի Օպերատորը տեղեկատվության ստացման նպատակով ՍիԲիԷյՆեթ ցանցով կամ թղթային եղանակով դիմում է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիային, որին

Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանում է առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում:
483. Հաշվետերն իրավասու է Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի վերաբերյալ Հաշվի Օպերատորից պահանջել նաև այլ հաշվետվություններ և/կամ տեղեկություններ, եթե այդպիսիք սահմանված են Օտարերկրյա պահառուի կանոններով:
484. Այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի (Հաշվի Օպերատորի) կողմից տեղեկատվության տրամադրումն իրականացվում է կապի այնպիսի եղանակներով, ինչպիսին են ֆաքսիմիլային կապը, էլեկտրոնային փոստը և այլն, ապա այդ տեղեկությունները երրորդ անձանց հայտնի դառնալու դեպքերի համար Կենտրոնական դեպոզիտարիան (Հաշվի Օպերատորը) պատասխանատվություն չի կրում:
485. Հաշվետերը կարող է Հաշվի Օպերատորին ներկայացնել Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով գործառնությունների կատարման հանձնարարականներ: Ընդ որում՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով վերջնահաշվարկի հանձնարարականների կատարման նպատակով Հաշվետերը պետք է Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ դրամական հաշվին ապահովի համապատասխան միջոցներ Օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված ժամկետներում: Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ դրամական հաշվին դրամական միջոցների փոխանցման դեպքում Հաշվետերը պետք է անհրաժեշտության դեպքում Օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված ժամկետներում Հաշվի օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնի դրամական միջոցների ստացման (Pre-advice) հանձնարարական՝ նշելով դրամական փոխանցման համապատասխան միջնորդի տվյալները, փոխանցվող միջոցների արժույթը և ծավալը, միջոցների ստացման նախատեսվող ամսաթիվը, անհրաժեշտության դեպքում նաև՝դրամական միջոցների վերջնական շահառուին, ինչպես նաև փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ Համակարգում պահանջվող այլ տեղեկությունները: Դրամական միջոցների ստացման հանձնարարականը Հաշվի Օպերատորը Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցում Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով: Դրամական միջոցների ստացման հանձնարարականում առկա տվյալների և Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ դրամական հաշվին փաստացի փոխանցված դրամական միջոցների անհամապատասխանության դեպքում Հաշվետերերից կարող են գանձվել տվյալների ճշգրտման համար Կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին» կանոններով սահմանված վճարները:
486. Կանոններով նախատեսված այն դեպքերում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ենթապահառության ծառայությունները մատուցվում են անմիջականորեն, սույն գլխով նախատեսված հանձնարարականները Համակարգի ուղղակի մասնակիցը ներկայացնում է անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիային՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվետիրոջ միջև ուղղակիորեն կնքված պայմանագրով սահմանված կարգով:
487. Օտարերկրյա պահառուց վերջինիս մոտ բացված անվանատիրոջ դրամական հաշվին գումարի մուտքագրման հաստատումը ստանալու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան այդ դրամական միջոցները մուտքագրում է Համակարգի անդամի համապատասխան Դրամական հաշվին:
488. Հաշվետիրոջ կողմից ներկայացված (այդ թվում՝ Հաշվի Օպերատորի կողմից Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով փոխանցված) հանձնարարականի ընդունումը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործառնական ժամերի ընթացքում, եթե Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվետիրոջ միջև կնքված ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով այլ, ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Գործառնական օրվա ավարտից հետո ստացված հանձնարարականն ընդունված է համարվում հաջորդ գործառնական օրվա ընթացքում: Յանկացած դեպքում, Հաշվետերերի կողմից, Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով և

դրամական միջոցներով գործառնությունների իրականացման նպատակով տրվող հանձնարարականների ներկայացման պայմանները և ժամկետները պետք է համապատասխանեն Օտարերկրյա պահառուի կանոններով վերջինիս կողմից համապատասխան հանձնարարականների ընդունման պայմաններին և ժամկետներին:

## ԲԱԺԻՆ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՔԼԻՐԻՆԳ ԵՎ/ԿԱՄ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ

### Գլուխ 51. Արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման եղանակը և սկզբունքները

489. Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների որոշումը և հաշվանցումը կատարում է կենտրոնացված քլիրինգի եղանակով՝ զուտացման միջոցով:
490. Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է արժեթղթերի և դրամական միջոցների ամբողջական ապահովվածության (նախնական դեպոնացման) եղանակով՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով:
491. Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է T+0 ժամանակահատվածում, որտեղ T-ն Կարգավորվող շուկայում գործարքի կնքման ամսաթիվն է, իսկ 0-ն գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը:
492. Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման ժամանակ հիմք է ընդունում Կարգավորվող շուկայից ստացված առևտրի վերաբերյալ տվյալները և արժեթղթերով գործառնությունների իրականացման նպատակով ԿԾՀՀԱ-ի կողմից Համակարգի միջոցով իրեն փոխանցված ԿԾՀՀԱ-ի կամ ԿԾՀՀԱ-ի հաճախորդից ստացված հանձնարարականները:
493. Կանոնների 492. կետով սահմանված հանձնարարականների կատարման նպատակով արժեթղթերի հաշվին հասանելիություն ստանալու համար ԿԾՀՀԱ-ն իր կամ իր հաճախորդի արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին է ներկայացնում հասանելիության տրամադրման վերաբերյալ հաճախորդի դիմումը՝ դրանում նշելով նաև հասանելության տրամադրման ժամկետը: Հաշվի օպերատորը պարտավոր է անմիջապես ԿԾՀՀԱ-ին տրամադրել արժեթղթերի հաշվին համապատասխան հասանելիությունը՝ որի արդյունքում ԿԾՀՀԱ-ն ստանում է իրավասություն տվյալ արժեթղթերի հաշվով կատարել Կանոններով սահմանված հետևյալ գործառնությունները՝

1) իր կամ իր հաճախորդների արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի առևտրային արգելադրում կամ առևտրային արգելադրման դադարեցում.
2) իր կամ իր հաճախորդների դրամական միջոցների առևտրային արգելադրում կամ առևտրային արգելադրման դադարեցում:

494. Հաշվի օպերատորի կողմից ԿԾՀՀԱ-ին տրամադրված՝ արժեթղթերի հաշվին հասանելիությունը կարող է դադարեցվել հասանելիության տրամադրման ժամկետի ավարտի հիմքով կամ Հաշվի օպերատորին ներկայացված Հաշվետիրոջ հանձնարարականի կամ ԿԾՀՀԱ-ից ստացված գրության հիման վրա:
495. Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքման արդյունքում Հաշվի Օպերատորի հաճախորդի արժեթղթերի հաշվում փոփոխություն կատարվելու դեպքում, առևտրային նստաշրջանի ավարտից անմիջապես հետո ԿԾՀՀԱ-ն պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել Հաշվի Օպերատորին, իսկ Հաշվի Օպերատորը՝ պարտավոր է իր հաճախորդին, վերջինիս դիմումի հիման վրա, անվճար տրամադրել հաշվետվություն արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ (արժեթղթերի հաշվից քաղվածք):

496. ԿՇՀՀԱ-ն առևտրային արգելադրման, առևտրային արգելադրման դադարեցման համար անհրաժեշտ տվյալները մուտքագրում է Ծրագրային համակարգ համապատասխան հանձնարարականի ձևավորման միջոցով և հետագա քայլերը իրականացնում Ծրագրային համակարգի կողմից ստացված հաղորդագրություններին համապատասխան: Ծրագրային համակարգում հանձնարարականի ընդունումը կամ մերժումը հավաստիացվում է Ծրագրային համակարգի կողմից ձևավորված հաղորդագրությունների միջոցով:

497. Քլիրինգը և վերջնահաշվարկն իրականացվում են դրա համար նախատեսված ԿՇՀՀԱ-ի յուրաքանչյուր արժույթով երկուական Դրամական հաշիվների միջոցով, մեկը՝ սեփական գործարքների համար, մյուսը՝ հաճախորդների գործարքների համար:

498. ԿՇՀՀԱ-ն սույն բաժնի դրույթներով սահմանված հանձնարարականները Ծրագրային համակարգ է մուտքագրում սույն բաժնի դրույթներով սահմանված կարգով և ժամկետներում:

499. Սույն գլխի համաձայն փաստաթղթի (տեղեկության) ստացման պահ է համարվում՝

1) ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով ուղարկված փաստաթղթի առաքման անդորրագրում նշված ժամանակը.
2) Բանկմեյլ համակարգով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ ՀՀ Կենտրոնական Բանկից ուղարկված էլեկտրոնային հաստատումը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ստանալու պահը.
3) Թղթային եղանակով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ փաստաթուղթը ստացող կողմի լիազորված աշխատակցին փաստաթղթի հանձնման պահը.
4) Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի միջև սույն բաժնով սահմանված տեղեկությունների տրամադրման դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից՝ վերջիններիս համար հասանելի միջավայրում, տեղեկությունների ավտոմատ կերպով տեղակայման պահը:

## Գլուխ 52. Երաշխիք

500. Կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով ԿՇՀՀԱ-ն մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը կամ առևտրային նստաշրջանի ընթացքում սույն բաժնի դրույթներով սահմանված կարգով իրականացնում է.

1) իր կամ իր հաճախորդի (իր՝ որպես անվանատիրոջ), արժեթղթերի հաշիվներում այն արժեթղթերի առևտրային արգելադրումը, որոնցով ԿՇՀՀԱ-ն նախատեսում է իր կամ իր հաճախորդի հաշվին վաճառքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Սույն կետում նշված արժեթղթերի հաշիվներում արգելադրված արժեթղթերը հանդիսանում են ԿՇՀՀԱ-ի կողմից վաճառքի պարտավորությունների կատարման ապահովման միջոց.
2) իր կամ իր հաճախորդների ամփոփ Դրամական հաշվում այնպիսի ծավալի դրամական միջոցների առևտրային արգելադրումը, որոնցով ԿՇՀՀԱ-ն նախատեսում է իր կամ իր հաճախորդի հաշվին առքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում:

## Գլուխ 53. Արժեթղթերի առևտրային արգելադրում և դրա դադարեցում, արժեթղթերի դեպոնացում

501. Արժեթղթերի առևտրային արգելադրման իրականացման համար ԿՇՀՀԱ-ն Ծրագրային համակարգի համապատասխան բաժին է մուտքագրում հետևյալ տեղեկությունները.

1) արժեթղթերի հաշվի համարը.
2) արգելադրվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը.
3) արժեթղթերի արգելադրման ենթակա քանակը.
4) արգելադրվող արժեթղթերի գնանշման արժույթի հաշվեգրման համար նախատեսված համապատասխան Դրամական հաշվի համարը:

502. Կարգավորվող շուկայում առևտրի նպատակով արժեթղթերի դեպոնացումը տեխնիկական հաշվին կատարվում է Ծրագրային համակարգի կողմից ավտոմատ կերպով, առևտրային օրվա ժամը $10^{30}$-ից ժամը $14^{45}$-ն ընկած ժամանակահատվածում՝ հինգ րոպե պարբերականությամբ, հիմք ընդունելով Ծրագրային համակարգում արժեթղթերի առևտրային արգելադրումների մասին առկա տվյալները:

503. Նախորդ առևտրային նստաշրջանի ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի նպատակով դեպոնացված և առևտրային օրվա վերջնահաշվարկի ավարտի դրությամբ և հետագայում առևտրային արգելադրումը պահպանած արժեթղթերի նախնական դեպոնացումը Ծրագրային համակարգը կատարում է ավտոմատ կերպով՝ տվյալ առևտրային օրվա ժամը $10^{30}$–ին:

504. Արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականի ձևավորման համար ԿԾՀՀԱ-ի կողմից Ծրագրային համակարգ մուտքագրված տվյալները Ծրագրային համակարգն ավտոմատ կերպով համեմատում է Ծրագրային համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ և անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում առևտրային արգելադրման հանձնարարական չի ձևավորվում: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարականների ձևավորման հաջորդականության: Համեմատության արդյունքում Ծրագրային համակարգը համապատասխան հաղորդագրության միջոցով տեղեկացնում է ԿԾՀՀԱ-ին հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ:

505. Առևտրային օրվա $14^{45}$-ից հետո Ծրագրային համակարգ մուտքագրված արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականում ներառված տեղեկությունները Կարգավորվող շուկա են մտնում հաջորդ առևտրային օրը:

506. Արժեթղթերի առևտրային արգելադրումը դադարեցվում է.

1) ԿԾՀՀԱ-ի կողմից Ծրագրային համակարգ մուտքագրված արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարականի հիման վրա՝ արժեթղթերը Կարգավորվող շուկայում առևտրի համար դեպոնացնելու նպատակով.
2) Կարգավորվող շուկայում առևտրի նպատակով դեպոնացված արժեթղթերը ԿԾՀՀԱ-ի կողմից Կարգավորվող շուկայում ապադեպոնացման արդյունքում.
3) Կարգավորվող շուկայում առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերը ԿԾՀՀԱ-ի կողմից ապաարգելադրվելու արդյունքում.
4) Կարգավորվող շուկայում առևտուր իրականացնելու ԿԾՀՀԱ-ի իրավունքը կասեցման կամ դադարեցման դեպքում.
5) ԿԾՀՀԱ-ի կարգավիճակի դադարեցման դեպքում.
6) Եթե Կենտրոնական դեպոզիտարիան մինչև տվյալ առևտրային օրվա ժամը $10^{10}$-ը պետական իրավասու մարմիններից ստացել է արգելանքի կամ սնանկության մասին համապատասխան որոշում: Սույն կետում նշված ժամից ուշ ստացված որոշումից բխող գործառնությունները կատարվում են առևտրային նստաշրջանի արդյունքների վերջնահաշվարկից հետո:

507. Սույն գլխի 508. կետով սահմանված հիմքերով (բացառությամբ 2) ենթակետի) արգելադրված արժեթղթերի արգելադրման դադարեցումը տվյալ օրվա առևտրային նստաշրջանի համար կատարվում է մինչև նույն առևտրային օրվա ժամը $10^{30}$-ը կամ Կարգավորվող շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո: Սույն գլխի 506. կետի 2) ենթակետով սահմանված դեպքում արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցումն իրականացվում է առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերի ապադեպոնացմամբ՝ ապադեպոնացման իրականացման համար սույն բաժնում սահմանված ժամկետներում:

508. Ծրագրային համակարգում առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարականի ձևավորման համար ԿԾՀՀԱ-ն ընտրում է արգելադրումը դադարեցվող արժեթղթերի առևտրային արգելադրման համապատասխան հանձնարարականը և.

1) մուտքագրում է արժեթղթերի այն քանակը, որը պետք է մնա առևտրային արգելադրման

կարգավիճակով՝ ոչ ամբողջական առևտրային արգելադրման դադարեցման դեպքում.

2) իրականացնում է տվյալ հանձնարարականի չեղարկում՝ ամբողջական առևտրային արգելադրման դադարեցման դեպքում:

509. Ծրագրային համակարգում առևտրային արգելադրման դադարեցման դեպքում Ծրագրային համակարգը մուտքագրված տվյալները ավտոմատ կերպով համեմատում է Համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարականների ձևավորման հաջորդականության: Համեմատության արդյունքում Ծրագրային համակարգը համապատասխան հաղորդագրության միջոցով տեղեկացնում է ԿԾՀՀԱ-ին արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցման գրանցման կամ մերժման մասին՝ միաժամանակ տեղեկացնելով նաև մերժման պատճառի մասին: ԿԾՀՀԱ-ն կարող է ի հայտ եկած անհամապատասխանությունները ուղղել մինչև առևտրային օրվա ժամը $10^{30}$–ը կամ Կարգավորվող շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո:

## Գլուխ 54. Դրամական միջոցների արգելադրումը և դեպոնացումը

510. Կարգավորվող շուկայում գործարքների կնքման համար դրամական միջոցների դեպոնացման նպատակով, մինչև առևտրային օրվա ժամը $14^{45}$–ը, ԿԾՀՀԱ-ն իր համապատասխան Դրամական հաշվին է ապահովում Կարգավորվող շուկայում արժեթղթերի առևտրի համար նախատեսված դրամական միջոցները:

511. ԿԾՀՀԱ-ի դրամական միջոցների փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիայի Առևտրային հաշվին իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված վճարման հանձնարարականների հիման վրա: Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային վճարումների համակարգի համապատասխան հաղորդագրությունների միջոցով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով:

512. ԿԾՀՀԱ-ի Դրամական հաշիվներին դրամական միջոցների համալրումը կարող է ապահովվել նաև Համակարգում բացված այլ Դրամական հաշիվներից կատարված ներքին փոխանցումների արդյունքում:

513. Ազատ դրամական միջոցները կարող են Կենտրոնական դեպոզիտարիայից հետ փոխանցվել ԿԾՀՀԱ-ի կողմից նշված բանկային հաշվին՝ ԿԾՀՀԱ-ի կողմից Համակարգում մուտքագրված դրամական միջոցների փոխանցման հանձնարարականի հիման վրա: Դրամական միջոցների հետ փոխանցման հանձնարարականի ստացման պահից առավելագույնը հինգ րոպեի ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան պատրաստում ՀՀ կենտրոնական բանկի Բանկմեյլ համակարգի համապատասխան հաղորդագրության միջոցով ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան վճարման հանձնարարական:

514. ԿԾՀՀԱ-ն դրամական միջոցների դեպոնացման նպատակով՝ մինչև տվյալ առևտրային օրվա ժամը $14^{45}$–ը, Դրամական հաշվում առկա ազատ միջոցներից սահմաններում, կարող է Ծրագրային համակարգ մուտքագրել դրամական միջոցների առևտրային արգելադրման հանձնարարական, որը պետք է ներառի հետևյալ տվյալները՝

1) ԿԾՀՀԱ-ի համապատասխան Դրամական հաշվի համարը.
2) դրամական միջոցի արժույթը.
3) դրամական միջոցների գումարը.
4) արժեթղթերի հաշվի համարը, որին պետք է հաշվեգրվեն Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում ձեռք բերված արժեթղթերը:

515. Կենտրոնական դեպոզիտարիան ԿԾՀՀԱ-ին տեղեկացնում է դրամական միջոցների արգելադրման հանձնարարականի ընդունման մասին կամ մերժելու դեպքում՝ ծանուցում է մերժման պատճառները:

516. Կենտրոնական դեպոզիտարիան առևտրային օրվա $10^{30}$-ից սկսած մինչև ժամը $14^{45}$–ը՝ հինգ րոպե պարբերականությամբ, կատարում է դրամական միջոցների դեպոնացումներ

Տեխնիկական հաշվին:
517. Վերջնահաշվարկի ավարտի դրությամբ Դրամական հաշվում ազատ դրամական միջոցները Կենտրոնական դեպոզիտարիան փոխանցում է միայն ԿՇՀՀԱ-ի հանձնարարականի հիման վրա:
518. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն երեսուն րոպե առաջ՝ հեռախոսով և ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով, տեղեկանում է, որ ՀՀ Կենտրոնական բանկում անհնար է (անհնար է եղել) ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանձնարարականների ընդունումը մինչև ժամը $10^{10}$-ը կամ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից անհնար է հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները ներկայացումը Կենտրոնական դեպոզիտարիա, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով անմիջապես տեղեկացնում է այդ մասին Կարգավորվող շուկայի օպերատորին և ԿՇՀՀԱ-ներին: Վերջիններս կամ դրանց սպասարկող առևտրային բանկերը, որոնց էլեկտրոնային հանձնարարականները չեն ստացվել ՀՀ կենտրոնական Բանկի կողմից, կարող են ՀՀ կենտրոնական Բանկ ներկայացնել թղթային հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ» բառը, ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը համապատասխան Դրամական հաշիվներին:
519. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայում առկա տեխնիկական խնդիրների պատճառով Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից անհնար է դրամական միջոցների փոխանցումները հաստատող հաղորդագրությունների ստացումը կամ միջոցների դեպոնացումը, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով անմիջապես տեղեկացնում է այդ մասին Կարգավորվող շուկայի օպերատորին և ԿՇՀՀԱ-ներին:

### Գլուխ 55. Արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացում

520. Կարգավորվող շուկայում արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացումը կատարվում է Կարգավորվող շուկայի օպերատորի կանոնների համաձայն, իսկ ապադեպոնացումների վերաբերյալ տեղեկությունները՝ հինգ րոպե պարբերականությամբ, Կենտրոնական դեպոզիտարիան ստանում է Կարգավորվող շուկայի օպերատորից՝ նրանց միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով:
521. Դրամական միջոցների և արժեթղթերի ապադեպոնացման վերաբերյալ Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված տեղեկատվության հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է նախնական ստուգում՝ միջոցների ապադեպոնացման համար անհրաժեշտ տվյալների համադրելիության և համապատասխանության ուղղությամբ:
522. Եթե նախնական ստուգման արդյունքում բացահայտվում է անճշտություն, ապա Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայի օպերատորի հետ համատեղ անհապաղ իրականացնում է համապատասխան ուսումնասիրություն և դրա արդյունքներից կախված կամ ինքնուրույն է ճշտումներ կատարում, կամ էլ դրանք վերադարձնում է Կարգավորվող շուկայի օպերատորին դրանց ճշտման համար:
523. Արժեթղթերի ապադեպոնացման արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիան ապադեպոնացված արժեթղթերը, առանց առևտրային արգելադրման, արժեթղթերի տեխնիկական հաշվից փոխանցում է համապատասխան արժեթղթերի հաշվին՝ Կարգավորվող շուկային Օպերատորի կողմից տեղեկությունների ստացման պահից առավելագույնը հինգ րոպեի ընթացքում:
524. Դրամական միջոցների ապադեպոնացման արդյունքում ապադեպոնացված դրամական միջոցները փոխանցվում են Դրամական համապատասխան հաշիվներին՝ Կարգավորվող շուկայի Օպերատորի կողմից տեղեկությունների ստացման պահից առավելագույնը հինգ րոպեի ընթացքում:
525. Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից մինչև ժամը $15^{05}$-ը Կենտրոնական դեպոզիտարիային ապադեպոնացման վերաբերյալ տեղեկությունների տրամադրման

անհնարինության դեպքում միջոցների ապադեպոնացումն իրականացվում է վերջնահաշվարկի իրականացման փուլում:

## Գլուխ 56. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման փուլերը

526. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կարգավորվող շուկայում կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի գործառույթը իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) Կարգավորվող շուկայում գործարքների կնքման նպատակով դեպոնացվող միջոցների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում Կարգավորվող շուկայի օպերատորին առևտրային նստաշրջանից առաջ և առևտրային նստաշրջանի ընթացքում.
2) արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացումների վերաբերյալ Կարգավորվող շուկայի օպերատորից տեղեկությունների ստացում, մշակում և Կանոններով սահմանված կարգով փոխանցումների կատարում.
3) հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո Կարգավորվող շուկայում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունների ստացում Կարգավորվող շուկայի օպերատորից.
4) առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կնքված գործարքներից բխող պարտավորությունների և պահանջների քլիրինգ.
5) միջոցների համեմատում.
6) առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկ:

## Գլուխ 57. Տեղեկությունների փոխանակումը Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի միջև

527. Կենտրոնական դեպոզիտարիան առևտրային օրվա ժամը $10^{30}$-ից սկսած մինչև ժամը $14^{50}$-ն ընկած ժամանակահատվածում՝ հինգ րոպե պարբերականությամբ, Կարգավորվող շուկայի օպերատորին տեղեկություն է տրամադրում ԿՇՀՀԱ-ների դեպոնացված արժեթղթերի և դրամական միջոցների, ինչպես նաև յուրաքանչյուր ԿՇՀՀԱ-ի սեփական և հաճախորդի, Ծրագրային համակարգի կողմից ավտոմատ տրված եզակի առևտրային ծածկագրերի, արժեթղթերի և ԿՇՀՀԱ-ների Դրամական հաշիվների մասին: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սույն կետով սահմանված տեղեկությունները Ծրագրային համակարգի կողմից ավտոմատ կերպով ձևավորվում են և տեղակայվում է Կարգավորվող շուկայի օպերատորի հետ համաձայնեցված միջավայրում:
528. Կենտրոնական դեպոզիտարիան առևտրային օրվա ժամը $10^{30}$-ից մինչև ժամը $15^{10}$-ն ընկած ժամանակահատվածում՝ հինգ րոպե պարբերականությամբ, Կարգավորվող շուկայի օպերատորի հետ համաձայնեցված միջավայրում, ստուգում է առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առարկա արժեթղթերի քանակի և գնի մասին (դասակարգված ըստ գործարքների, ըստ ԿՇՀՀԱ-ների և նրանց հաճախորդների պատկանելիության), ինչպես նաև արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացման վերաբերյալ տեղեկությունների առկայությունը՝ առկայության դեպքում դրանք ավտոմատ մուտքագրելով Ծրագրային համակարգ:
529. Կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կատարման համար անհրաժեշտ սույն գլխով սահմանված և այլ տեղեկությունները, դրանց տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորին միջև կնքված պայմանագրով:
530. Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված տեղեկությունները հիմք են հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիայի համար ԿՇՀՀԱ-երի և նրանց հաճախորդների արժեթղթերի և

դրամական միջոցների ապադեպոնացման, ինչպես նաև գործարքների արդյունքում ծագած պարտավորությունների և պահանջների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար:
531. Եթե տեխնիկական վթարի կամ այլ պատճառով սույն գլխով սահմանված ժամկետներում Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից անհնար է տեղեկությունների տրամադրումը Կենտրոնական դեպոզիտարիային, ապա Կարգավորվող շուկայի օպերատորը այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով:

### Գլուխ 58. Քլիրինգ

532. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված տեղեկատվության հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է նախնական ստուգում՝ վերջնահաշվարկի համար անհրաժեշտ տվյալների համադրելիության և համապատասխանության ուղղությամբ:
533. Եթե նախնական ստուգման արդյունքում բացահայտվում է անճշտություն, Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայի օպերատորի հետ համատեղ անհապաղ իրականացնում է համապատասխան ուսումնասիրություն և դրա արդյունքներից կախված՝ ճշտումներ կատարում, կամ էլ դրանք վերադարձնում է Կարգավորվող շուկայի օպերատորին դրանց ճշտման համար:
534. Նախնական ստուգումից, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում գործարքների տվյալների ճշգրտումից հետո Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է առևտրային նստաշրջանի ընթացքում Կարգավորվող շուկայում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների զուտացում, որի արդյունքում ըստ յուրաքանչյուր ԿՇՀՀԱ-ի, (նրա՝ որպես անվանատիրոջ) և նրա հաճախորդի Կենտրոնական դեպոզիտարիան որոշում է իր հանդեպ.

1) մեկ զուտ դրամական պահանջը և/կամ զուտ դրամական պարտավորությունը՝ ըստ արժույթների.
2) մեկ զուտ արժեթղթային պահանջը և/կամ զուտ արժեթղթային պարտավորությունը՝ ըստ արժեթղթերի դասերի (տեսակների):

535. Դրամական միջոցներով զուտ պարտավորությունը ցույց է տալիս, թե ԿՇՀՀԱ-ի կամ նրա հաճախորդի կողմից դեպոնացված դրամական միջոցների որ մասն է կազմում պարտավորություն Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ (դրամի կարճ դիրք), իսկ դրամական միջոցներով զուտ պահանջը՝ թե ԿՇՀՀԱ-ն կամ նրա հաճախորդը դրամական միջոցների ինչ գումար պետք է ստանա Կենտրոնական դեպոզիտարիայից (դրամի երկար դիրք):
536. Արժեթղթերով զուտ պարտավորությունները ցույց են տալիս, թե ԿՇՀՀԱ-ի կամ նրա հաճախորդի՝ արժեթղթերի տեխնիկական հաշվին առկա արժեթղթերից ինչ դասի (տեսակի) և քանակի արժեթղթեր պետք է փոխանցվեն այդ արժեթղթերը ձեռքբերողների հաշիվներին (արժեթղթերի կարճ դիրք): Արժեթղթերով զուտ պահանջը ցույց է տալիս, թե ԿՇՀՀԱ-ն կամ նրա հաճախորդը ինչ քանակի արժեթղթեր պետք է ստանա արժեթղթերի տեխնիկական հաշվից (արժեթղթերի երկար դիրք):

### Գլուխ 59. Վերջնահաշվարկ

537. Դրամական միջոցների և արժեթղթերի համեմատումից անհամապատասխանության բացահայտման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է մինչև վերջնահաշվարկի կատարումը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անհամապատասխանության պատճառները հայտնաբերելու և վերացնելու համար՝ անհրաժեշտության դեպքում այդ գործընթացին ներգրավելով նաև Կարգավորվող շուկայի

օպերատորին:
538. Կենտրոնական դեպոզիտարիան որոշում է յուրաքանչյուր ԿՇՀՀԱ-ի և/կամ նրա հաճախորդի արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած զուտ պահանջը և/կամ պարտավորությունները:
539. Սույն բաժնի 534. կետի 1) ենթակետում նշված տվյալների հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան հաշվարկում է ԿՇՀՀԱ-ի սեփական և ԿՇՀՀԱ-ի հաճախորդների գործարքների համար նախատեսված Դրամական հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ փոխանցման ենթակա դրամական միջոցները, իրականացնում է կատարված հաշվարկների ստուգում և հայտնաբերված անհամապատասխանությունների վերացում:
540. Կենտրոնական դեպոզիտարիան մինչև տվյալ օրվա ժամը $15^{40}$-ն իրականացնում է վերջնահաշվարկ՝ տեխնիկական հաշվից փոխանցելով արժեթղթերը և դրամական միջոցները ԿՇՀՀԱ-ների համապատասխան արժեթղթերի և Դրամական հաշիվներին:
541. ԿՇՀՀԱ-ները ստուգում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց արժեթղթերի և Դրամական հաշիվներով կատարված փոխանցումների համապատասխանությունը Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված գործարքների գրանցման վկայականների, ինչպես նաև Ծրագրային համակարգում առկա տեղեկությունների հետ:
542. Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում ԿՇՀՀԱ-ն մինչև տվյալ առևտրային օրվա ժամը $16^{30}$-ը այդ մասին հեռախոսով հայտնում է Կենտրոնական դեպոզիտարիային:
543. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ ԿՇՀՀԱ-ի կողմից անհամապատասխանության վերաբերյալ արված ահազանգն անհիմն է, ապա Կենտրոնական դեպոզիտարիան այդ մասին հեռախոսով և ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով տեղեկացնում է տվյալ ԿՇՀՀԱ-ին:
544. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ ԿՇՀՀԱ-ի ահազանգը հիմնավոր է կամ առկա է կասկած, որ այն կարող է լինել հիմնավոր, ապա Կենտրոնական դեպոզիտարիան անմիջապես Կարգավորվող շուկայի օպերատորի հետ իրականացնում է համապատասխան ստուգումներ՝ պարզելու համար վերջնահաշվարկի ժամանակ տեղ գտած հնարավոր սխալները:
545. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի այն ԿՇՀՀԱ-ների հաշիվներից, որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել միջոցներ են փոխանցվել, անակցեպտ կերպով իրականացնել ավել փոխանցված միջոցների փոխանցում այն ԿՇՀՀԱ-ների համապատասխան հաշիվներին, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:
546. Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից մինչև տվյալ առևտրային օրվա ժամը $15^{10}$-ը Կենտրոնական դեպոզիտարիային վերջնահաշվարկի համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից տեղեկանալուց հետո հեռախոսով և ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացնում է ԿՇՀՀԱ-ներին՝ նշելով վերջնահաշվարկի ուշացման պատճառը:
547. Եթե Կարգավորվող շուկայի օպերատորը մինչև տվյալ առևտրային օրվա ժամը $17^{30}$-ը Կենտրոնական դեպոզիտարիային չի ներկայացնում վերջնահաշվարկի համար անհրաժեշտ տեղեկությունները, ապա Կենտրոնական դեպոզիտարիան վերջնահաշվարկը կատարելու նպատակով երկարաձգում է գործառնական օրը անհրաժեշտ ժամանակահատվածով:

## ՄԱՍ III. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԲԱԺԻՆ 6. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ՔԼԻՐԻՆԳ

#### Գլուխ 60. Վարկային ռեսուրսների առևտրի սահմանաչափերի հաշվարկման և կնքված գործարքների մարման օրվա քլիրինգի իրականացման կարգը և սկզբունքները

548. Սույն բաժնի դրույթները սահմանում են Կարգավորվող շուկայի օպերատորի ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակցին (այսուհետ սույն բաժնում՝ Մասնակից) առևտրի սահմանաչափերի հաշվարկման, տրամադրման և վերոնշյալ հարթակում կնքված գործարքների մարման օրվա քլիրինգի իրականացման կարգը և պայմանները:
549. Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում վարկային ռեսուրսներ ներգրավելու նպատակով Մասնակիցը առնվազն վարկային ռեսուրսներ ներգրավելու նախորդ աշխատանքային օրը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքում է պահառության համապատասխան պայմանագիր, որով հայտնում է նաև իր համաձայնությունը Կանոններով սահմանված դեպքերում անակցեպտ գանձման իրավունք վերապահել Կենտրոնական դեպոզիտարիային:
550. Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակիցների իրավասու հաշիվների և իրավասու էլեկտրոնային հասցեների մասին տեղեկությունները ստանում է Կարգավորվող շուկայի օպերատորից:
551. Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև տեղեկությունների ստացման և տրամադրման կարգը, պայմանները և ժամկետները կարգավորվում են սույն բաժնի դրույթներով, ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգը և վերջնահաշվարկը կարգավորող Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով և Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված համապատասխան պայմանագրով:
552. Կենտրոնական դեպոզիտարիայի, Կարգավորվող շուկայի օպերատորի, Մասնակցի կամ ՀՀ Կենտրոնական Բանկի մոտ կապի խափանման դեպքում Կանոններով սահմանված հաղորդագրությունները և հանձնարարականները Կենտրոնական դեպոզիտարիան ստանում է էլեկտրոնային կրիչով՝ տեղեկությունների իսկությունը հավաստող աղբյուրից, և թղթային տարբերակով: Թղթային տարբերակի վրա պետք է առնվազն նշված լինեն այն բոլոր տեղեկությունները, որոնք կներկայացվեին էլեկտրոնային եղանակով ներկայացվելու դեպքում: Ընդ որում՝ թղթային տարբերակով ներկայացված հաղորդագրությունները, հանձնարարականները պետք է ստորագրված լինեն համապատասխան լիազոր մարմնի կողմից:

#### Գլուխ 61. Սահմանաչափերի հաշվարկման և տրամադրման կարգը

553. Երաշխիքային հիմնադրամը կարող է համալրվել ռեսուրսների իրավասու հաշիվներից պետական պարտատոմսերի և դրամային միջոցների փոխանցման միջոցով: Ընդ որում, երաշխիքային հիմնադրամի համալրման համար կարող են օգտագործվել միայն Կենտրոնական բանկի կողմից ռեպո գործարքների կնքման համար ընդունելի պետական պարտատոմսերը: Կենտրոնական բանկի կողմից ռեպո գործարքների կնքման համար ընդունելի համարվող պետական պարտատոմսերի ցանկը, ինչպես նաև ընդունելի պետական պարտատոմսերի համար կիրառվող զեղչման գործակիցների և միջօրյա ռեպո գործարքների համակարգի մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական դեպոզիտարիան ստանում է

Կենտրոնական բանկից՝ վերջինիս հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով:

554. Մասնակիցը ժամկետային վարկային ռեսուրսներ կարող է ներգրավել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Մասնակցին տրամադրված համապատասխան սահմանաչափերի շրջանակում: Ընդ որում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանաչափեր տրամադրվում են բացառապես այն Մասնակիցներին, որոնք ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների համաձայն համարվում են ՀՀ կենտրոնական բանկի «Ռեպո/հակադարձ ռեպո համակարգի» մասնակիցներ:

555. Մասնակցին սահմանաչափը տրամադրվում է ըստ վերջինիս կողմից երաշխիքային հիմնադրամին այդ նպատակով փոխանցված պետական պարտատոմսերի և ՀՀ դրամի արժեքի:

556. Սահմանաչափերի հաշվարկում Մասնակցի կողմից երաշխիքային հիմնադրամ փոխանցված պետական պարտատոմսերը ընդգրկվում են տվյալ օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված եկամտաբերության կորով հաշվարկված ընթացիկ գնի և Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից երաշխիքային հիմնադրամի ձևավորման համար սահմանված պետական պարտատոմսերի զեղչման գործակցի արտադրյալի չափով:

557. Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակցի համար հաշվարկում է հետևյալ սահմանաչափերը՝

***Ս1 = ՀԴ + ՊՊԸԳ*ԶԳ1 - ՍԶՎ,***

***Ս2 = ՀԴ + ՊՊԸԳ*ԶԳ2 - ՍԶՎ,***

***Ս3 = ՀԴ + ՊՊԸԳ*ԶԳ3 - ՍԶՎ,***

որտեղ՝

ՊՊԸԳ – պետական պարտատոմսերի ընթացիկ գինն է՝ հաշվարկված ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված վերջին եկամտաբերության կորի հիման վրա: Ընդ որում՝ տվյալ օրը մարվող պետական պարտատոմսերը չեն ներառվում սահմանաչափի հաշվարկում, որի փոխարեն ներառվում են այդ պարտատոմսերի թողարկողի կողմից մարմանն ուղղվելիք դրամային միջոցների հաշվարկային մեծությունները, իսկ փաստացի վճարման ստացման դեպքում՝ համապատասխան դրամային միջոցները:

Մարման և արժեկտրոնների փաստացի վճարման վերաբերյալ տվյալները Կենտրոնական դեպոզիտարիան ստանում է ՀՀ կենտրոնական բանկից՝ վերջինիս հետ համաձայնեցված եղանակով և ժամկետներում, որի հիման վրա հաշվարկում և ըստ յուրաքանչյուր Մասնակցի՝ վերջիններիս դրամական միջոցների դիրքերին ավելացնում է պետական պարտատոմսերի մարմանը, ինչպես նաև արժեկտրոնների վճարմանն ուղղված դրամական միջոցները:

ԶԳ1, ԶԳ2 և ԶԳ3 – Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված և վերջինիս կողմից որոշված՝ պետական պարտատոմսերի զեղչման գործակիցներն են, ընդ որում ԶԳ1 > ԶԳ2 > ԶԳ3:

ՀԴ - Մասնակցի կողմից Կանոններին համապատասխան կատարված միջոցների համալրման, ինչպես նաև սահմանաչափերի հաշվարկում ներառված պետական պարտատոմսերի մարման, մասնակի մարման կամ արժեկտրոնի վճարման արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիայի հատուկ դրամային երաշխիքային հաշվին փոխանցված ՀՀ դրամն է:

ՍԶՎ – ստացված և դեռևս չմարված վարկային պարտավորությունների ընդհանուր զուտ գումարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$ՍԶՎ = \sum_{t=1}^{n}(ԳՎՌ_t - ՎՎՌ_t)$

որտեղ՝

$ԳՎՌ_t$ – Մասնակցի կողմից ստացված (գնված) և t օրը մարվող բոլոր ժամկետային

վարկային ռեսուրսների հանրագումարն է՝ ներառյալ այդ վարկային ռեսուրսներով նախատեսված տոկոսագումարները վարկային ռեսուրսի ողջ ժամկետի համար,

$ՎՎՌ_t$ – Մասնակցի կողմից տրամադրված (վաճառված) և t օրը մարվող բոլոր ժամկետային վարկային ռեսուրսների հանրագումարն է՝ ներառյալ այդ վարկային ռեսուրսներով նախատեսված տոկոսագումարները վարկային ռեսուրսի ողջ ժամկետի համար,

Ընդ որում՝

ա) հաշվի են առնվում միայն վաճառքի այն գործարքները, որոնց մարման օրը համընկնում է որևէ առքի գործարքի մարման օրվա հետ,

բ) եթե $ԳՎՌ_t < ՎՎՌ_t$, ապա ընդունվում է $ԳՎՌ_t – ՎՎՌ_t = 0$

558. Մասնակցի նախնական սահմանաչափը հավասար է Կանոնների 557. կետով նախատեսված բանաձևով հաշվարկված Ս3 սահմանաչափին, բայց ոչ ավել, քան Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված և վերջինիս կողմից որոշված՝ տվյալ Մասնակցի կողմից ներգրավվող ժամկետային վարկերի գումարային առավելագույն թույլատրելի չափից: Ընդ որում, եթե Ս3 սահմանաչափը փոքր է զրոյից, ապա տվյալ Մասնակցին տրամադրվում է զրոյական նախնական սահմանաչափ:

559. Կանոնների 557. և 559. կետերին համապատասխան Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված տեղեկությունների հիման վրա երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի համար կիրառվում են համապատասխան զեղչման գործակիցներ և առավելագույն սահմանաչափերը: Ընդ որում՝ զեղչման նոր գործակիցների կիրառման արդյունքում միջոցների համալրման պահանջ առաջանալու դեպքում դրանք պետք է համալրվեն Կանոններով սահմանված կարգով, իսկ նոր առավելագույն սահմանաչափերի կիրառման դեպքում, եթե տվյալ օրվա դրությամբ Մասնակցի կողմից կնքված, սակայն դեռևս չմարված ժամկետային վարկային պարտավորությունների ընդհանուր զուտ գումարը գերազանցում է նոր առավելագույն սահմանաչափը, ապա Մասնակցին տրամադրվում է զրոյական նախնական սահմանաչափ:

560. Կենտրոնական դեպոզիտարիան Կանոնների 557. կետում նշված սահմանաչափերը տվյալ առևտրային օրվա ընթացքում հաշվարկում է ժամը $09^{:30}$-ի և $10^{:30}$-ի դրությամբ՝ մեկ ՀՀ դրամի ճշտությամբ՝ կլորացումը դեպի ներքև:

561. Սահմանաչափերը հաշվարկելուց հետո 15 րոպեի ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան դրանց վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է Կարգավորվող շուկայի օպերատորին: Սահմանաչափերի վերաբերյալ Կարգավորվող շուկայի օպերատորի տեղեկանալու պահից տասը րոպեի ընթացքում յուրաքանչյուր Մասնակցի ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցեին ուղարկվում է տեղեկությունները տվյալ Մասնակցի Ս3 սահմանաչափի վերաբերյալ:

562. Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակիցների կողմից տվյալ օրը մարման ենթակա վարկերի ընդհանուր զուտ գումարի (ներառյալ կուտակված տոկոսագումարների) չափով և դրանց վերաֆինանսավորման նպատակով համապատասխան Մասնակիցներին տրամադրում է լրացուցիչ սահմանաչափ, որի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ Մասնակիցների, մինչև տվյալ օրվա ժամը $10^{45}$-ը փոխանցում է Կարգավորվող շուկայի օպերատորին: Մասնակիցներին լրացուցիչ սահմանաչափ չի տրամադրվում, եթե սույն կանոնների 557. կետով սահմանված բանաձևով հաշվարկված Ս1 սահմանաչափը բացասական է:

## Գլուխ 62. Միջոցների համալրման պահանջը

563. Այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տվյալ առևտրային օրվա ժամը $09^{:30}$-ի և $10^{:30}$-ի դրությամբ սույն կանոնների 557. կետով սահմանված բանաձևով հաշվարկված Ս2 մեծությունը բացասական է (Մասնակցի միջոցների արժեքը թույլատրելի շեմից

պակաս է), ապա տվյալ Մասնակցի իրավասու էլեկտրոնային հասցեին անմիջապես ուղարկվում է համապատասխան հաղորդագրություն՝ մինչև տվյալ օրվա ժամը $13^{00}$-ը առնվազն Կանոնների 557. կետով սահմանված բանաձևով հաշվարկված՝ Ս3-ի բացարձակ արժեքի չափով միջոցները համալրելու պահանջով:
564. Համալրումը կարող է կատարվել ՀՀ դրամով՝ Մասնակցի իրավասու հաշվից Բանկմեյլ համակարգի ՀՏ100 կամ ՀՏ202 հաղորդագրության միջոցով և/կամ պետական պարտատոմսերով: Պետական պարտատոմսերով համալրման դեպքում դրանք հաշվարկվում են ՊՊԸԳ*ՁԳ3 գործակցով:
565. Այն դեպքում, երբ Մասնակիցը սույն կանոնների 563. կետում նշված ժամկետում չի համալրում իր միջոցները, ապա Կենտրոնական դեպոզիտարիան կիրառում է Կանոնների 599. կետով սահմանված ընթացակարգը:

## Գլուխ 63. Երաշխիքային հիմնադրամում հաշվառվող միջոցների պահառությունը

566. Երաշխիքային հիմնադրամում հաշվառվում են միայն այն Միջոցները, որոնք հանդիսանում են Մասնակցի՝ Կարգավորվող շուկայի օպերատորի ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում առևտրի երաշխավորման միջոց: Երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերը հաշվառվում են անվանական արժեքով:
567. Երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի պահառությունն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիան: Կենտրոնական դեպոզիտարիան միաժամանակ իրականացնում է նաև Երաշխիքային հիմնադրամի հաշվին փոխանցված դրամական միջոցների դիրքերի հաշվառում: Սույն կետում նշված Միջոցների հաշվառումն ու պահառությունը Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է առանձնացված կարգով՝ ըստ յուրաքանչյուր Մասնակցի:
568. Կենտրոնական դեպոզիտարիայի պահառության ծառայություններից օգտվելու նպատակով Մասնակիցը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ պետք է կնքի պահառության համապատասխան պայմանագիր: Պահառության պայմանագրի կնքման նպատակով Մասնակիցը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում համապատասխան դիմում, ինչպես նաև Կարգավորվող շուկայի օպերատորի ժամկետային վարկային ռեսուրսների առևտրի մասնակից լինելու փաստը հաստատող փաստաթղթի պատճենը: Մասնակցի կողմից Կարգավորվող շուկայի օպերատորի ժամկետային վարկային ռեսուրսների առևտրի մասնակից լինելու փաստը հաստատող փաստաթղթի պատճենը Կենտրոնական դեպոզիտարիային չներկայացնելը հիմք է սույն կետում նշված դիմումի մերժման և պայմանագրի չկնքման համար: Վերոնշյալ փաստաթղթերը ստանալուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան տվյալ Մասնակցի հետ երեք աշխատանքային օրվա ընթացքում կնքում է պահառության պայմանագիր՝ երաշխիքային հիմնադրամ փոխանցվող՝ վերջինիս պատկանող պետական պարտատոմսերի պահառության նպատակով:
569. Պահառության պայմանագրի կնքման օրը Կենտրոնական դեպոզիտարիան տվյալ Մասնակցի համար բացում է դրամական միջոցների հաշվառման և դեպո մեկական հաշիվներ: Սույն կետում նշված հաշիվների համարներն ունեն 13 նիշ և հաշվարկվում են ՀՀ կենտրոնական բանկի 07.06.2013թ. թիվ 142-Ն որոշմամբ սահմանված ալգորիթմով:
570. Երաշխիքային հիմնադրամ պետական պարտատոմսեր փոխանցվում են Բանկմեյլ համակարգի ՀՏ522 հաղորդագրության միջոցով, իսկ դրամային միջոցներ՝ ՀՏ100 կամ ՀՏ202 հաղորդագրության միջոցով: Երաշխիքային հիմնադրամ փոխանցված Միջոցների հետ կարող են իրականացվել միայն Կանոններով նախատեսված գործառնություններ:
571. Երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնի վճարման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան մինչև տվյալ օրվա ժամը $14^{:30}$-ը, ըստ յուրաքանչյուր Մասնակցի, համապատասխան տեղեկություններ է փոխանցում Կարգավորվող շուկայի օպերատորին: Մինչև տվյալ օրվա ժամը $16^{:30}$-ը այդ տեղեկություններն

ուղարկվում են համապատասխան Մասնակիցների՝ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցեներին:
572. Մասնակցի հարցման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան տրամադրում է երաշխիքային հիմնադրամում տվյալ Մասնակցին պատկանող Միջոցների մնացորդի և/կամ դրա փոփոխության մասին տեղեկություններ՝ Մասնակցից հարցման ստացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հարցումը Մասնակիցը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում թղթային կամ էլեկտրոնային եղանակով (իրավասու էլեկտրոնային հասցեին փոխանցելու միջոցով), որի պատասխանը Կենտրոնական դեպոզիտարիան ներկայացնում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով (իրավասու էլեկտրոնային հասցեին փոխանցելու միջոցով) համապատասխանաբար: Սույն կետում նշված հարցման մեջ պետք է նշված լինի առնվազն այն օրը, որի դրությամբ Կենտրոնական դեպոզիտարիան պետք է տրամադրի համապատասխան տեղեկությունները: Կենտրոնական դեպոզիտարիան սույն կետում նշված հարցման հիման վրա տրամադրում է հետևյալ տեղեկությունները.

1) Պետական պարտատոմսի տարբերակիչ ծածկագիրը.
2) Ընդհանուր անվանական արժեքը՝ ըստ պետական պարտատոմսերի տեսակի.
3) Դրամական միջոցների ընդհանուր գումարը.
4) Միջոցների շարժի մասին (մնացորդի փոփոխության մասին տեղեկությունների պահանջի դեպքում):

573. Մասնակցի հետ կնքված պահառության պայմանագրի դադարեցման կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պահառության գործունեության դադարեցման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակցի Միջոցները և դրանց վերաբերյալ առկա տեղեկությունները փոխանցում է այլ՝ օրենքով, դրա հիմա վրա ընդունված իրավական ակտերով և/կամ Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված անձի մոտ դրանց հետագա հաշվառման նպատակով՝ Մասնակցի կողմից տրված հանձնարարականների հիման վրա: Սույն կետում նշված դեպքում փոխանցումներ կատարելուց հետո Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից երաշխիքային հիմնադրամի համար բացված հաշիվները փակվում են:
574. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պետական պարտատոմսերի պահառության գործունեության դադարեցման դեպքում դադարեցման մասին որոշում կայացնելուց քսան օր առաջ Կենտրոնական դեպոզիտարիան այդ մասին տեղեկացնում է Մասնակիցներին և Կարգավորվող շուկայի օպերատորին:
575. Մասնակիցը Կենտրոնական դեպոզիտարիայի և Կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված դեպքում կարող է ազատել ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման սահմանաչափի՝ առևտրային համակարգում տվյալ պահին առկա և ազատ (չարգելադրված) մնացորդը կամ դրա մի մասը:
576. Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակցի սահմանաչափի ազատման մասին տեղեկությունները ստանում է Կարգավորվող շուկայի օպերատորից՝ վերջինիս հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով: Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է սահմանաչափի ազատում Կարգավորվող շուկայի օպերատորից համապատասխան տեղեկությունները ստանալուց հետո 15 րոպեի ընթացքում:
577. Մասնակիցը կարող է հետ ստանալ ազատված սահմանաչափի չափով երաշխիքային հիմնադրամ փոխանցված իր պետական պարտատոմսերը, եթե միջոցները հետ ստանալուց հետո երաշխիքային հիմնադրամում դրանց մնացորդային արժեքը գերազանցում է ստացված և դեռևս չմարված վարկային պարտավորությունների ընդհանուր զուտ գումարի և տվյալ Մասնակցի՝ առևտրային համակարգում առկա վարկային սահմանաչափի մնացորդի (առևտրային նստաշրջանի ընթացքում) հանրագումարին:
578. Մասնակիցը երաշխիքային հիմնադրամում հաշվառվող՝ իրեն պատկանող պետական պարտատոմսերը հետ ստանալու համար Կենտրոնական դեպոզիտարիային Բանկմեյլ համակարգով ներկայացնում է ՀS524 հաղորդագրությունը:
579. Կենտրոնական դեպոզիտարիան Կանոնների 577. կետով սահմանված պայմանի

ստուգման արդյունքում պետական պարտատոմսերի հետ ստացման պահանջի հաստատումը կամ մերժումը Մասնակցին ուղարկում է ՀՏ535 հաղորդագրությամբ:
580. Կենտրոնական դեպոզիտարիան երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի հետ ստացման պահանջի հաստատման պահից 15 րոպեի ընթացքում վերադարձնում է դրանք Մասնակցին՝ փոխանցելով դրանք Մասնակցի իրավասու հաշվին Բանկմեյլ համակարգի ՀՏ522 հաղորդագրության միջոցով:
581. Կենտրոնական դեպոզիտարիան օրենքով սահմանված համապատասխան իրավասություն ունեցող պետական մարմիններից ստացված հանձնարարականի, որոշման, վճռի կամ դատավճռի հիման վրա արգելադրում է երաշխիքային հիմնադրամում Մասնակցին պատկանող Միջոցները: Արգելադրված ազատ Միջոցները Կանոններով տրամադրվող սահմանաչափի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում: Եթե սույն կետում նշված հանձնարարականը, որոշումը, վճիռը կամ դատավճիռը Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացվել է մինչև տվյալ առևտրային օրվա ժամը $10^{20}$-ը, ապա Մասնակցի սահմանաչափը այդ արգելադրված ազատ միջոցների չափով նվազում է: Այն դեպքում, երբ սույն կետում նշված հանձնարարականը, որոշումը, վճիռը կամ դատավճիռը Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացվել է սույն կետով սահմանված ժամկետից ուշ, ապա Մասնակցի միջոցները արգելադրվում են՝ միաժամանակ ընդգրկված լինելով սահմանաչափի հաշվարկի մեջ, սակայն դա որևէ ազդեցություն չի ունենում Մասնակցին արդեն իսկ տրամադրված սահմանաչափի վրա: Մասնակցի սահմանաչափում ընդգրկված միջոցները ազատվում են առևտրային նստաշրջանից հետո և արգելադրվում են, եթե դրանց մնացորդային արժեքը գերազանցում է ստացված և դեռևս չմարված վարկային պարտավորությունների ընդհանուր զուտ գումարի և տվյալ Մասնակցի՝ առևտրային համակարգում առկա վարկային սահմանաչափի մնացորդի (առևտրային նստաշրջանի ընթացքում) հանրագումարին: Առևտրային նստաշրջանի ընթացքում կամ դրանից հետո ազատված սահմանաչափի շրջանակներում Միջոցներն արգելադրվում են ըստ դրանց՝ մինչև մարում ժամկետայնության նվազման կարգի՝ պետական մարմիններից ստացված հանձնարարականի հիման վրա:
582. Մասնակիցը իր կողմից երաշխիքային հիմնադրամ փոխանցված պետական պարտատոմսերի փոխարինում կատարելու համար լրացուցիչ պետական պարտատոմսեր է փոխանցում երաշխիքային հիմնադրամ:
583. Լրացուցիչ պետական պարտատոմսերի փոխանցումը կատարվում է Կանոնների 572. կետով սահմանված կարգով:
584. Փոխարինման ենթակա պետական պարտատոմսերը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից փոխանցվում են Մասնակցի ռեսուրսների իրավասու հաշվին Կանոնների 578.-580. կետերով սահմանված կարգով:

## Գլուխ 64. Քլիրինգ

585. Կարգավորվող շուկայի օպերատորի ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների մարման օրվա քլիրինգն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:
586. Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված տեղեկությունների հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիայի տվյալ Մասնակցի կողմից կնքված և նույն մարման օրն ունեցող բոլոր գործարքները (անկախ դրանց կնքման օրվանից) համախմբում է բազմակողմանի քլիրինգ իրականացնելու նպատակով, որի արդյունքում յուրաքանչյուր Մասնակցի համար վարկերի մայր գումարների և տոկոսագումարների մասով գործարքների մարման յուրաքանչյուր օրվա համար ձևավորվում է մեկական զուտ դրական (ստացվելիք), բացասական (վճարվելիք) կամ զրոյական դիրք: Կենտրոնական դեպոզիտարիան սույն կետով սահմանված դիրքերի մասին տեղեկացնում է Կարգավորվող շուկայի օպերատորին դրանց հաշվարկման պահից 10 րոպեի ընթացքում:

587. Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակցի համար, ըստ գործարքների մարման յուրաքանչյուր օրվա, հաշվարկվում է նաև ընդհանուր զուտ դիրք՝ վարկերի մայր գումարների և տոկոսագումարների զուտ դիրքերի հանրագումարի չափով:
588. Եթե վարկի ժամկետայնությամբ պայմանավորված՝ դրա մարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա գործարքի մարման օր է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Համապատասխանաբար վերահաշվարկվում է նաև տոկոսագումարը՝ վարկի փաստացի օրերի ժամկետով:
589. Կենտրոնական դեպոզիտարիան մինչև յուրաքանչյուր օրվա ժամը $15^{:15}$-ը Կարգավորվող շուկայի օպերատորին տեղեկություններ է տրամադրում յուրաքանչյուր Մասնակցի կողմից տրամադրված/ստացված և դեռևս չմարված վարկերի ծավալները և դրանց տոկոսագումարները՝ ըստ ամսաթվերի, տվյալ օրը մարվող վարկերն ու դրանց տոկոսագումարները, ինչպես նաև տվյալ օրվա վերջի դրությամբ Մասնակցի ազատ՝ չօգտագործված սահմանաչափը:

## Գլուխ 65. Երաշխիքային հիմնադրամի միջոցների օգտագործման կարգը

590. Կենտրոնական դեպոզիտարիան տվյալ առևտրային օրվա մինչև տվյալ ժամը $14^{:00}$-ը Մասնակցից ընդունում է տվյալ Մասնակցի՝ երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի դրամային միջոցներով փոխարինելու հանձնարարականներ՝ ՀՏ599 հաղորդագրության տեսքով, որտեղ նշվում են պետական պարտատոմսերի տարբերակիչ ծածկագիրը և ծավալը, դրանց դիմաց ստացվելիք դրամային միջոցների ընդհանուր գումարը, պետական պարտատոմսերը փոխանցող Մասնակցի դեպո և դրամային հաշվի համարները, գումարը փոխանցող Մասնակցի դեպո և դրամային հաշվի համարները, ակնկալվող գումարի մեծությունը: Կենտրոնական դեպոզիտարիան ստացված հանձնարարականին ընթացք է տալիս այն դեպքում, երբ նույն օրվա մինչև ժամը $14^{:00}$-ը ստանում է տվյալ հանձնարարականին համապատասխանող մեկ այլ ՀՏ599 հաղորդագրություն գործարքի գնորդ կողմ հանդիսացող Մասնակցից: Ստացված ՀՏ599 հանձնարարականների համընկնման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան կատարում է հանձնարարականները, եթե նույն օրվա մինչև ժամը $14^{:00}$-ը պետական պարտատոմսերի գնորդից Կենտրոնական դեպոզիտարիանի դրամային երաշխիքային հաշվին ստանում է դրամային միջոցների փոխանցում ՀՏ100 հաղորդագրության տեսքով, որի «նպատակ» դաշտում պետք է նշված լինի «DVP» և վաճառող Մասնակցի դրամային իրավասու հաշվի համարը՝ առանց բացատի կամ այլ հավելյալ նշանների: Հակառակ դեպքում ՀՏ535 հաղորդագրությամբ մերժում է ՀՏ599 հաղորդագրությունների կատարումը: Կենտրոնական դեպոզիտարիան ստուգում է ՀՏ599 և ՀՏ100 հաղորդագրություններում ներառված տվյալների համընկնման փաստը: Եթե տվյալները չեն համընկնում, ապա Կենտրոնական դեպոզիտարիան հետ է փոխանցում դրամային միջոցներն այն հաշվին, որից ստացվել են և ՀՏ535 հաղորդագրությամբ մերժում է հաղորդագրությունների կատարումը:
591. Եթե Կանոնների 590. կետում նշված հաղորդագրությունների տվյալները համընկնում են և Կենտրոնական դեպոզիտարիայի դրամային երաշխիքային հաշվին փոխանցված դրամը մեծ կամ հավասար է եկամտաբերության կորով հաշվարկված պետական պարտատոմսերի ընթացիկ արժեքին, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ՀՏ522 հաղորդագրությամբ համապատասխան պարտատոմսերը փոխանցում է այն Մասնակցի հաշվին, ումից ստացվել է դրամային փոխանցումը: Այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի դրամային երաշխիքային հաշվին փոխանցված դրամը փոքր է եկամտաբերության կորով հաշվարկված պետական պարտատոմսերի ընթացիկ արժեքից, Կենտրոնական դեպոզիտարիան հետ է փոխանցում դրամային միջոցներն այն հաշվին, որից ստացվել են:
592. Կենտրոնական դեպոզիտարիան առևտրային օրվա ժամը $15^{30}$-ի դրությամբ հաշվարկում է Կանոնների 557. կետում նշված՝ շուկայի մասնակիցների ՍՅ սահմանաչափերը: Դրական

սահմանաչափ ունեցողները երաշխիքային հիմնադրամում դրամային միջոցներ ունենալու դեպքում այդ դրամային միջոցների՝ դրական սահմանաչափը չգերազանցող մասը Կենտրոնական դեպոզիտարիան ՀՏ100 հաղորդագրությամբ փոխանցում է շուկայի համապատասխան մասնակցի իրավասու դրամային հաշվին:

593. Կարգավորվող շուկայի օպերատորի մինչև ժամը $14^{:05}$-ը տեղեկություններ է տրամադրում Կենտրոնական դեպոզիտարիային առևտրային համակարգում ժամը $14^{:00}$-ի դրությամբ դրամային բացասական դիրք ունեցող Մասնակիցների վերաբերյալ՝ նշելով բացասական դիրքի չափը: Կենտրոնական դեպոզիտարիան ստուգում է երաշխիքային հիմնադրամում շուկայի տվյալ մասնակցի դրամային միջոցների առկայությունը և բացասական դիրքի չափով կամ սահմաններում համապատասխան դրամային միջոցները ՀՏ100 հաղորդագրությամբ մինչև ժամը $14^{:15}$-ը փոխանցում է Կարգավորվող շուկայի օպերատորի դրամային առևտրային հաշվին՝ նպատակը դաշտում նշելով այն Մասնակցի իրավասու դրամային հաշվի համարը, ում պարտավորությունների կատարմանը պետք է ուղղվի փոխանցվող դրամը:

594. Եթե երաշխիքային հիմնադրամում տվյալ Մասնակցի դրամային միջոցները բավարար չեն նրա դրամային բացասական դիրքը փակելու համար, ապա Կենտրոնական դեպոզիտարիան մինչև ժամը $14^{:15}$-ը պակասող գումարի չափով տվյալ Մասնակցի անունից միջօրյա ռեպո գործարքի կնքման հայտ է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկ՝ որպես ապահովում տրամադրելով տվյալ Մասնակցի՝ երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերը՝ ըստ դրանց մինչև մարումը մնացած ժամկետայնության նվազման՝ հաշվի առնելով Կենտրոնական բանկի կողմից ռեպո գործարքների կնքման նպատակով այդ պարտատոմսերի համար կիրառվող զեղչման գործակիցները և եկամտաբերության կորով հաշվարկված՝ այդ պարտատոմսերի ընթացիկ գինը: Միջօրյա ռեպո գործարքի կնքման հայտը ներկայացվում է ՀՏ523 հաղորդագրության միջոցով, որի 24B (փոխանցման հիմք) դաշտում նշվում է CDIN կոդը, իսկ արժեթղթեր առաքող կողմի տվյալներում նշվում է Մասնակցի կոդը և դեպո հաշիվը: Եթե Մասնակցի՝ երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի դիմաց ստացվելիք միջօրյա ռեպո գործարքի գումարը բավարար չէ տվյալ Մասնակցի բացասական դիրքը փակելու համար, ապա Դեպոզիտարիան միջօրյա ռեպո գործարքի կնքման հայտը ներկայացնում է Մասնակցի՝ երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի համար:

595. Կանոնների 594. կետին համապատասխան ներկայացված հայտի հիման վրա միջօրյա ռեպո գործարքի գումարը տրամադրվում է Կենտրոնական դեպոզիտարիայի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով: Կենտրոնական դեպոզիտարիան ստացված դրամային միջոցները Մասնակցի բացասական դիրքի չափով կամ սահմաններում ՀՏ100 հաղորդագրությամբ հաջորդ տաս րոպեների ընթացքում փոխանցում է Կարգավորվող շուկայի օպերատորի դրամային առևտրային հաշվին՝ նպատակը դաշտում նշելով այն Մասնակցի դրամային հաշվի համարը, ում պարտավորությունների կատարմանը պետք է ուղղվի փոխանցվող դրամը:

## Գլուխ 66. Պատասխանատվությունը

596. Կենտրոնական դեպոզիտարիան ՀՀ օրենսդրությամբ, իր և Մասնակիցների միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերում, կարգով և չափով պատասխանատվություն է կրում երաշխիքային հիմնադրամում հաշվառվող միջոցների պահառության, սահմանաչափերի հաշվարկման և տրամադրման, ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների մարման օրվա քլիրինգի հետ կապված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

597. Կանոններին համապատասխան Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կառավարվող երաշխիքային հիմնադրամ փոխանցված միջոցները Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կարող են օգտագործվել բացառապես Կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

598. Կանոններով սահմանված պահանջների խախտման համար Մասնակիցը պատասխանատվություն է կրում Կանոններով, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի և Մասնակցի միջև կնքված պայմանագրով և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:
599. Մինչև ժամը 13:00 Կանոնների 62. գլխով սահմանված միջոցների համալրման պահանջը չկատարելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան, մինչև ժամը 13:15-ը, ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցով ՀՀ կենտրոնական բանկին ներկայացնում է պակասող գումարը համապատասխան Մասնակցի՝ ՀՀ կենտրոնական բանկում վարվող դրամային հաշվից անակցեպտ գանձելու և Կենտրոնական դեպոզիտարիայի դրամային երաշխիքային հաշվին փոխանցելու պահանջագիր, որի կատարման արդյունքների մասին Կենտրոնական դեպոզիտարիան հեռախոսով և ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցով տեղեկացվում է մինչև ժամը 14:00-ը: Միաժամանակ Կենտրոնական դեպոզիտարիան Մասնակցին տուգանում է 50,000 ՀՀ դրամով: Տուգանք նշանակելու մասին որոշումը կայացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի կողմից: Տուգանման որոշման օրը Կենտրոնական դեպոզիտարիան համապատասխան հաշիվ ապրանքագիր է ներկայացնում տուգանված Մասնակցին: Մասնակիցը հաշիվ ապրանքագիրը ստանալու պահից հինգ բանկային օրվա ընթացքում պարտավոր է իրականացնել համապատասխան տուգանքի վճարումը Կենտրոնական դեպոզիտարիային:

## ԲԱԺԻՆ 7. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՄԱՐՄԱՆ, ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

600. Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ պարտատոմսերի մարման արդյունքում դրամական միջոցների բաշխման նպատակով Թողարկողի և Դեպոզիտարիայի միջև Հաշվի օպերատորի միջնորդությամբ (կամ ուղղակիորեն, եթե թողարկողը Համակարգի ուղղակի մասնակից է) կնքվում է ծառայության մատուցման պայմանագիր, որի արդյունքում Թողարկողը համապատասխան հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին՝ պարտատոմսերի արժեկտրոնների կամ պարտատոմսերի մարմանն ուղղված վճարումն իրականացնելու համար: Հանձնարարականում նշվում է.

1) Թողարկողի անվանումը և արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Թողարկողի բանկային հաշվի համարը, որից պետք է իրականացվի արժեկտրոնների և/կամ մարումների հետ կապված վճարման համար նախատեսված դրամական միջոցների փոխանցումը համապատասխան Դրամական հաշվին.
3) Պարտատոմսերի արժեկտրոնների վճարմանը և/կամ պարտատոմսերի մարմանն ուղղված՝ Հաշվետերերին բաշխման ենթակա գումարի մեծությունը և արժույթը.
4) Այն ամսաթիվը, որի դրությամբ ռեեստրում ընդգրկված հաշվետերերն իրավունք ունեն ստանալ արժեկտրոն և/կամ մարման գումար.
5) Այն ամսաթիվը, երբ միջոցները պետք է փոխանցվեն հաշվետերերի կողմից նշված բանկային կամ Դրամական հաշիվներին (վճարման օր).
6) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված (առկայության դեպքում) այլ տեղեկություններ.

601. Թողարկողը մինչև արժեկտորնների և/կամ մայր գումարների վճարման օրվա ժամը 12:00-ն պարտավոր է իրեն սպասարկող Հաշվի օպերատորի (իսկ եթե թողարկողը Համակարգի ուղղակի մասնակից է, ապա՝ անձամբ իր) Դրամական հաշվին ապահովել հանձնարարականում նշված գումարի չափով դրամական միջոցների առկայությունը:
602. Հաշվի Օպերատորը/Համակարգի ուղղակի մասնակիցը հանձնարարականը ներկայացնում է Կենտրոնական դեպոզիտարիա, որի արդյունքում արժեկտրոնների

վճարումներն իրականացվում են՝ ըստ պարտատոմսերի Հաշվետերերի արժեթղթերի հաշիվների հաշվեկշիռներին համապատասխան, վերջիններիս կողմից նշված և Համակարգում մուտքագրված բանկային և/կամ Դրամական հաշիվներին: Ընդ որում, եթե սույն կետով նշված Հաշվետերերի ցանկում առկա է անվանատիրոջ կամ օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան դրամական միջոցները փոխանցում է այդ անվանատիրոջ կամ օտարերկրյա անվանատիրոջ՝ Համակարգում մուտքագրված բանկային և/կամ դրամական հաշվին: Դրամական միջոցները ստանալուց հետո Անվանատերը պարտավոր է ապահովել դրանց փոխանցումը վերջնական սեփականատիրոջ բանկային և/կամ դրամական հաշվին:

603. Պարտատոմսերի մարման դեպքում Հաշվի Օպերատորը/Համակարգի ուղղակի մասնակիցը արժեկտրոնների և/կամ մայր գումարների վճարման հանձնարարականները ներկայացնում է Կենտրոնական դեպոզիտարիա մինչև մարման օրվա (եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա) ժամը 9:00-ն:

604. Շահութաբաժինների վճարման դեպքում Թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև Հաշվի Օպերատորի միջնորդությամբ (կամ ուղղակիորեն, եթե թողարկողը Համակարգի ուղղակի մասնակից է) կնքվում է ծառայության մատուցման պայմանագիր, որի արդյունքում Թողարկողը համապատասխան հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող Հաշվի Օպերատորին (Կենտրոնական դեպոզիտարիային, եթե թողարկողը Համակարգի ուղղակի մասնակից է)՝ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների վճարումն իրականացնելու համար: Նշված հանձնարարականում նշվում է.

1) Արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) Թողարկողի բանկային հաշվի համարը, որից պետք է իրականացվի շահութաբաժինների վճարման համար նախատեսված դրամական միջոցների փոխանցումը համապատասխան Դրամական հաշվին.
7) Շահութաբաժինների վճարման ուղղված՝ Հաշվետերերին բաշխման ենթակա գումարը և արժույթը.
8) Այն ամսաթիվը, որի դրությամբ ռեեստրում ընդգրկված հաշվետերերն իրավունք ունեն ստանալ շահութաբաժին.
9) Այն ամսաթիվը, երբ միջոցները պետք է փոխանցվեն հաշվետերերի կողմից նշված բանկային կամ Դրամական հաշիվներին (վճարման օր).
10) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված (առկայության դեպքում) այլ տեղեկություններ:

605. Թողարկողը մինչև շահութաբաժինների վճարման օրվա ժամը 12:00-ն պարտավոր է իրեն սպասարկող Հաշվի օպերատորի (իսկ եթե թողարկողը Համակարգի ուղղակի մասնակից է, ապա՝ անձամբ իր) Դրամական հաշվին ապահովել հանձնարարականում նշված գումարի չափով դրամական միջոցների առկայությունը:

606. Հաշվի Օպերատորը/Համակարգի ուղղակի մասնակիցը հանձնարարականը ներկայացնում է Կենտրոնական դեպոզիտարիա, որի արդյունքում շահութաբաժինների վճարումներն իրականացվում են՝ ըստ Հաշվետերերի արժեթղթերի հաշիվների հաշվեկշիռներին համապատասխան, վերջիններիս կողմից նշված և համակարգում մուտքագրված բանկային և/կամ Դրամական հաշիվներին:

607. Հաշվի Օպերատորը սույն գլխով սահմանված ծառայությունը Թողարկողին մատուցում է այն Հաշվետերերի համար, որոնց արժեթղթերի հաշիվներում առկա են բանկային հաշիվների և/կամ Դրամական հաշիվների մասին տվյալներ: Ընդ որում, եթե հաշվետիրոջ բանկային և/կամ դրամային հաշիվը բացված է ՀՀ տարածքից դուրս գործող ֆինանսական հաստատությունում, ապա Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի Հաշվետիրոջից պահանջել փոխանցման փաստացի ծախսերի փոխհատուցում:

**607.1** Պայմանագրով սահմանված դեպքերում Կենտրոնական դեպոզիտարիան սահմանված ժամկետներում կարող է տեղեկացնել Թողարկողի կողմից նշված անձանց կամ մարմիններին

փաստացի վճարված կամ չվճարված արժեկտրոնների, մայր գումարի կամ շահութաբաժինների մասին:

## ԲԱԺԻՆ 8. ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՕՐԵՆՔՈՎ ԵՎ ԻՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

608. Օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված՝ արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացման ծառայությունից օգտվելու համար Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Դիմում՝ ուղղված Հաշվի Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարին՝ նշելով սույն ծառայությունից օգտվելու ցանկության մասին.
2) Արժեթղթով հավաստված իրավունքի սահմանափակման, նախապատվության իրավունքի պահպանման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներ պարունակող փաստաթղթերի (այդ թվում կանոնադրություն, համաձայնագիր, պայմանագիր, ժողովի որոշում և այլն) բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը: Այն դեպքում, երբ նախապատվության իրավունքի կիրառման համար թողարկողի կողմից առանձին կարգ չի սահմանվում, ապա թողարկողի դիմումի համաձայն նախապատվության իրավունքի կիրառման և պահպանման հսկողության նկատմամբ Հաշվի Օպերատորի կողմից կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները.
3) Հաշվի Օպերատորի կանոններով սահմանված (առկայության դեպքում) այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

609. Հաշվի Օպերատորի կողմից փաստաթղթերը ուսումնասիրվում են ներկայացման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

610. Ուսումնասիրությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի Օպերատորի միջնորդությամբ Թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքվում է ծառայության մատուցման պայմանագիր, որին կցվում է Հաշվի Օպերատորի կողմից կազմված ամփոփաթերթը՝ վավերացված Թողարկողի և Հաշվի Օպերատորի կողմից: Ամփոփաթերթը ներառում է տեղեկություններ տվյալ արժեթղթով հավաստված իրավունքի սահմանափակման/նախապատվության իրավունքի պահպանման՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կիրառվելիք հսկողական մեխանիզմների վերաբերյալ, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և Կանոնների 608. կետի 2) ենթակետում նշված փաստաթղթի դրույթները:

611. Պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը համարվում է ծառայության մատուցման սկիզբ (եթե պայմանագրով կամ ամփոփաթերթով այլ ժամկետ սահմանված չէ), երբ էլ Համակարգում կատարվում է համապատասխան գրառում սահմանափակման վերաբերյալ:

612. Յուրաքանչյուր անգամ, երբ Հաշվի Օպերատորին են դիմում գրանցելու գործառնություն, որի նկատմամբ Համակարգում առկա է համապատասխան գրառում սույն բաժնով սահմանված սահմանափակման մասին և առկա են տվյալ գործառնության մերժման հիմքեր՝ համաձայն ամփոփաթերթի, ապա Հաշվի Օպերատորը մերժում է տվյալ գործառնության գրանցումը և գրավոր ներկայացնում գործառնության մերժման պատճառները կամ պահանջում լրացուցիչ փաստաթղթեր, որի մասին դրույթներ սահմանված են ամփոփաթերթում, որոնք անհրաժեշտ են սահմանված սահմանափակման/նախապատվության իրավունքի պահպանման նկատմամբ լիարժեք հսկողություն իրականացնելու նկատմամբ:

### ԲԱԺԻՆ 9. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ (ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ) ԵՎ ԳՐԱՎԻ ՀԻՄՔՈՎ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

613. Թողարկողին արժեթղթերի շարժի մասին (արժեթղթերի փոխանցման հանձնարարականների) եվ գրավի հիմքով արգելադրման վերաբերյալ ծանուցման ծառայությունից օգտվելու համար Թողարկողը Հաշվի Օպերատորին է ներկայացնում դիմում՝ նշելով սույն բաժնով սահմանված ծառայությունից օգտվելու իր ցանկության մասին: Դիմումի մեջ ներառվում է նաև այն արժեթղթերի ԱՄՏԾ-ը կամ ԱՆԾ-ը, որոնց համար պետք է մատուցվի ծառայությունը:
614. Հաշվի Օպերատորի կողմից դիմումի ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև Հաշվի Օպերատորի միջնորդությամբ կնքվում է սույն բաժնով սահմանված ծառայության մատուցման պայմանագիր:
615. Սույն բաժնով սահմանված ծառայության մատուցման պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը համարվում է ծառայության մատուցման սկիզբ, որից էլ սկսած Հաշվի Օպերատորը պարտավորվում է Համակարգում Թողարկողի արժեթղթերի շարժով և գրավի հիմքով արգելադրմամբ պայմանավորված գործառնության գրանցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցել Թողարկողին՝ պայմանագրով սահմանված կարգով:

### ԲԱԺԻՆ 10. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

616. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի առանց Հաշվի օպերատորի միջնորդության՝ ուղղակիորեն տեղեկություններ տրամադրել հետևյալ դեպքերում.
1) Համակարգի անդամների կողմից թղթային եղանակով կատարվող հարցումների դեպքում, այդ թվում՝ արտաքին աուդիտ իրականացնող անձանց տրամադրելու նպատակով.
2) Այն անձանց կողմից կատարվող հարցումների դեպքում, որոնք նախկինում հանդիսացել են Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդ կամ ցանկանում են տեղեկանք ստանալ Կենտրոնական դեպոզիտարիայում իրենց անվամբ գրանցված արժեթղթեր չունենալու վերաբերյալ.
3) Պետական մարմիններին և սնանկության կառավարիչներին՝ վերջիններիս իրավասությունների շրջանակում կատարված հարցումների մասով:
4) Օրենքով, նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից ուղղակիորեն կնքված պայմանագրերով նախատեսված այլ դեպքերում:
617. Կենտրոնական դեպոզիտարիան 616. կետում սահմանված հարցումներին պատասխանում է հարցումը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով այլ ժամկետներ սահմանված չեն:

## ՄԱՍ IV. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԲԱԺԻՆ 11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

## Գլուխ 67. Կենտրոնական Դեպոզիտարիայի և/կամ Համակարգի անդամի գործողությունների վերաբերյալ բողոքների ներկայացման իրավունք ունեցող անձինք

618.Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Համակարգի Անդամի գործողությունների վերաբերյալ բողոքների ներկայացման իրավունք ունեն Թողարկողները և/կամ Հաշվետերերը՝ իրենց խախտված իրավունքների մասով:

## Գլուխ 68. Արժեթղթերի հաշվարկային և հաշվառման միասնական համակարգի մասնակիցների գործողությունների վերաբերյալ բողոք ներկայացնելու կարգը

619. Թողարկողը և/կամ Հաշվետերը, ում կարծիքով Համակարգի Անդամի կողմից խախտվել է իր իրավունքը, իրավունք ունի խախտման վերաբերյալ բողոք ներկայացնել Կենտրոնական դեպոզիտարիային՝ խախտման տեղի ունենալու կամ խախտման մասին իրեն հայտնի դառնալու պահից երեք ամսվա ընթացքում:
620. Բողոքը ներկայացվում է գրավոր՝ հստակ հիմնավորելով դրանում նշված փաստերը և կցելով համապատասխան գրավոր ապացույցներ:

## Գլուխ 69. Կենտրոնական Դեպոզիտարիայի գործողությունների վերաբերյալ բողոքների քննությունը

621.Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կանոններով նախատեսված գործողությունների, վերաբերյալ ստացված բողոքը Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի (այսուհետ՝ Տնօրեն) կողմից մակագրվում է Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան աշխատակցին (այսուհետ՝ Պատասխանատու աշխատակից), որը պարտավոր է հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել բողոքում ներկայացված պահանջը և Կենտրոնական դեպոզիտարիայի Տնօրենին ներկայացնել պահանջի բավարարման, մասնակի բավարարման կամ մերժման առաջարկություն՝ համապատասխան հիմնավորմամբ:
622. Պահանջի ուսումնասիրման համար բողոք ներկայացրած անձից լրացուցիչ նյութեր պահանջվելու դեպքում 621. կետով նախատեսված ժամկետը երկարացվում է ևս երկու աշխատանքային օրով:
623. Այն դեպքում, եթե բողոք ներկայացրած անձը հրաժարվում է բողոքի հիմնավորվածությունը ապացուցող լրացուցիչ փաստաթղթեր կամ նյութեր տրամադրել, ապա Պատասխանատու աշխատակիցը առաջարկությունը կազմում է նախապես ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ այդ մասին կատարելով համապատասխան նշում:
624. Բողոք ներկայացրած անձի կողմից թերի ներկայացված ապացույցների արդյունքում կայացված որոշման հիմնավորվածության պատասխանատվությունը կրում է այդ անձը:
625. Պատասխանատու աշխատակցի պահանջի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան ստորաբաժանումները պարտավոր են մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս ներկայացնել բողոքի քննարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր:
626. Պատասխանատու աշխատակցի կողմից ներկայացված առաջարկի կամ պատասխանի հիման վրա Տնօրենը կայացնում է վերջնական որոշում, որի կապակցությամբ պատրաստված համապատասխան գրությունն ուղարկվում է բողոք ներկայացրած անձին:
627. Բողոք ներկայացրած անձը ամեն դեպքում իրավունք ունի Կենտրոնական դեպոզիտարիայի գործողությունները, ինչպես նաև իր բողոքի կապակցությամբ ստացված պատասխանը բողոքարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

### Գլուխ 70. Համակարգի Անդամի գործողությունների վերաբերյալ բողոքների քննությունը Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից

628. Կենտրոնական դեպոզիտարիան՝ ստանալով բողոք Համակարգի Անդամի գործողությունների վերաբերյալ, պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի Անդամից պահանջել պարզաբանում ստացված բողոքի կապակցությամբ:
629. Համակարգի Անդամը, ստանալով Կենտրոնական դեպոզիտարիայի պարզաբանումներ ներկայացնելու պահանջը, պարտավոր են երեք աշխատանքային օրվա ընթացքում հիմնավոր պատասխան տալ բողոքի կապակցությամբ՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր (առկայության դեպքում):
630. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի անհրաժեշտության դեպքում Համակարգի Անդամի մոտ կազմակերպել արտահերթ ստուգում՝ ստացված բողոքում նշված փաստերի ստուգման համար: Սույն կետում նշված ստուգումը իրականացվում է Կանոնների 83. կետում նշված աշխատանքային խմբի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի ստուգում կազմակերպելու հրամանում նշված պայմաններին համապատասխան:
631. Ստուգման կամ բողոքի քննության արդյունքում խախտում հայտնաբերելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի.

1) անձամբ ուղղել կատարված խախտումը.
2) պահանջելու խախտում թույլ տված անձից Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից նշված ժամկետներում ուղղել թույլ տրված խախտումը.
3) սույն կետի 1) կամ 2) ենթակետերի կիրառման հետ միաժամանակ խախտում թույլ տված անձի նկատմամբ կիրառել Կանոններով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

# ՄԱՍ V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԲԱԺԻՆ 12. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

632. Կանոնները հաստատվում են Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ Կենտրոնական բանկում գրանցումից հետո՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
633. Կանոնների ուժի մեջ մտնելու պահից Համակարգի Անդամները պարտավոր են երեք ամսվա ընթացքում Կանոններով սահմանված ծառայությունների միջնորդավորված մատուցումը կարգավորող իրենց ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Կանոններին և ներկայացնել Կենտրոնական դեպոզիտարիային:
634. Կանոնների ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնական Դեպոզիտարիայի և Թողարկողների միջև կնքված արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագրերը կպահպանեն իրենց ուժը, սակայն բոլոր Թողարկողները, ում արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարվում է Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից, որոնք կդիմեն Կենտրոնական Դեպոզիտարիային ծառայություն ստանալու համար պարտավոր են Հաշվի Օպերատորների միջոցով Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ վերակնքել Ռեեստրի վարման պայմանագիրը:
635. Կանոնների 206.1. կետի 2) ենթակետում նշված պայմանը գործում է միայն այն անձանց համար, ովքեր ներդրում են կատարել տվյալ թողարկողի կանոնադրական կապիտալում մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը:

Հավելված 1.

**Արժեթղթերի հաշիվներին անհատական տարբերակիչ համարներ շնորհելու կարգը**

| N | Արժեթղթի հաշվի տեսակը | Նկարագիրը | Արժեթղթի հաշիվը բնութագրող նիշը |
|---|---|---|---|
| 1 | Սեփական արժեթղթերի հաշիվ | Սեփական արժեթղթերի հաշիվը բացվում է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու նպատակով | 0 |
| 2 | Անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ | Արժեթղթերի հաշիվը բացվում է ՀՀ ռեզիդենտ պահառուների անունով այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար | 1 |
| 3 | Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ | Արժեթղթերի հաշիվը բացվում է օտարերկրյա պահառուների անունով այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար | 2 |
| 4 | Տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվ | Արժեթղթերի հաշիվ, որտեղ հաշվառվում են թողարկված և դեռևս չտեղաբաշխված արժեթղթերը: | 3 |
| 5 | Թողարկողի արժեթղթերի հաշիվ | Արժեթղթերի հաշիվը բացվում է թողարկողի տիրապետման ներքո գտնվող թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հաշվառման համար | 4 |
| 6 | Բաժնային սեփականության արժեթղթերի հաշիվ | Ընդհանուր սեփականության հաշիվ է, որտեղ հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք սեփականության իրավունքով պատկանում են մեկից ավելի անձանց՝ սահմանված բաժնային համամասնության սկզբունքով | 5 |
| 7 | Համատեղ սեփականության արժեթղթերի հաշիվ | Ընդհանուր սեփականության հաշիվ, որում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք սեփականության իրավունքով պատկանում են մեկից ավելի անձանց հավասարության սկզբունքով | 6 |

1. Արժեթղթերի յուրաքանչյուր հաշվին Հաշվի Օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրվում է անհատական տարբերակիչ համար:
2. Արժեթղթերի հաշվին տարբերակիչ համարի շնորհումը իրականացվում է՝ ըստ հետևյալ

սկզբունքների.

1) Հաշվի Օպերատորի կողմից արժեթղթերի հաշվին շնորհվող համարը պետք է բաղկացած լինի 13 նիշից.

- Առաջին նիշը սահմանվում է 7.
- Հաջորդ 3 նիշերը նկարագրում են Հաշվի Օպերատորին.
- 5-րդ նիշը սահմանում է արժեթղթերի հաշվի տեսակը ըստ վերոնշյալ աղյուսակում նշված սահմանումների.
- Հաջորդ 7 նիշերը սահմանվում են ավտոմատ համակարգի միջոցով Հաշվի Օպերատորի կողմից բացված յուրաքանչյուր հաշվում՝ ըստ հերթականության.
- 13-րդ նիշը դա ստուգիչ թիվն է, որը հաշվվում է հավելված 1-ում բերված մեթոդի համաձայն:

3. Արժեթղթերի հաշվի համարի 13-րդ՝ ստուգիչ նիշի հաշվարկման մեթոդաբանություն

- Քայլ 1: Տարբերակիչ համարի յուրաքանչյուր նիշ փոխարինվում է ներքոնշյալ աղյուսակում ներառված համապատասխան թվերով:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 0=0 | 6=6 | C=12 | I=18 | O=24 | U=30 |
| 1=1 | 7=7 | D=13 | J=19 | P=25 | V=31 |
| 2=2 | 8=8 | E=14 | K=20 | Q=26 | W=32 |
| 3=3 | 9=9 | F=15 | L=21 | R=27 | X=33 |
| 4=4 | A=10 | G=16 | M=22 | S=28 | Y=34 |
| 5=5 | B=11 | H=17 | N=23 | T=29 | Z=35 |

Ստացված շարքի երկնիշ թվերի տասնավորներ և միավորներ ցույց տվող թվերը դիտվում են որպես շարքի առանձին անդամներ:

Քայլ 2: Յուրաքանչյուր թիվը բազմապատկվում է համապատասխան գործակցով: Շարքի կենտ դիրքերում գտնվող թվերի համար գործակիցը 2 է, զույգ դիրքերում գտնվող թվերի համար՝ 1: Շարքում նիշերի դիրքերի հաշվառումը կատարվում է աջից ձախ:

Քայլ 3: Նախորդ քայլում ստացված շարքի բոլոր թվերը գումարվում են:

Շարքի երկնիշ թվերի տասնավորներ և միավորներ ցույց տվող թվերը դիտվում են, որպես շարքի առանձին անդամներ:

Քայլ 4: Եթե հանրագումարի արդյունքում ստացված թիվը բազմապատիկ է տասին, ապա ստուգիչ թիվը «0» է: Այլապես, ստուգիչ թիվը հաշվարկվում է, երրորդ փուլում ստացված թիվը հանելով այդ թվից մեծ և տասին բազմապատիկ թվերից ամենափոքր թվից:

**Հավելված 2.**

**Տեղեկություններ Համակարգի Անդամի վերաբերյալ**
(Լրացվում է Համակարգի Անդամի կողմից)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Լրիվ և կրճատ հայերեն անվանումները՝ հիմնադիր փաստաթղթերին համապատասխան (առկայության դեպքում՝ նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով) | | | | | |
| Գրանցման համարը, ամսաթիվը (օր/ամիս/տարի) և գրանցման երկիրը | | | | | |
| Փոստային հասցեն (գտնվելու վայրը) | | | | | |
| Հեռախոսը, ֆաքսը | | | | | |
| ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցե կամ այլ իրավասու էլեկտրոնային հասցե | | | | | |
| Ինտերնետային կայքի հասցե | | | | | |
| Հեռացված տերմինալի ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի և ինտերնետ ցանցի իրական IP հասցե | | | | | |
| Կոնտակտային անձի* ԱՀԱ-ն, պաշտոնը և կապի միջոցները | | | | | |
| Համակարգի Անդամին Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված առևտրային կոդը* | | | | | |
| | | | | | |

***Կոնտակտային անձը Համակարգի անդամի այն աշխատակիցն է, ում հետ Կենտրոնական դեպոզիտարիան կարող է կապ հաստատել տեխնիկական և/կամ ադմինիստրավորման խնդիրների դեպքում:**

**Լրացման ամսաթիվը ,______, ________________ 20___ թ. Կ.Տ.**

____________________________________________________________________________
***Համակարգի Անդամի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն և պաշտոնը*** ***ստորագրությունը***

**Հավելված 3.**

## ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՈԴՈՒԼԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱԿՏ

Սույն ակտով սահմանված հասկացություններն ունեն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված նշանակությունը:

Սույն ակտով «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն և ________________________ ընկերությունը (այսուհետ՝ Համակարգի Անդամ) հաստատում են, որ ______________թ.-ին Համակարգի Անդամի ______________ հասցեի տարածքում գտնվող համակարգչի մեջ տեղադրվեց Համակարգի ծրագրային մոդուլը:

Կողմերը հաստատում են, որ Ծրագրային մոդուլը համապատասխանում է Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված պահանջներին և պատրաստ է գործարկման:

Կենտրոնական դեպոզիտարիա　　　　　　Համակարգի Անդամ

Հավելված 4

## Հաշվետվություն
## ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների մասին

**Ստուգման ժամանակահատվածը**. (օր/ամիս/տարի) ------- --------------- ------- **մինչև** ------- --------------- -------
**Ստուգման իրականացման ժամանակահատվածը**. (օր/ամիս/տարի)----- --------- ------- **մինչև** ------- --------- -------
**Ստուգման մասնակցած ներքին աուդիտի անդամները** (անուն, ազգանուն)

1. --------------------------------------------------------------
2. --------------------------------------------------------------
3. --------------------------------------------------------------

**Ստուգման արդյունքները.**

**1. Համակարգի Անդամի կողմից ծառայությունները մատուցվել են ՀՀ օրենսդրությամբ և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով.**

այո ◻ ոչ ◻

**Եթե առկա են խախտում(ներ),ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,**---------------------------------------------------

**2. Համակարգի Անդամը իր հաճախորդին տեղեկացրել է ներդրողների պաշտպանության գործող մեխանիզմների մասին**

այո ◻ ոչ ◻

**Եթե առկա են խախտում(ներ),ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,**---------------------------------------------------

**3. Համակարգի Անդամը վարում է առանձնացված հաշվառում յուրաքանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների միջոցների համար.**

այո ◻ ոչ ◻

**Եթե առկա են խախտում(ներ),ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,**---------------------------------------------------

**4. Համակարգի Անդամի մոտ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի առաջին կետով սահմանված անվճարունակության հիմքեր**

առկա են ◻ առկա չեն ◻

**Եթե առկա են, ապա նշել հիմքերը, դրանց վերացման ուղղությամբ տարվող միջոցառումները**--------------------------

**5. Ներքին աուդիտի կողմից նախորդ ստուգման արդյունքում սույն հաշվետվությամբ նշված խախտման (խախտումների առկայության դեպքում) վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների նկարագրությունը և խախտման վերացման կամ դրա նվազեցման փաստի առկայությունը.**

__________________________________________________________
__________________________________________________________

«__________________________________ »
(Համակարգի անդամի անվանումը)
/__________________________/ /___________________/
Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար (Ա.Հ.Ա.) ստորագրություն

**Կ.Տ.**

Լրացման ամսաթիվ (օր/ամիս/տարի)

Հավելված 5.

**«______________________» __Ը անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ**

(Թողարկողի անվանումը)

**առ____________.**

(օր/ամիս/տարի)

| | |
|---|---|
| Արժեթղթերի ԱՄՏԾ կամ ԱՆԾ | |
| Արժեթղթերի թողարկված քանակը | |
| Արժեթղթերի տեղաբաշխված քանակը | |
| Արժեթղթերի անվանական արժեքը (նաև արժույթը) | |
| Տեղաբաշխված արժեթղթերի գումարային անվանական արժեքը | |
| Տեղաբաշխման գին | |
| Տեղաբաշխման հիմք | |

| h/h | Արժեթղթերի սեփականատիրոջ (անվանատիրոջ) ԱԱՀ կամ անվանում (իրավաբանական անձի դեպքում) | Նշում արժեթղթերի սեփականատեր, համասեփականատեր կամ անվանատեր հանդիսանալու մասին | Կենտրոնական դեպոզիտարիայում արժեթղթերի հաշվի համարը (առկայության դեպքում) | Ինքնության կամ պետ. գրանցման փաստաթղթի համարը | Տրման ամսաթիվը, պետ. գրանցման փաստաթղթի տրման ամսաթիվը | Արժեթղթերի սեփականատիրոջ ՀԾՀ կամ ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում), կամ համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը | Ծննդյան ամսաթիվը | Հասցե | Բանկային հաշվի համար (առկայության դեպքում) | Արժեթղթերի քանակը | Արժեթղթերի քանակը, որոնց նկատմամբ կիրառվել են սահմանափակումներ | Արժեթղթերի նկատմամբ սահմանափակումների բնույթը և հիմքը | Արժեթղթերի նկատմամբ սահմանափակումների կիրառման ժամկետը և պայմանները | Կոնտակտային տվյալներ (առկայության դեպքում)՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |

/________________________________/ Կ.Տ. /____________________/

Թողարկողի գործադիր մարմնի ղեկավար (ԱԱՀ) Ստորագրություն

**Հավելված 6.**

**ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական պահառուի կողմից պետական պարտատոմսերով գործառնությունների իրականացման կարգը**

1. ԳՊ-ի կողմից Համակարգում կարող են բացվել միայն ֆիզիկական անձ հաճախորդների սեփական հաշիվներ:
2. ԳՊ-ի կողմից սպասարկվող հաշիվներում պահառության ենթակա են միայն ՀՀ պետական պարտատոմսերը:
3. ԳՊ-ն հաճախորդների հաշիվներով կատարում է արժեթղթերի փոխանցման, տեղաբաշխման, հետգնման և մարման գործառնություններ:
4. Խնայողական արժեկտրոնային պարտատոմսերը փոխանցման ենթակա են միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:
5. ՀՀ Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում տեղաբաշխման ենթակա պարտատոմսին ԱՄՏԾ-ի շնորհման հայտը:
6. Կենտրոնական դեպոզիտարիան ԱՄՏԾ-ի շնորհման հայտի հիման վրա համակարգում մուտքագրում է պարտատոմսի վերաբերյալ տվյալները:
7. ԳՊ-ն մինչև պետական պարտատոմսերի տեղաբաշխումը Համակարգում մուտքագրում է տեղաբաշխվող պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման ժամկետների, ինչպես նաև պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկություններ:
8. ԳՊ-ի միջոցով պարտատոմս ձեռք բերել ցանկացող ֆիզիկական անձինք պարտատոմսերի ձեռքբերման համար ԳՊ-ի հետ պետք է կնքեն պետական պարտատոմսերով գործառնությունների սպասարկման պայմանագիր, որի հիման վրա ԳՊ-ն նրանց համար բացում է արժեթղթերի հաշիվ:
9. Հաշվետիրոջ կողմից պետական պարտատոմսերի ձեռքբերման համար համապատասխան հայտի ներկայացումից և վճարում կատարելուց հետո ԳՊ-ն Համակարգում մուտքագրում է առաքում՝ համաձայնությամբ (FoP) հանձնարարական՝ որպես ստացող կողմ նշելով հաճախորդի հաշվեհամարը:
10. Առաքում՝ համաձայնությամբ հանձնարարականի վերջնահաշվարկի օրը կենտրոնական բանկից ստացված՝ պետական պարտատոմսերի փոխանցման հաստատման հիման վրա Համակարգում իրականացվում է մուտքագրված FoP հանձնարարականների կատարում, որի արդյունքում հաճախորդների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերը Ֆինանսների նախարարության՝ Համակարգում բացված Տեղաբաշխվող արժեթղթերի հաշվից փոխանցվում են ԳՊ-ի կողմից սպասարկվող Հաշվետերերի սեփական հաշիվներին:
11. Պարտատոմսերի հետգնման համար Հաշվետերը ԳՊ-ին է ներկայացնում պարտատոմսերի հետգնման հայտ, որից հետո ԳՊ-ն Համակարգ է մուտքագրում առաքում՝ համաձայնությամբ (FoP) հանձնարարական՝ որպես ստացող կողմ նշելով ՀՀ Ֆինանսների նախարարության Թողարկողի արժեթղթերի հաշիվը:
12. Հետգնման վերջնահաշվարկի օրը ՀՀ կենտրոնական բանկից ստացված՝ պետական պարտատոմսերի փոխանցման հաստատման հիման վրա Համակարգում իրականացվում է մուտքագրված հետգնման FoP հանձնարարականների կատարում, որի արդյունքում հետգնման ենթակա պետական պարտատոմսերը ԳՊ-ի կողմից սպասարկվող Հաշվետերերի սեփական հաշիվներից փոխանցվում են ՀՀ Ֆինանսների նախարարության՝ Համակարգում բացված Թողարկողի արժեթղթերի հաշվին:
13. Պետական պարտատոմսերի հետգնման դիմաց վճարվող, ինչպես նաև խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի հետ կապված արժեկտրոնների գումարը ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ Ֆինանսների նախարարության հանձնարարականի հիման վրա մուտքագրում է Առևտրային հաշվին և միաժամանակ այդ մասին հաղորդագրության միջոցով տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային:
14. Կենտրոնական դեպոզիտարիան, պետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված գումարների պատկանելիության վերաբերյալ Համակարգում ԳՊ-ի կողմից մուտքագրված տվյալների հիման վրա նույն աշխատանքային օրվա ընթացքում կազմում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում Հաշվետերերի բանկային հաշիվներին համապատասխան դրամական միջոցների փոխանցման հանձնարարականներ: